

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
ПРАВОВЕДЕНИЕ
BULLETIN OF YEREVAN UNIVERSITY
JURISPRUDENCE

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ
SOCIAL SCIENCES

№ 1 (16)

ԵՐԵՎԱՆ - 2015

«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
«БАНБЕР ЕРЕВАНИ АМАЛСАРАНИ. ПРАВОВЕДЕНИЕ»
«BANBER YEREVANI HAMALSARANI. JURISPRUDENCE»

Գլխավոր խմբագիր՝ Միրզոյան Հ. Ղ.

Խմբագրական խորհուրդ.

Անտոնյան Յու. Մ. (*Մոսկվա*), Ավետիսյան Լ. Վ. (*գլխ. խմբագրի տեղակալ*),
Գարուգյան Ա. Հ. (*պատասխ. խմբագիր*), Գևորգյան Վ. Ա., Գոնչար Ն. Ա. (*գլխ.
խմբագրի տեղակալ*), Խարրինա Տ. Յա. (*Մոսկվա*), Կուրի Հելմուտ (*Ֆրայբուրգ*),
Հարությունյան Գ. Գ., Հայկյանց Ա. Մ., Հովակիմյան Ա. Է. (*պատասխ. քարտու-
ղար*), Ղազինյան Գ. Ս., Մեղրյան Ս. Գ., Յակովլև Վ. Ֆ. (*Մոսկվա*), Միմոնյան Ա. Հ.

Главный редактор: Мирзоян Г. К.

Редакционная коллегия:

Аветисян Л. В. (*зам. главного редактора*), Айкянц А. М., Антонян Ю. М. (*Москва*),
Арутюнян Г. Г., Габузян А. А. (*ответ. редактор*), Геворкян К. А., Гончар Н. А.
(*зам. главного редактора*), Дюран Бернард (*Монпелье*), Казинян Г. С., Кури Хель-
мут (*Фрайбург*), Мегрян С. Г., Овакимян А. Э. (*ответ. секретарь*), Симонян А. Г.,
Яковлев В. Ф. (*Москва*)

Editor-in-chief: Mirzoyan H. Gh.

Editorial Board:

Antonyan Yu. M. (*Moscow*), Avetisyan L. V. (*Deputy editor-in-chief*), Duran
Bernard (*Montpellier*), Gabuzyan A. H. (*Managing Editor*), Gevorgyan K. A.,
Ghazinyan G. S., Gonchar N. A. (*Deputy editor-in-chief*), Harutyunyan G. G.,
Haykyants A. M., Hovakimyan A. E. (*Executive Secretary*), Kury Helmut
(*Freiburg*), Meghryan S.G., Simonyan A. H., Yakovlev V. F. (*Moscow*)

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՍՈՑԻՈՆՈՐՄԱՏԻՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՕՐԻՆԱԶՍՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (մ. թ. ա. III-II հազարամյակ)

ԱՐԹՈՒՐ ՎԱՂԱՐՇՅԱՆ

Հայ իրավունքի առաջացման, ձևավորման և զարգացման պատմությանը վերաբերող հետազոտությունները Հայաստանում աչքի են ընկնում երկու առանձնահատկությամբ: Առաջին՝ Հայաստանի հնագույն շրջանի, ընդ որում՝ ոչ թե սոցիոնորմատիվ կարգավորման համակարգի, այլ միայն իրավունքի հետազոտություններն իրականացվել են հիմնականում ընդհանուր պատմագրության շրջանակներում և այն էլ կցկտուր, դրվագային: Երկրորդ՝ իրավական պատմության հետազոտման մեթոդաբանությունը պատմաբանները և նույնիսկ իրավագետները կառուցել են պետականական-լեգիստական մոտեցման վրա, ինչի հետևանքով հեղինակներից ոմանք նույնիսկ փնտրում են ուրարտական (արարատյան) դատաստանագիրքը¹:

Այս պատճառով հնագույն շրջանում հայ հասարակության սոցիոնորմատիվ կարգավորման համակարգի (ներառյալ իրավունքի) առաջացման և զարգացման պատմությունը նոր գիտամեթոդաբանական մոտեցումների հիման վրա վերաիմաստավորման կարիք ունի: Այդ մեթոդը չի կարող լինել ոչ արդեն հնացած պետականական (էտատիստական) մոտեցումը՝ կառուցված իրեն համապատասխանող օրենքական (լեգիստական) իրավահասկացողության վրա, ոչ էլ մարքսիստական սոցիոլոգիական պոզիտիվիզմը, որում իրավունքը ընկալվում էր որպես պետության միջոցով օրենքի աստիճանի բարձրացված տնտեսապես գերիշխող դասակարգի կամք: «Էտատիստական մոտեցման կողմնակիցների մեկնաբանմամբ իրավունքի պատմական ծագումը գիտակցականորեն կազմակերպված, սուբյեկտիվ գործընթաց է. իրավունքը չի ծագել հասարակական կառույցներից ու հարաբերություններից, այն ստեղծվել, կառուցվել, ներմուծվել է պետության գերիշխող վերնախավի կամային կարգով, որը շահագրգռված էր զանգվածների ճնշման, շահագործման և մանիպուլյացիայի մեջ: Պատմականորեն իրավունքը պարտադրվել է հասարակությանը պատերազմի, բռնության և հարկադիր խաղաղեցման միջոցով: Այս դասակարգային-մատերիալիստա-

¹ Տե՛ս **Հ. Կարազեռոյան**, Գիտողություններ բիսինական դատաստանագրքի կապակցությամբ, «Հանդես Ամսօրեայ», 2002, № 1-12, էջ 338-342:

կան հիմնադրույթից բխում է երկու եզրակացություն՝ պետությունը պատմականորեն և տրամաբանորեն առաջնային է իրավունքից: Վերջինը պետական քաղաքականության իրականացման ձև է: Հետևաբար իրավունքը պետության ուժային գործիքն է, այն չի կարող գոյատևել, եթե հենված չէ բռնության վրա»²: Իրավունքի պատմության հետազոտման նկատմամբ այսպիսի մեթոդաբանության կիրառումը հանգեցնում է այն թյուր եզրակացության, որ, իբր, Հին Հայաստանում կային դատաստանագրքեր, սակայն դրանք մեզ չեն հասել:

Իրավունքի ձևավորման ու զարգացման պատմության հետազոտությունը պետք է կառուցել հակառակ մոտեցմամբ, որովհետև պետություն և իրավունք երկմիասնության մեջ առաջինը ոչ թե պետությունն է, այլ իրավունքը. իրավունքը պոլիտոգենեզի պատճառներից մեկն է, այն խթանող էական գործոն: Հետևաբար, ինչպես աշխարհի այլ ժողովուրդների, այնպես էլ Հայաստանի վաղնջական շրջանի սոցիոնորմատիվ կարգավորման համակարգի պատմությունը հետազոտելիս պետք է ելնել հետևյալ օրինաչափություններից:

1. Նախնադարյան համայնական կարգերին բնորոշ էր միասնական չտարբերակված սոցիոնորմատիվային կարգավորման համակարգը: Նախնադարյան համայնքի անդամների բնական-բնագոյային կոլեկտիվիստական հասարակական կապերը և մարդկային վարքագծի միօրինակությունը հաստատվում էին նորմերի միասնական համակարգի միջոցով, որը կոչվում էր նախնադարյան սովորույթ: Այդ միասնական կարգավորիչն աչքի էր ընկնում սինկրետիզմով (չտարբերակված մոնոնորմեր) և սրբացված հեղինակությամբ: Սոցիալական այդ նորմերն իրենց բովանդակությամբ բավական մանրամասնեցված էին և կատարում էին նորմատիվ կարգավորման բոլոր գործառնությունները³:

2. Հասարակության զարգացման գործընթացում տնտեսական, սոցիալ-դասակարգային, մարդու անհատականացման և արտաքին պաշտպանական օրինաչափությունների գործողության շնորհիվ նախնադարյան միասնական նորմատիվ կարգավորումը ենթարկվեց քննադատական և տարբերակված վերաբերմունքի⁴: Այդ պատճառով տեղի ունեցավ միասնական կարգավորման տրոհում, ճյուղավորում: Նախնադարյան սինկրետիկ սովորույթի հիմքի վրա աճեցին բարոյակա-

² «Проблемы общей теории права и государства». Под общей редакцией В. С. Нерсесянца. М., 1999, с. 88.

³ Հասարակական կյանքում սոցիալական կարգավորիչները (իրավունքը, բարոյականությունը, սովորույթը և այլն) կատարում են կարևոր և նշանակալի գործառնություններ: Դրանք, բացի կարգավորիչ և պահպանական գործառնություններից, ունեն նաև գնահատողական (օրինակ՝ բարոյական նորմերը չափանիշ են այս կամ այն գործողությունը գնահատելու, արժևորելու և բարոյականն ու անբարոյականը գատելու համար), ինչպես նաև փոխանցող, դաստիարակող և այլ գործառնություններ (տե՛ս **Ա. Գ. Վաղարշյան**, Պետության և իրավունքի տեսություն – 2: Դասախոսություն, Եր., 2011, էջ 268-269):

⁴ Տե՛ս **Ա. Գ. Վաղարշյան**, Պետության և իրավունքի տեսություն – 1: Դասախոսություն, Եր., 2013, էջ 44-47:

նությունը, իրավունքը, կրոնական, քաղաքական և այլ նորմերը, որոնք արդեն ինքնուրույն սոցիալական կարգավորիչներ են:

3. Իրավունքի պատմությունը սկսվում է սովորույթից: Իրավական դարձած հնագույն սովորույթը հին իրավունքի միակ և համընդհանուր ձևն է: Հետևաբար իրավական հին համակարգերը սովորույթային իրավական համակարգեր էին, որոնցում կարևոր դեր էին խաղում կրոնականացված կարգադրագրերը՝ տաբուները, ուխտախոստումները, երդումը, անեծքը և այլն:

4. Իրավունքի պատմությունը համաշխարհային մասշտաբով անցել է երկու հիմնական փուլ՝ սովորույթային իրավունքի և քաղաքականացված օրենսդրական իրավունքի: Առաջին փուլը, ըստ իրավական ձևի առանձնահատկության, իր հերթին տրոհվում է երկու ենթափուլի՝ բանավոր և գրավոր իրավական սովորույթներով իրավական համակարգեր: Ամեն մի փուլում և ենթափուլում պետությունն ունի տարբեր դերակատարություն: Իրավունքի զարգացման երկրորդ փուլում առաջ է գալիս իրավունքի նոր ձև (աղբյուր)՝ օրենքը՝ որպես քաղաքականացված, պաշտոնապես ամրագրված նորմատիվ իրավական ակտ: Գրավոր օրենքը պետության իրավաստեղծագործության արդյունքն է, որում էական դեր է խաղում նպատակահարմարությունը: «Նորը, որ բերեց պետությունը հասարակության նորմատիվ կարգավորիչ ուղրտում, ոչ թե իրավունքն է՝ որպես հասարակական կարգավորիչ (այն արդեն հայտնի էր իրավական սովորույթի ձևով), այլ իրավական նոր ձևը՝ օրենքը, օրենսդրական ակտը, դատաստանագիրքը, օրենսգիրքը»⁵: Օրենքի՝ որպես պետության հեղինակած իրավունքի ձևի առաջացմամբ և համընդգրկուն տարածմամբ ավարտվում է սովորույթային իրավունքի գերակայության դարաշրջանը, չնայած սովորույթային իրավունքը մարդկության պատմության ամբողջ ընթացքում շարունակում էր անընդհատ գոյատևել և գործում է նաև մեր օրերում:

5. Իրավունքի առաջացումը և իրավական ձևերի զարգացումը երկարատև գործընթաց է, որի սկիզբն ազդարարում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են մասնավոր սեփականությունը, ժառանգումը, փոխանակությունը, տնտեսական շրջանառությունը: Սակայն դրանում էական դեր են խաղում նաև կրոնական, քաղաքական (պետության առաջացման ձևը և պետական իշխանության հզորությունը), էթնիկ-մշակութային և այլ գործոններ: Հետևաբար համաշխարհային մասշտաբով իրավունքի պատմությունը տարածամկետ գործընթաց է: Մինևույն պատմական դարաշրջանում ժողովուրդները գտնվում են իրավական զարգացման տարբեր փուլերում՝ պայմանավորված իրենց պատմական ճանապարհի յուրահատկությամբ: «Իրավունքի պատմությունը միշտ կրկնվում է, և այն փուլերը, որոնք անցել է Արևելքը շատ հազա-

⁵ «Проблемы общей теории права и государства», с. 99.

րամյակներ առաջ, աշխարհի այլ մասերում հասել են ավելի ուշ և նույնիսկ մեր օրերում: Ենթադրվում է, օրինակ, որ Համմուրաբիի օրենսգիրքը (մ.թ.ա. 1914 թ.) ազդարարում է այն փուլը, որին Հոմեր հասել է մ.թ.ա. 196 թ., Անգլիան՝ 1250 թ., իսկ Աբիսսինիան միայն այսօր»⁶:

Այսպիսով, հայ իրավունքի պատմությունը չպետք է կապել իրավունքի գրավոր ձևերի առաջացման ժամանակի հետ, որովհետև մինչև այդ Հայկական լեռնաշխարհի ցեղային միություններում և նախապետություններում գործում էր սովորության իրավական համակարգը, որի համընդհանուր ձևը Հայկական լեռնաշխարհի ցեղերի սովորույթներն էին: Պայմանավորված աշխարհաքաղաքական, տնտեսական, էթնիկ կառուցվածքի առանձնահատկություններով՝ Հայկական բարձրավանդակում սրբացված սովորության իրավական համակարգը գոյատևեց բավականին երկար:

Սոցիոնորմատիվ կարգավորման համակարգը սերտորեն կապված է կարգավորվող հասարակության էթնիկ-մշակութային առանձնահատկությունների հետ: Եթե արդի դարաշրջանն աչքի է ընկնում պետական կառավարման և իրավական կարգավորման համակարգի (մոդելի) միասնականացմամբ, ապա Հին աշխարհում պետական կառավարման համակարգը և սոցիոնորմատիվ մշակույթն ունեին էթնիկ-քաղաքակրթական հատկանիշով պայմանավորված բազմազանություն: Սովորույթները սերտորեն կապված են կրող էթնոսի հետ, և դրանք միայն տվյալ էթնոսի սովորույթներն են: Այս հարցում մեթոդաբանական ճիշտ մոտեցում ունեն իրավունքի պատմական դպրոցի ներկայացուցիչները, ովքեր իրավունքը նմանեցնում են լեզվի հետ: Յուրաքանչյուր էթնոսի դարավոր զարգացումների արդյունքում ձևավորվում է նրա սոցիոնորմատիվ կարգավորման համակարգը, որի վաղնջական նորմատիվ ձևը նախնադարյան սովորույթն էր:

Հայկական լեռնաշխարհի հնագիտական տվյալները հետազոտողներին թույլ են տալիս մ.թ.ա. X-IX հազարամյակների սահմանագծից մինչև Վանի-Արարատի-Ուրարտուի թագավորության շրջանն ընկած ժամանակահատվածը բաժանել երեք խոշոր դարաշրջանների, որոնք միմյանցից առանձնանում են ինչպես պատմամշակութային միջավայրի առանձնահատկություններով, այնպես էլ հասարակական կեցության ողջ համակարգի արմատական փոփոխությունների մասին վկայող տվյալներով⁷:

Մ.թ.ա. X/IX հազարամյակից մինչև մ.թ.ա. IV հազարամյակի կեսերն ընկած ժամանակաշրջանը համարվում է «վաղ երկրագործական»

⁶ Diamond A. S., Primitive Law. p. 1.

⁷ Տե՛ս Պ. Ս. Ավետիսյան, Հայկական լեռնաշխարհը մ.թ.ա. XXIV-IX դարերում (սոցիալ-մշակութային ձևափոխումների դինամիկան ըստ հնագիտական տվյալների), Է.00.03-«Հնագիտություն» մասնագիտությամբ պատ. գիտ. դոկ. գիտ. աստիճանի հայցման գիտական զեկուցում, Եր., 2014, էջ 66-88:

անասնապահական հասարակությունների» կայացման փուլ: Հայկական լեռնաշխարհի սահմաններում քարտեզագրվող վաղ երկրագործական մշակույթներն իրարից տարբերվում են նախնիներից ժառանգած մշակութային ավանդույթներով: Լեռնաշխարհի տարբեր շրջաններում փաստագրվում են իրարից զգալիորեն տարբերվող համաժամանակյա հնագիտական մշակույթներ, որոնց բազմազանությունը ենթադրում է նաև Հայկական լեռնաշխարհի սոցիոնորմատիվ կարգավորման համակարգի տեղային տարբերություններ: Սակայն մ.թ.ա. IV հազարամյակի երկրորդ կեսից մինչև մ.թ.ա. III հազարամյակի վերջին քառորդն ընկած ժամանակահատվածում Հայկական լեռնաշխարհի զարգացման տարբեր մակարդակներ ունեցող վաղ երկրագործական հասարակությունների տարբերակված համաժամանակյա համապատկերը էականորեն փոխվում է, և Հայկական լեռնաշխարհի բնակչությունը «ներկայանում է զարգացման նույն մակարդակի վրա գտնվող, համասեռ մշակութային միջավայր կերտած հասարակությամբ»⁸:

Համասեռ մշակութային միջավայրի կերտումը առաջին հերթին պայմանավորված էր էթնիկ ծագումնաբանության նույն հիմքերով: Հավաքչության և որսորդ-քոչվորության շրջանում (մինչև մ.թ.ա. IV հազարամյակը)՝ ցեղերի անընդհատ ճյուղավորումների և շփումների հավաղեպության պայմաններում տեղի է ունեցել սոցիոնորմատիվ համակարգի տարբերակում (դիֆերենցացիա)՝ ցեղատարածքային սկզբունքով: Սակայն տնտեսական զարգացման պայմանները և հանրային կառավարման ինստիտուտների ձևավորումը հանգեցրին այն բանին, որ Հայկական լեռնաշխարհում ձևավորվեց համասեռ մշակութային միջավայր, այդ թվում՝ նաև սոցիոնորմատիվ մշակույթ, որում, սակայն, տարբերությունները դեռևս պահպանվում էին:

Այսպիսով՝ մ.թ.ա. III հազարամյակի վերջին քառորդից հասարակական զարգացումներում նկատվող փոփոխություններն ու տեղաշարժերը հաստատվում են վաղագույն պետական կազմավորումների մասին վկայող բազմաթիվ տվյալներով⁹: Հնամշակութային միջավայրի փոխակերպումը և հաջորդափոխության համապատկերը հնագետներին հիմք են տալիս եզրակացնելու, որ սկսած մ.թ.ա. III հազարամյակի վերջին քառորդից մինչև մ.թ.ա. I հազարամյակը հայկական վաղ պետական կազմավորումների սաղմնավորման և արմատավորման փուլն է¹⁰:

Վաղ պետական կազմավորումը ենթադրում է արդեն կայացած իրավական կարգավորում, որի համընդհանուր ձևն իրավական սովորույթն է: Ինչպիսին էին այդ սովորույթների բովանդակությունը և հայկական սովորութային իրավունքի հիմնական ինստիտուտները՝ մենք չենք կարող իմանալ, քանզի աղբյուրները գրեթե ոչինչ չեն փոխանցել

⁸ Նույն տեղում, էջ 66-67:

⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 67:

¹⁰ Տե՛ս նույն տեղը:

մեզ: Այնուամենայնիվ, պատմագրական նյութերից հնարավոր է քաղել որոշակի իրավական տեղեկույթ կամ պատմագրական փաստերին տալ իրավական մեկնաբանություն:

Մ.թ.ա. III հազարամյակի հայկական հնագույն պետականությունը Արատտան էր¹¹: Այդ շրջանի պատմության սկզբնաղբյուրների մեջ հայտնի է շումերական դյուցազնավեպը, որի վիպերգերից հինգը տեղեկություններ են պարունակում Արատտա երկրի և շումեր-արատտական հարաբերությունների մասին¹²: Այդ վիպերգերից առաջինում («Էնմեր-քարը և Արատտայի տիրակալը») Արատտային բազմիցս տրվում է «աստվածային/սուրբ օրենքների երկիր» պատվանուն-մակդիրը¹³:

«Սուրբ օրենքների երկիր» պատվանունը, դիցաբանական մեկնաբանությունից բացի, կարևոր նշանակություն ունի Արատտայի սոցիոնորմատիվ համակարգը բնութագրելու համար: Եթե Միջագետքում տնտեսական հարաբերությունների զարգացման ավելի բարձր մակարդակն ու դրան համապատասխան՝ մարդու անհատականացման ավելի բարձր աստիճանն արդեն խարխուլել էին սովորության պահպանողական սոցիոնորմատիվ համակարգը, ապա Արատտայում սովորությունները դեռ մնում էին սրբացված: Սովորության իրավունքի համակարգն այստեղ դեռ հիմնված էր սրբացված հեղինակության և ավանդապաշտության վրա, որոնք ապահովում էին սովորությունների կենսագործումը հասարակության գրեթե բոլոր անդամների կողմից: Հետևաբար թեոկրատական Արատտայում հասարակական նորմերի կենսագործման հիմնական մեթոդը կրոնական սոցիալիզացիայի միջոցով ձևավորված համոզմունքն էր և ոչ թե հարկադրանքը¹⁴:

Եթե մի կողմ թողնենք դիցաբանությունը և առասպելաբանությունը, ապա շումերական դյուցազնավեպի «Գիլգամեշն ու անմահության երկիրը» վիպերգն ունի բառացի հետևյալ բովանդակությունը. Գիլգամեշը՝ «Ուրուկի գերագույն քուրմը» (կամ՝ «Կուլաբայի գերագույն քուրմը»), նախելով իր քաղաքին, տեսնում է սոցիալական քառս՝ սպանություններ և մահ (գետում դիակներ են լողում): Նրա սիրտն «այրվում, ճզմվում է»: Գերագույն քուրմը՝ որպես կարգուկանոնի պատասխանատու, իրեն անուժ է զգում: Այդ վիճակից դուրս գալու ելքը նա գտնում է դեպի սուրբ օ-

¹¹ Արատտայի տեղորոշման և քաղաքական պատմության, հասարակական-տնտեսական կացության մասին մանրամասն տե՛ս **Ա. Ե. Մովսիսյան**, Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների), Եր., 2005, 176 էջ:

¹² Տե՛ս նույն տեղը:

¹³ Շումերերեն kur-me-sikil-la արտահայտությունը Ա. Մովսիսյանը թարգմանել է «աստվածային/սուրբ օրենքների երկիր»:

¹⁴ Իշխանությունն իր պատմական զարգացման ողջ ընթացքում օգտագործում է կառավարման երկու հիմնական եղանակ, մեթոդ՝ համոզում և հարկադրանք: Համոզումը մարդկանց կամքի և գիտակցության վրա գաղափարաբարոյական միջոցներով ակտիվ ներգործության ձևն է: Այս միջոցների շնորհիվ մարդու, մարդկանց խմբերի մեջ ձևավորվում են որոշակի հոգեբանական արժեքներ, և դրանով իսկ հասարակության շահերն ու իշխանության պահանջները վերածվում են անհատի ներքին հոգեբանական համոզմունքի (տե՛ս **Ա. Գ. Վաղարշյան**, Պետության և իրավունքի տեսություն-1, էջ 81-83):

րենքների երկիր արշավանքում, որը, կարծես վրեժխնդրություն էր հենց միայն այն բանի համար, որ այնտեղ օրենքները դեռ սուրբ են: Գիլգամեշի պատկերացմամբ՝ Խուվավային սպանելով նրա ուժը (ճառագայթները) և նրա երկրին բնորոշ օրենքների սրբությունը կանցնեն իրեն և իր երկրին: Այդ հզորության ճառագայթներից մեկն էլ հանում է «անեծքի քարին»: Ինչպես գիտենք, անեծքը՝ որպես առասպելաբանական երևույթ, էական դեր էր խաղում Հին Արևելքի սոցիոնորմատիվ կարգավորման համակարգում՝ որպես հանրությունը կազմակերպող և խախտումները կանխող միջոց: Դրանով է պայմանավորված անեծքի բանաձևերի առատությունն արևելյան բոլոր երկրների՝ մեզ հասած արձանագրություններում: Ամենայն հավանականությամբ՝ Գիլգամեշի քաղաքում կար անեծքի քար, որը «կորցրել էր իր հզորությունը», և անեծքը՝ որպես իրավաչափ վարքագծի ապահովման միջոց, չէր կատարում իր դերը: Այդ իսկ պատճառով շումերական Էնլիլ Աստվածը Խուվավայի երկրի «փայլի ճառագայթներից» մեկը տալիս է Ուրուկի «անեծքի քարին», որպեսզի վերականգնի նրա հզորությունը, ազդեցությունը:

Այսպիսով, Արատտան Հայկական լեռնաշխարհի առաջին վաղագույն պետական կազմակերպությունն է: Հայաստանն այս շրջանում առաջնորդությունից (չիֆոմից) անցում էր կատարել վաղ պետական զարգացման շրջանին, որի սոցիոնորմատիվ կարգավորման համակարգը թեոկրատական սովորույթային էր:

Հայկական բարձրավանդակի մ.թ.ա. III-II հազարամյակների պատմությունը մեզ հետաքրքրող տեսանկյունից վաղ պետական կազմավորումների հերթափոխում է: Քաղաքական անկայուն կացությանը հակառակ՝ այդ շրջանի հասարակություններին բնութագրական էր պահպանողական-կայուն սոցիոնորմատիվ կարգավորումը: «Հնագույն գրավոր աղբյուրները Հայաստանի համար օգտագործում են ԱՐԱՏՏԱ (մ.թ.ա. IV-III հազարամյակներ, շումերական դյուցազնավեպ), ԱՐԱՐԱԴ/ԱՐԱՐԱՏ, ՀԱՐՔ, ՀԱՅՔ, ԱՐՄԵՆԻԱ (մ.թ.ա. III հազարամյակի կես, Մ. Խոթենացի), ԱՐՄԵ(Ն), ՀԱՅ NA-A (մ.թ.ա. III հազարամյակի կես, Էբլայից հայտնաբերված գրավոր աղբյուրներ), ԱՐՄԱՆԻ (մ.թ.ա. III հազարամյակի վերջ, աքքադական գրավոր աղբյուրներ), ՀԱՅԱՍԱ ԱԶԶ, ԽՈՒՐՐԻ, ՄԻՏԱՆԻ, ՆԱՀԱՐԱԻՆԻ (մ.թ.ա. II հազարամյակի կես, խեթական, եգիպտական, խուրրիական գրավոր աղբյուրներ), ՆԱԻՐԻ, ՈՒՐԱՐՏՈՒ, ՍՈՒԲԱՐՏՈՒ (մ.թ.ա. II- I հազարամյակի սկիզբ, ասորական գրավոր աղբյուրներ), ԱՐԻՄ (մ.թ.ա. XII դար, «Իլիական»), այնուհետև՝ ԱՐՄԵՆԻԱ (մ.թ.ա. I հազարամյակի կես, հունական գրավոր աղբյուրներ), ԱՐՄԻՆԱ (հին պարսկերեն), ՈՒՐԱՇՏՈՒ (բաբելերեն), ՀԱՐՄԻՆՈՒՅԱ (էլամերեն) (մ.թ.ա. I հազարամյակի կես, Դարեհ I-ի բեհիսթունյան եռալեզու արձանագրություն), ԱՐԱՐԱՏ (մ.թ.ա. VII-VI դա-

րեր, Աստվածաշունչ) և այլն»¹⁵:

Անվանումների այս բազմազանությունը, որ երբեմն թյուրըմբռնումների և տարակուսանքների է հասցնում պատմագետներին, լրիվ բացատրելի է լեզվամշակութային և սոցիալ-քաղաքական կացության դիրքերից: Նախ՝ Հայոց աշխարհի ամբողջական կամ նրա առանձին ցեղային միությունների ու նախապետությունների «հնագույն անունների մեջ մեծ թիվ են կազմում «Ար»-ով սկսվող անունները. Արատտա, Արարատ, Արմանի, Ուրարտու (Արարարտ), Արմինա, Արմենիա և այլն: Հնագույն այս անունները կապված են Ար Աստծո անվան հետ, նորից փաստելով այն իրողությունը, որ Հայկական լեռնաշխարհն Արարիչ ԱՐ Աստծո պաշտամունքի հնագույն երկիրն է»¹⁶:

Եթե դա այդպես է, ապա թեոկրատական հասարակության մեջ նույն Աստծո պաշտամունքը վկայում է մշակութային միասնականություն՝ տեղական ցեղային տարբերություններով հանդերձ: Մշակութային միասնությունը հաստատվում է հնագիտական հետազոտությունների արդյունքներով: Թեոկրատական-պաշտամունքային հասարակության մեջ միաստվածությունը անպայմանորեն ենթադրում է նաև սոցիոնորմատիվ կարգավորման համակարգի միասնականություն՝ տեղական ճյուղավորվածությամբ հանդերձ:

Հայաստանի «երկրների» անվանումների բազմազանության հիմնական պատճառը պատմագրությունը բացատրում է մեր մասին հաղորդագրություն թողած օտարների լեզվահնչյունական առանձնահատկություններով, ինչպես նաև անվանումների լեզվական աղավաղումներով: Սակայն այդ բազմազանության հիմնական պատճառը Հայաստանի մ.թ.ա. VI-II հազարամյակի սոցիալ-քաղաքական կացությունն էր, այն է՝ վաղ պետություն, երբ խարխլվել էր նախնադարյան անմիջական կառավարման համակարգը, բայց չէր ձևավորվել հասուն ու կայուն պետություն: Վաղ պետության քաղաքական կացության հիմնական գիծն անկայունությունն է: Հետևաբար անընդհատ վերացող և վերաստեղծվող նոր քաղաքական ուխտերում ու դաշինքներում հաստատվում էր ինչ-որ մեկ արքայի կամ ցեղախմբի գերիշխանություն, որն ուներ իր ցեղային անվանումը:

Պատմական աղբյուրների միջոցով մեզ հասած տեղեկությունները հայկական ցեղային միությունների և վաղ պետությունների, դրանց քանակի և անվանումների վերաբերյալ ընդամենը կցկտուր տվյալներ են ընդհանուր պատկերի մասին: Երկու հազարամյակի ընթացքում Հայոց աշխարհում հաստատապես ձևավորվել և իրար հերթափոխել են շատ ավելի մեծ թվով վաղ պետական կազմավորումներ, սակայն դրանցից միայն նրանց վերաբերյալ տվյալներն են հասել մեզ, որոնք

¹⁵ **Ա. Տեղյան**, Հայաստանն արարչագործության և քաղաքակրթության բնօրրան, Եր., 2011, էջ 59:

¹⁶ Նույն տեղում:

շփվել են գիր ունեցող հարևան քաղաքակրթությունների հետ: Հետևաբար, Հայկական բարձրավանդակի քաղաքական պատմությունն այս շրջանում իրար հաջորդող վաղ պետությունների հերթափոխ է: Քաղաքական այս կացությունը հաղթահարվեց, և առաջին համահայկական պետությունը ձևավորվեց միայն մ.թ.ա. IX դարում:

Մ.թ.ա. III-II հազարամյակի իրար հերթափոխող վաղ պետական կազմավորումների քաղաքական անկայունությանը հակառակ՝ սոցիոնորմատիվ կարգավորման համակարգը համեմատաբար կայուն էր և պահպանողական: Կարգավորման այդ համակարգը, որն արդեն հավակնում էր լինել իրավական, սովորութային էր, իսկ նրա համընդհանուր կարգավորիչ ձևը՝ սրբացված և պահպանողական բնույթի կայուն սովորույթը: Միասնական լեզվամշակութային տարածքում այն դեռևս արդյունավետորեն կատարում էր իր դերը և համապատասխանում էր հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակին:

Այսպիսով, հայ իրավունքի պատմությունը չպետք է կապել իրավունքի գրավոր ձևերի առաջացման ժամանակի հետ: Մինչև այդ ձևերի առաջացումը Հայկական լեռնաշխարհի ցեղային միություններում և նախապետություններում գործում էր սովորութային իրավական համակարգը, որի համընդհանուր ձևը Հայկական լեռնաշխարհի ցեղերի սովորույթներն էին: Պայմանավորված աշխարհաքաղաքական, տնտեսական, էթնիկ կառուցվածքի առանձնահատկություններով՝ Հայկական բարձրավանդակում սակրալիզացված սովորութային իրավական համակարգը գոյատևեց բավականին երկար ժամանակ: Արատտան Հայկական լեռնաշխարհի առաջին վաղագույն պետական կազմակերպությունն է, որի սոցիոնորմատիվ կարգավորման համակարգը թեոկրատական սովորութային էր, իսկ դրա նորմատիվ ձևը՝ սրբացված սովորույթները: Հայկական բարձրավանդակի մ.թ.ա. III-II հազարամյակների քաղաքական պատմությունը վաղ պետական կազմավորումների հերթափոխում է: Քաղաքական անկայուն կացությանը հակառակ՝ այդ շրջանի հասարակություններին բնութագրական էր պահպանողական-կայուն սոցիոնորմատիվ կարգավորումը:

Բանալի բառեր – պոլիտոգենեզ, սրբացված սովորույթ, քաղաքականացված իրավունք, շումերական դիուցազնավեպ, «սուրբ օրենքներ», անեծքի քար, հատուն պետություն, թեոկրատական

АРТУР ВАГАРИШЯН – Закономерности образования и развития системы соционормативного регулирования в Древней Армении (III–II тыс. до н. э.). – Историю армянского права нельзя связывать со временем возникновения письменных правовых источников. Задолго до их создания в племенных союзах и протогосударствах Армянского нагорья действовали правовые системы, универсальной нормативной формой которых являлись племенные обычаи. Обусловленная политическими, экономическими и этнодемографическими особенностями Армении, сакрализованная обычно-правовая система существовала здесь веками. Первым протого-

сударством на Армянском нагорье являлась Аратта, где сложилась обычно-теократическая система соционормативной регуляции. Её нормативной формой были сакрализованные обычаи. Политическая история Армении III–II тысячелетий до н. э. представляет собой смену раннегосударственных организаций. Обществу этого периода, несмотря на политически нестабильное состояние, присуща консервативно-стабильное социальное регулирование.

Ключевые слова: *политогенез, сакрализованный обычай, политизированное право, шумерский эпос, “святые законы”, камень проклятия, зрелое государство, теократический*

ARTHUR VAGHARSHYAN – *The Formation and Development Regularities of the Socio-normative Regulatory System in Ancient Armenia (III-II millennium BC)*. – The History of the Armenian Law should not be linked to the period when the written forms of law first occurred. Before the emergence of those forms, the customary legal system was in force in the tribal unions and pro-states of the Armenian Highlands. Tribal customs were the general form of that customary system. Due to the geopolitical, economical, ethnic features of Armenian Plateau, the sacramental customary legal system existed long enough in Armenia. Aratta was the first pro-state in Armenian Highlands, the socio-normative regulatory system of which had a theocratic customary nature, while its normative form consisted of the sacred customs. The political history of the Armenian Highlands during III-II millennium BC can be represented as a shift of early state formations. Though the political situation was unstable, the conservative-stable socio-normative regulation was specific to the societies of this period.

Key Words: *politogenesis, a sancralized custom, politicized law, a Sumerian epic, “sacred/holy laws”, cursing stone, mature state, theocratic*

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱ

ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿԱՍ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՆՈՐՄԻ ԱԿՆՀԱՅՑ ԵՎ ԿՈՊԻՏ ԽԱԽՏՄԱՆ ՀԻՄՔՈՎ ԴԱՏԱՎՈՐԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

ԳԱԳԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ, ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Մարդու իրավունքների երաշխավորումը, ապահովումը և պաշտպանությունը ժողովրդավարական, իրավական պետության, քաղաքացիական հասարակության իրավաքաղաքական ու բարոյական առաջնահերթություններից են՝ սահմանադրական զարգացումների և պետական ու հանրային ինստիտուտների գործունեության առանցքը¹:

Մարդու իրավունքների պաշտպանության պետական մեխանիզմում առաջնային տեղ է զբաղեցնում անձի խախտված կամ վիճարկվող իրավունքների, ազատությունների, օրինական շահերի պաշտպանության ապահովման երաշխիքը հանդիսացող կառույցի՝ դատական իշխանության արդյունավետ գործունեությունը:

Անվիճելի իրողություն է, որ արդյունավետ և լիարժեք դատական պաշտպանություն հնարավոր է միայն դատական իշխանության իրական անկախության դեպքում:

Դատավորի անկախությունը, լինելով վերջինիս սահմանադրաիրավական կարգավիճակի բաղկացուցիչ տարր, կոչված է ապահովելու դատական իշխանության ինքնուրույնությունը. այն հանրային շահերի, այդ թվում՝ արդարադատության շահի պաշտպանության կարևորագույն նախապայման է²:

Սակայն անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ դատարանի անկախության սկզբունքի լիարժեք կենսագործման նպատակով կարևոր է այդ սկզբունքի իրականացման համար ազգային օրենսդրության մեջ սահմանել իրական երաշխիքներ: Հակառակ դեպքում դատարանի անկախության սկզբունքը կվերածվի ձևական իրողության և այդպես էլ կյանքի չի կոչվի³:

Դատավորների անկախությունը երաշխավորող հիմնարար դրույթ-

¹ Տե՛ս ՀՀ Նախագահի՝ 2012 թվականի հոկտեմբերի 29-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը հաստատելու մասին» ՆԿ-159-Ն կարգադրությունը:

² Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ5/0022/01/10 որոշումը, կետ 34:

³ Տե՛ս «Դատավորի ձեռնարկ», գիտագործնական վերլուծություն (հեղ. խումբ) Եր., 2010., էջ 22:

ներն իրենց ամրագրումն են ստացել ինչպես ՀՀ Սահմանադրությունում⁴ և ՀՀ օրենսդրական այլ ակտերում⁵, այնպես էլ միջազգային մի շարք փաստաթղթերում: Դրանց շարքից կարելի է հատկապես առանձնացնել «Դատավորների կարգավիճակի մասին» 1998 թվականի հուլիսի 10-ի եվրոպական խարտիան և եվրոպական խարտիայի պարզաբանման հուշագիրը, ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովի կողմից 1985 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 40/32 և 1985 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 40/46 բանաձևերով հաստատված «Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքները» և դրա հավելվածը՝ ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովի կողմից թիվ 2200A(XXI) բանաձևով հաստատված «Դատավորների վարքագծի բանգալորյան սկզբունքները», Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 1994 թվականի հոկտեմբերի 13-ի «Դատավորների անկախության, արդյունավետության ու դերի մասին» թիվ R(94)12 և 2010 թվականի նոյեմբերի 17-ի «Դատավորների անկախության, գործունեության արդյունավետության և պատասխանատվության մասին» թիվ CM/Rec(2010)12 հանձնարարականները, ԵԱՀԿ/ԺՄԻԳԻ և Դատական անկախության հետազոտությունների Մաքս Պլանք Միներվա խմբի՝ 2010 թվականի հունիսի 23-25-ի «Արևելյան Եվրոպայում, Հարավային Կովկասում, Կենտրոնական Ասիայում դատական անկախության վերաբերյալ կիևյան հանձնարարականները»:

Դատավորների անկախության վերաբերյալ իրավական դիրքորոշումներ են արտահայտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան)⁶ և ՀՀ վճռաբեկ դատարանը⁷: Այդ մասին կարծիք է ներկայացրել Եվրոպայի խորհրդի համակարգում գործող Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը⁸:

Վերոգրյալ իրավանորմերի, իրավական դիրքորոշումների և կարծիքների համակարգային վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգելու, որ դատավորի անկախությունը ցանկացած իրավական պետության գոյության կարևոր պայմաններից է և արդյունավետ արդարադատության հիմնական երաշխիքը, ինչը նշանակում է, որ ոչ ոք չի կարող միջամտել դատավորի գործունեությանը, ազդել նրա մտածողության ու նրա կայացրած որոշման վրա:

⁴ Տե՛ս ՀՀ Սահմանադրության 94 և 97 հոդվածների 1-ին պարբերությունները:

⁵ Տե՛ս ՀՀ դատական օրենսգրքի 11-րդ հոդվածը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 40 հոդվածը:

⁶ Տե՛ս, օրինակ, Եվրոպական դատարանի՝ **Քեմբլը և Ֆելն ընդդեմ Միացյալ Թագավորության** (Campbell and Fell v The United Kingdom) գործով 1984 թվականի հունիսի 28-ի վճիռը, գանգատներ, թիվ 7819/77, 7878/77, կետեր 76-82:

⁷ Տե՛ս, օրինակ, ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ5/0022/01/10 որոշումը:

⁸ Տե՛ս Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդ, կարծիք, թիվ 1(2001), 2001թ., նոյեմբերի 23, կետ 10:

Անկախ դատական իշխանության առկայությունը ենթադրում է, որ դատարանները պետք է գործեն արտաքին ներգործությունը և ճնշումները բացառող նորմատիվ և ինստիտուցիոնալ երաշխիքների պայմաններում ու օրենքով իրենց տրված լիազորությունների հիման վրա⁹:

Դատական անկախությունը, սակայն, չի ենթադրում դատավորին արտոնության կամ առաջնության տրամադրում, այլ, ընդհակառակը, այն յուրաքանչյուր դատավորի մեջ առաջացնում է պատասխանատվության բարձր զգացում, ինչը և հնարավորություն է տալիս գործը լուծել արդարացի և անկողմնակալ, առանց արտաքին ճնշման կամ ազդեցության և առանց կողմնակի միջամտության:

Այնուամենայնիվ հարկ է նշել, որ դատավորների անկախության ապահովման անհրաժեշտության հետ մեկտեղ՝ առկա է նաև նրանց պատասխանատվության ենթարկելու պայմանների և եղանակների հետ կապված խնդիր, քանի որ ժողովրդավարական հասարակության մեջ դատավորը չի կարող օժտված լինել բացարձակ անձեռնմխելիությամբ: Սակայն, միևնույն ժամանակ, պատասխանատվության ենթարկելը անհրաժեշտ է այնպես իրականացնել, որ դատավորների անկախությունն ու ազատությունն ապահովվեն ցանկացած տեսակի ճնշումներից: Չպետք է թույլ տալ, որ պատասխանատվության ենթարկելը կասկածի տակ դնի դատավորի անկախության սկզբունքը:

Ինչպես հայտնի է, ՀՀ Սահմանադրությամբ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավասությամբ օժտված է ՀՀ արդարադատության խորհուրդը (այսուհետ՝ նաև ԱԽ):

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը հստակ և սպառիչ ամրագրված են ՀՀ դատական օրենսգրքի 153 հոդվածի 2-րդ մասում, որի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ նման հիմք է համարվում արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը, որը կատարվել է չարամտորեն կամ կոպիտ անփութությամբ:

Իսկ ՀՀ դատական օրենսգրքի 153.1 հոդվածի 1-ին մասի 1-ին կետը վկայում է, որ նշված հիմքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթ կարող է հարուցվել տվյալ գործով կամ հարցով համապատասխան դատական ակտը կայացնելուց հետո՝ մեկ տարվա ժամկետում:

Այսպես, հիշյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ Արդարադատության խորհուրդը իրավասու է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարց քննարկել և հաստատել նյութական կամ դատավարական օրենքի նորմի խախտման փաստը նաև այն դեպքերում, երբ տվյալ գործով կամ հարցով համապատասխան դատական ակտը

⁹ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳՂ5/0022 /01/10 որոշումը, կետ 34:

1) դեռևս չի մտել օրինական ուժի մեջ, և խախտման փաստը գտնվում է վիճարկման փուլում վերադաս ատյաններում,

2) մտել է օրինական ուժի մեջ, և բողոքի բացակայության պատճառով խախտման փաստը չի քննվել վերադաս դատարանի կողմից,

3) չի մտել օրինական ուժի մեջ, խախտման փաստը քննվել է վերադաս ատյանի (ատյանների) կողմից, սակայն խախտում չի հայտնաբերվել և համապատասխան ակտը մտել է օրինական ուժի մեջ:

Քննարկման հիմնական առարկա չդարձնելով առաջին դեպքին վերաբերող խնդիրները՝ նշենք միայն, որ մինչ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-86-ն օրենքի ընդունումը այդ օրենքի նախագծի հիմնավորման մեջ անդրադարձ էր կատարվել վերը նշված պարագայում առաջացող խնդիրներին և դրանց լուծման անհրաժեշտությանը՝ արդարացիորեն նշելով, որ. «...Այդ դեպքում փաստորեն Արդարադատության խորհուրդն իր որոշմամբ կարող է կաշկանդել կամ կանխորոշել վերադաս դատական ատյանի որոշումը, ինչն ակնհայտորեն չի բխում Արդարադատության խորհրդի սահմանադրական լիազորություններից: Բացի այդ, հնարավոր է դառնում մի իրավիճակ, երբ Արդարադատության խորհուրդն ու վերաքննիչ կամ վճարեկ դատարանը դատավորի կողմից օրենքի նորմի խախտման հարցի շուրջ ունենան միմյանց ակնհայտ հակասող որոշումներ: Ուստի, նման իրավիճակներից խուսափելու համար անհրաժեշտ է սահմանել, որ նյութական կամ դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտման հիման վրա կարգապահական վարույթ կարող է հարուցվել միայն այն դեպքում, երբ համապատասխան դատական ակտը մտել է ուժի մեջ»¹⁰:

Պետք է նկատել, սակայն, որ չնայած այս հիմնավոր նախագգուշացմանը՝ նախագիծը հետագայում փոփոխությունների ենթարկվեց, և վերոնշյալ խնդրի լուծումը այդպես էլ տեղ չգտավ արդեն իսկ ուժի մեջ մտած համապատասխան օրենքի տեքստում:

Անդրադառնալով մյուս երկու դեպքերին՝ հարկ ենք համարում նշել, որ չնայած սահմանադրական և օրենսդրական այն դրույթներին, որ դատական ակտի օրինականության ստուգումը կարող է իրականացվել բացառապես վերադաս դատական ատյանի կողմից՝ փաստորեն ստացվում է, որ Արդարադատության խորհուրդը, դատական իշխանության համակարգում հանդես գալով որպես ինքնուրույն և անկախ մարմին¹¹, տալիս է գնահատականներ դատական ակտի օրինականության վերաբերյալ:

Ակներև է, որ դատական օրենսգրքով ԱԽ-ին վերապահված՝ իրեն

¹⁰ Տե՛ս http://parliament.am/draft_docs5/K-499.pdf, էջ 25-26

¹¹ ՀՀ արդարադատության խորհրդի՝ անկախ մարմին լինելու հանգամանքը ուղղակիորեն ամրագրված է ՀՀ դատական օրենսգրքի 97 հոդվածում:

ոչ հատուկ այս գործառույթը հակասում է դատավորների անկախության բովանդակությունը կազմող հիմնարար գաղափարներին, այդ թվում՝ վերջիններիս կողմից քրեական գործերը և նյութերը ազատ, իրենց ներքին համոզմունքների հիման վրա լուծելու ելակետային դրույթներին:

Կոչված լինելով ապահովելու դատավորների անկախությունը՝ փաստորեն Արդարադատության խորհուրդը հենց ինքն է դառնում այն խախտող մարմին:

Ավելին, նման իրավասությամբ Արդարադատության խորհրդին օժտելը, մեր կարծիքով, հանգեցնում է ոչ միայն դատավորների անկախությունն ամրագրող վերը քննարկված սկզբունքների խախտմանը, այլև դրանով, դե ֆակտո, նրան են վերապահվում արդարադատություն իրականացնող մարմնի՝ դատարանի լիազորությունները:

«Նյութական և դատավարական օրենքի խախտումները կարող են բողոքարկման կամ դատական ակտի վերանայման և ոչ թե դատավորի կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսանալ: Այլապես, եթե որոշում է կայացվում, որ դատավորը նյութական կամ դատավարական օրենքի «ակնհայտ և կոպիտ խախտում» է թույլ տվել, ապա Արդարադատության խորհուրդը փոխարինում է փաստերի գնահատման և մասնավոր դեպքում օրենքի կիրառման վերաբերյալ դատավորի կարծիքը իր սեփական կարծիքով»¹², – նշվում է իրավական աղբյուրներում:

Սկզբունքորեն չենք կարող համաձայնել այն տեսակետին, որ ՀՀ դատական օրենսգրքի 158 հոդվածի 1-ին մասում ամրագրված նորմը, ըստ որի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը քննելիս Արդարադատության խորհուրդը գործում է որպես դատարան, վերջինիս վերածում է արդարադատություն իրականացնող մարմնի: Մեր համոզմամբ, այդ դրույթի ամրագրումը բացառապես ԱԽ-ի՝ սահմանադրորեն ամրագրված գործառույթների իրականացման ապահովման միջոց է:

Այս իմաստով ուշագրավ է ՀՀ սահմանադրական դատարանի հետևյալ դիրքորոշումը. «Սահմանադրական դատարանը գտնում է, որ «գործում է որպես դատարան» եզրույթի առնչությամբ նկատի պետք է ունենալ Արդարադատության խորհրդի գործունեության կարգը, այլ ոչ թե նրա՝ որպես արդարադատություն իրականացնող դատարանի գործառական դերը: Վերջինս փաստվում է նաև ՀՀ դատական օրենսգրքի 158 հոդվածի 1-ին մասում անմիջապես հաջորդող այն կանոնակարգմամբ, համաձայն որի՝ «...որպես դատարան գործելիս Արդարադա-

¹² Առաջարկությունների փաթեթ՝ «Ինստիտուցիոնալ բարեփոխումների նպատակով տեխնիկական աջակցության և խորհրդատվական ծառայությունների մատուցում Արդարադատության խորհրդին և Դատական դեպարտամենտին», 2010 թ., մայիս, էջ 53:

տության խորհրդում գործերի քննության կարգի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության վարչական դատավարական օրենսգրքի նորմերն այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ կիրառելի են Արդարադատության խորհրդում գործի քննության նկատմամբ և չեն հակասում սույն օրենսգրքի նորմերին»¹³:

Այն, որ Արդարադատության խորհրդի այդպիսի իրավասությունները հանգեցնում են դատավորների անկախության խախտմանը և անհարիր են նրա սահմանադրաիրավական կարգավիճակին, վկայում է նաև միջազգային փորձի ուսումնասիրությունը:

Օրինակ՝ Իսպանիայի Թագավորության կենտրոնական դատական խորհրդի կարգավիճակի և լիազորությունների մեկնաբանության մեջ նշվում է. «Կենտրոնական դատական խորհուրդը¹⁴ անկախ սահմանադրական մարմին է... բաղկացած դատավորներից և այլ իրավագետներից, ում ... գործառույթների իրականացումը նպատակաուղղված է դատավորների անկախության ապահովմանը... :

...Դատական անկախության պաշտպանությունը չի ավարտվում միայն այնպիսի միջոցառումների իրականացմամբ, ինչպիսին այդ անկախության նկատմամբ խորհրդի կողմից ընդգծված հարգալից վերաբերմունք դրսևորելու պարտականությունն է, այլև խորհուրդը պետք է զերծ մնա դատավորներին կամ դատարաններին ցանկացած տեսակի այնպիսի ցուցում, հրահանգ, հրաման կամ կարգադրություն տալուց, թե ինչպես պետք է մեկնաբանել և կիրառել օրենքը»¹⁵:

Ֆրանսիայի Հանրապետության դատական օրենսգրքի 259.15 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի¹⁶ վերաբերյալ խորհրդատվության և հետազոտությունների համար հանձնաժողովի կողմից հաստատված համապատասխան զեկույցում նշվել է. «Դատական համակարգի անդամների ...անկախության ապահովման նպատակով Բարձրագույն խորհուրդը չի կարող քննել այն բողոքները, որոնք վերաբերում են դատական որոշման բովանդակությանը: «Դատական որոշում» եզրույթը լայն է մեկնաբանվում, այն ներառում է ոչ միայն դատավորի կայացրած վճիռները, դատավճիռները, այլև դատական ընթացակարգերի շրջա-

¹³ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2012 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ՍԴՈ-1063 որոշումը, կետ 6:

¹⁴ Նշենք, որ տարբեր երկրներում արդարադատության խորհուրդներն ունեն տարբեր անվանումներ՝ Մագիստրատուրայի բարձրագույն խորհուրդ (Ֆրանսիա, Իտալիա, Մոլդովա), Դատական խորհուրդ (Շվեդիա, Բոլանդիա, Դանիա), Կենտրոնական դատական խորհուրդ (Իսպանիա), Բարձրագույն դատական խորհուրդ (Չեխիա), Պետական դատական խորհուրդ (Խորվաթիա) և այլն (տե՛ս **Voermans W., Albers P.**, Councils for the judiciary in EU countries, European Commission for the Efficiency of Justice (CEPEJ), February, 2003), http://www.coe.int/t/dghl/cooperation/cepej/textes/CouncilOfJusticeEurope_en.pdf

¹⁵ http://www.poderjudicial.es/cgpj/es/Poder_Judicial/Consejo_General_del_Poder_Judicial/Informacion_Institucional/Que_es_el_CGPJ/Mision_

¹⁶ Տե՛ս http://www.ejustice.just.fgov.be/cgi_loi/change_lg.pl?language=fr&la=F&table_name=loi&cn=1967101002

նակներում կայացված ցանկացած դատական որոշում»¹⁷:

Նման իրավակարգավորումներ սահմանված են նաև Բելգիայի Թագավորության համապատասխան նորմատիվ իրավական ակտերում¹⁸:

«Կարգապահական վարույթի և Վրաստանի ընդհանուր դատարանների դատավորների կարգապահական պատասխանատվության մասին» Վրաստանի Հանրապետության օրենքի 2 հոդվածի ուսումնասիրությունից հետևում է, որ մինչև 2012 թվականի օրենսդրական համապատասխան փոփոխությունները դատավորի կողմից օրենքի խախտումը¹⁹ հիմք էր համարվում Վրաստանի արդարադատության բարձրագույն խորհրդի կողմից նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու: Սակայն հատկանշական է, որ նշված օրենսդրական փոփոխություններով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերոգրյալ հիմքը սահմանող նորմը ուժը կորցրած ճանաչվեց²⁰:

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու՝ նման հիմքի փաստացի բացակայության մասին է վկայում նաև «Լիտվայի Հանրապետությունում դատարանների համակարգի մասին» Լիտվայի Հանրապետության օրենքի²¹ ուսումնասիրությունը:

Այստեղ ցանկանում ենք առանձնահատուկ ընդգծել, որ Մոլդովայի Հանրապետության սահմանադրական դատարանը, իր 2010 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 28 որոշման շրջանակներում քննելով «Դատավորների կարգավիճակի մասին» Մոլդովայի Հանրապետության օրենքի 22 հոդվածի 1-ին մասի «բ» կետի սահմանադրականության հարցը, ըստ որի՝ Մոլդովայի Հանրապետության մագիստրատուրայի բարձրագույն խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք էր համարվում կանխամտածված կամ կոպիտ անփութությամբ օրենսդրության ոչ միանշանակ մեկնաբանությունը կամ կիրառությունը, եթե դա արդարացված չէր դատական պրակտիկայի փոփոխմամբ, արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «...Սահմանադրական դատարանը ընդգծում է, որ որևէ մարմին, բացառությամբ դատական աստիճանների, իրավասու չէ կասկածի տակ առնելու դատական ակտի իրավաբանական ուժը ... և արտահայտվելու դատական պրակտիկային դատական որոշումների համա-

¹⁷ http://www.csj.be/sites/5023.b.fedimbo.belgium.be/files/press_publications/rappplaintes-2013-fr.pdf, էջ 3:

¹⁸ Որպես պարզաբանում՝ տե՛ս <http://www.csj.be/fr/content/faq-plaintes>

¹⁹ Նշված հոդվածում հստակ մեկնաբանվում էր նաև այն, թե որն էր համարվում օրենքի խախտում, և երբ կարող էր դատավորը այդ հիմքով ենթարկվել կարգապահական պատասխանատվության:

²⁰ Տե՛ս https://matsne.gov.ge/index.php?option=com_ldmssearch&view=docView&id=16774&publication=16&Itemid=0&lang=ru

²¹ Տե՛ս http://www3.lrs.lt/pls/inter3/dokpaieska.showdoc_e?p_id=21145&p_tr2=2

պատասխանության մասին»²²:

Այս պատճառով վերջինս հակասահմանադրական ճանաչեց օրենքի վերոգրյալ դրույթը:

Այսպիսով, հիմք ընդունելով ասվածը, հանգում ենք այն եզրակացության, որ ՀՀ դատական օրենսգրքի 153 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը ինքնին խաթարում են դատավորների անկախությունը երաշխավորող հիմնարար դրույթները, ինչպես նաև՝ հակասում ՀՀ Սահմանադրության 91 հոդվածի 1-ին պարբերությանը, ըստ որի՝ ՀՀ-ում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

Ընդհանրացնելով վերը բերված հիմնավորումները՝ կարծում ենք՝ պետք է բացառել նյութական կամ դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտման հիմքով դատավորին ԱԽ-ի կողմից կարգապահական պատասխանատվության ենթարկելը: Հակառակ դեպքում օրենսդրական նման կարգավորումը կասկածի տակ է դնում ամբողջ դատական համակարգի արդյունավետությունը՝ անվստահություն սերմանելով այդ համակարգի առանձին ատյանների կողմից իրենց գործառույթները պատշաճ իրականացնելու նկատմամբ:

ՀՀ արդարադատության խորհրդի կողմից հնարավոր կարող է լինել իրացնել վերը նշված գործառույթը միայն այն դեպքում, երբ վերադաս դատարանը ստորադաս դատարանի կայացրած անօրինական դատական ակտը բեկանի (փոփոխվի) և դրանով հիմնավորվի, որ արդարադատություն իրականացնելիս դատավորի կողմից չարամտորեն կամ կոպիտ անփութությամբ թույլ է տրվել նյութական կամ դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտում:

Այսինքն՝ այն դեպքում, երբ վերադաս ատյանը նյութական կամ դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտում է արձանագրել և դրա հիման վրա բեկանել (փոփոխել) է ստորադաս դատարանի դատական ակտը, մեր կարծիքով, հնարավոր է դառնում ԱԽ-ի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելը, քանի որ միայն այդ դեպքում ԱԽ-ն, հիմք ընդունելով վերադաս ատյանի որոշումը, կարող է քննարկել խախտում թույլ տված դատավորի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու հարցը:

Ի դեպ, այդ մասին է փաստորեն նշել նաև Մոլդովայի Հանրապետության սահմանադրական դատարանը²³, որի արտահայտած իրավական դիրքորոշումները հանգեցրին այն բանին, որ «Դատավորների կարգավիճակի մասին» Մոլդովայի Հանրապետության օրենքի 22 հոդ-

²² Մոլդովայի Հանրապետության սահմանադրական դատարանի՝ 2010 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 28 որոշումը, կետ 7.4 (http://www.constcourt.md/public/files/file/Actele%20Curtii/acte_2010/h_28.pdf):

²³ Տե՛ս Մոլդովայի Հանրապետության սահմանադրական դատարանի՝ 2010 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 28 որոշումը, կետ 7.4:

վածի 1-ին մասի «բ» կետը ներկայումս ունի հետևյալ տեսքը. «Կարգապահական պատասխանատվություն է համարվում կանխամտածված կամ կոպիտ անփութությամբ օրենսդրության ոչ միանշանակ կիրառությունը, եթե այդ փաստը հաստատվել է վերադաս դատական ատյանների կողմից և հանգեցրել անօրինական որոշման բեկանմանը»²⁴:

Ասվածի համատեքստում փորձենք անդրադառնալ ՀՀ դատական օրենսգրքի 153 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) տեղ գտած իրավական հետևանքներին:

Այսպես, Օրենսգրքի 426.4 հոդվածի 1-ին մասը միայն վերջերս լրացվեց նոր՝ 2.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «1. Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում.

2.1) Արդարադատության խորհուրդն ընդունել է որոշում, որով տվյալ դատական ակտը կայացրած դատավորը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 153 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով»:

Սույն նորմի վերլուծությունից հետևում է, որ նշված հիմքերով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Արդարադատության խորհրդի որոշումը գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման նոր հանգամանք է:

Նկատենք, որ նման իրավանորմի սահմանման անհրաժեշտության վերաբերյալ տարբեր կարծիքներ են արտահայտվել նաև իրավաբանական գրականության մեջ: Մասնավորապես, Ս. Ռ. Մարաբյանը նշում է, որ այն դատական ակտը, որը կայացնելիս դատավորի կողմից թույլ է տրվել նյութական կամ դատավարական օրենքի ակնհայտ և կոպիտ խախտում, ոչ միայն չի կարող համապատասխանել օրինականության, հիմնավորվածության, արդարության չափանիշներին և ունենալ դաստիարակչական նշանակություն, այլև այդ ակտի օրինական ուժի մեջ թողնելու պայմաններում կասկածի տակ է դրվում արդարադատության համակարգի հեղինակությունը: Ըստ այդմ՝ նա եզրակացնում է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ԱԽ-ի որոշումը կարող է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման իրական հիմք լինել²⁵:

Թեև ստեղծված իրավիճակում (երբ ԱԽ-ն կասկածի տակ է դնում

²⁴ <http://lex.justice.md/index.php?action=view&view=doc&lang=2&id=346404>

²⁵ Տե՛ս Ս. Ռ. Մարաբյան, Դատական ակտերի վերանայման հնարավորությունը դատավորի կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Արդարադատության խորհրդի որոշման հիման վրա // Դատական իշխանություն, թիվ 3/140, մարտ, 2011, էջ 29-30:

դատական ակտի օրինականությունը, սակայն այն շարունակում է մնալ օրինական ուժի մեջ) վերը բերված դատողությունները առերեւոյթ թվում են հիմնավոր, այնուամենայնիվ համակարգային առումով չենք կարող ընդունել վերոնշյալ կարծիքը²⁶ հաշվի առնելով հետևյալը:

Նախ նշենք, որ Արդարադատության խորհրդի որոշումը որպես նոր հանգամանքի հիմք նախատեսելը առաջին հերթին չի համապատասխանում ԱԽ-ի սահմանադրաիրավական կարգավիճակին, ըստ որի՝ այն կոչված է իրականացնելու առավելապես կազմակերպարավական գործառույթներ: Այլապես ստացվում է, որ Արդարադատության խորհուրդը, վերածվելով արդարադատություն իրականացնող մարմնի, հանդես է գալիս որպես դատական համակարգի «չորրորդ ատյան», ինչն անընդունելի է:

Փաստորեն, օրենսդիրն անարդարացիորեն ԱԽ-ի որոշմանը հաղորդել է այնպիսի իրավական ուժ, որ հնարավոր է դառնում վերանայելու նույնիսկ ՀՀ դատական բարձրագույն ատյանի (բացի սահմանադրական արդարադատության հարցերից)՝ ՀՀ վճռաբեկ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը:

Այստեղ հարկ ենք համարում նաև նշել, որ դատական ակտի՝ օրինական ուժի մեջ մտնելու պահից վերջնական դառնալու, և միայն բացառիկ դեպքերում դրա վերանայման հնարավորության, այսինքն՝ դատական ակտերի կայունության (Եվրոպական դատարանի եզրութաբանությամբ՝ իրավական որոշակիության) սկզբունքի հետ կապված՝ Եվրոպական դատարանը բազմիցս նշել է. «Իրավունքի գերակայության հիմնադրույթներից մեկն իրավական որոշակիության սկզբունքն է, որը, ի թիվս այլ խնդիրների, պահանջում է, որ դատարանների՝ ուժի մեջ մտած որոշումները կրկին չդառնան քննարկման առարկա: Իրավական որոշակիությունը ենթադրում է *res judicata* սկզբունքի հարգում, որն իրենից ներկայացնում է վճիռների վերջնական լինելու սկզբունք: Այս սկզբունքը սահմանում է, որ որևէ կողմ իրավասու չէ պահանջելու ուժի մեջ մտած և կատարման ենթակա վճռի վերանայում պարզապես գործը կրկին քննելու և գործով նոր վճիռ կայացնելու նպատակով: Գործը վերանայելու՝ վերադաս դատարանների իրավասությունը պետք է իրականացվի դատական սխալները և արդարադատության իրականացման ընթացքում տեղ գտած թերությունները շտկելու, և ոչ թե նոր

²⁶ Ի դեպ՝ թեև համահեղինակներից Ա. Հովհաննիսյանը «Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերջնական դատավարական որոշումների վերանայման հիմնահարցերը ՀՀ քրեական դատավարությունում» թեկնածուական ատենախոսության մեջ համաձայնել է նույն կարծիքին, բայց հետագայում հանգել է այն եզրակացության, որ առկա խնդիրների լուծման այդ միջոցը սկզբունքորեն ընդունելի չէ (տե՛ս Ա. Հովհաննիսյանի՝ «Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերջնական դատավարական որոշումների վերանայման հիմնահարցերը ՀՀ քրեական դատավարությունում» թեմայով իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը):

քննություն սկսելու նպատակով: Վերանայումը չպետք է կրի քողարկված բողոքարկման բնույթ, և գործի վերաբերյալ երկու կարծիքի առկայությունը չի կարող գործը կրկին քննության առնելու հիմք հանդիսանալ: Այս սկզբունքից շեղումը կարող է արդարացվել միայն էական և անհետաձգելի հանգամանքների առկայության դեպքում»²⁷:

Ըստ այսմ, կարծում ենք, որ արդարացված չէ կազմակերպարկվական գործառույթներով օժտված մարմնի՝ ԱԽ-ի որոշումը համարել որպես էական և անհետաձգելի հանգամանք ու շեղվել դատական ակտերի կայունության սկզբունքից:

Բացի այդ, մեր կարծիքով, ճիշտ չէ նաև Արդարադատության խորհրդի որոշումը դասել նոր հանգամանքներով բացառիկ վերանայման հիմքեր հանդիսացող այնպիսի մարմինների որոշումների շարքին, ինչպիսիք են Մարդու իրավունքների եվրոպական դատարանը և ՀՀ Սահմանադրական դատարանը, քանի որ հակառակ պարագայում նույնացվում են ԱԽ-ի և նշված մարմինների կայացրած որոշումների իրավական արժեքը, դերը և նշանակությունը²⁸:

Ավելին, բացառված չէ այնպիսի իրավիճակ, երբ ԱԽ-ի որոշումը, որի հիման վրա վերանայվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, հետագայում չհամապատասխանի, օրինակ՝ այլ գործով ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներին: Իսկ այդ պարագայում փաստորեն կստացվի, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը վերանայվել է ԱԽ-ի՝ ՀՀ վճռաբեկ դատարանի դատական ակտին հակասող որոշման հիման վրա: Սա նշանակում է, որ նման դեպքերում, ըստ էության, կարող է խաթարվել նաև դատական համակարգի բնականոն գործունեությունը:

Կարծում ենք, վերը ասվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ արդարադատության խորհրդի կողմից դատավորին «պատժելը», իսկ հետագայում դրա հիման վրա օրինական ուժի մեջ մտած դատական ակտը վերանայելը, չեն կարող համարվել իրավական արդյունավետ մեխանիզմներ:

²⁷ Եվրոպական դատարանի՝ «Ռյաբիխն ընդդեմ Ռուսաստանի (Ryabykh v. Russia)» գործով 2003 թվականի հուլիսի 24-ի վճիռը, կետեր 51-52, «Բրումարեսկուն ընդդեմ Ռումինիայի (Brumarescu v. Romania)» գործով 1999 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, կետեր 61-62, «Նելյուբինն ընդդեմ Ռուսաստանի (Nelyubin v. Russia)» գործով 2006 թվականի նոյեմբերի 2-ի վճիռը, կետեր 22-23, «Պրավեդնայան ընդդեմ Ռուսաստանի (Pravednaya v. Russia)» գործով 2004 թվականի նոյեմբերի 18-ի վճիռը, կետեր 24-25, «Քսերաժն ընդդեմ Ալբանիայի (Xheraj v. Albania)» գործով 2008 թվականի հուլիսի 29-ի վճիռը, կետեր 51-52: Իրավական որոշակիության սկզբունքի բովանդակությանը մանրամասն անդրադարձել են նաև ՀՀ վճռաբեկ, ինչպես նաև սահմանադրական դատարանները (տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի փետրվարի 13-ի քաղաքացիական գործով թիվ ԱՐԴ/0062/02/09, 2011 թվականի մայիսի 27-ի քաղաքացիական գործով թիվ ԵՇԴ/0473/02/10, ինչպես նաև՝ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 15-ի թիվ ՍԴՈ-984 որոշումները):

²⁸ Ի միջի այլոց, նման կարծիք է արտահայտել նաև Ա. Հովհաննիսյանի իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության պաշտոնական ընդդիմախոս, դոցենտ Դ. Զ. Ավետիսյանը իր պաշտոնական կարծիքում:

Այսպիսով, հաշվի առնելով կատարված ուսումնասիրությունները՝ կարծում ենք, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4 հոդվածի 1-ին մասի 2.1 կետը բավականաչափ վիճահարույց է:

ՀՀ դատական օրենսգրքի 153 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի քրեադատավարական հետևանքների հետ կապված՝ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև Օրենսգրքի 426.3 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում ամրագրված նորմին: Դրա վերլուծությունից մասնավորապես հետևում է, որ վերջնական դատական ակտերը նոր երևան եկած հանգամանքներով կարող են վերանայվել, եթե օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված են դատավորների հանցավոր գործողությունները, որոնք նրանք թույլ են տվել տվյալ գործը քննելիս:

Այդ համատեքստում համադրված վերլուծության ենթարկելով ՀՀ դատական օրենսգրքի 153 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը և 153.2 հոդվածը՝ կարծում ենք, որ դատավորի կողմից նյութական կամ դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտում չարամտորեն թույլ տալը ինքնին պարունակում է ՀՀ քրեական օրենսգրքի 352 հոդվածով (ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ այլ դատական ակտ կայացնելը) նախատեսված հանցակազմի հատկանիշները, ուստի այդ դեպքում օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը կարող են վերանայվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում սահմանված հիմքով: Ինչ վերաբերում է վերը նշված խախտումը կոպիտ անփութության հետևանքով թույլ տալուն, ապա, մեր կարծիքով, համապատասխան հատկանիշների առկայության դեպքում արարքը կարող է որակվել որպես պաշտոնեական անփութություն (ՀՀ քրեական օրենսգրքի 315 հոդված)²⁹, իսկ դրանց բացակայության ժամանակ այն արդեն կարելի է դիտել որպես կարգապահական խախտում, սակայն միայն այն դեպքում, երբ վերադաս աստիճանը իր որոշմամբ հաստատի խախտման փաստը:

Անփոփելով վերը շարադրվածը, կարծում ենք, որ անհրաժեշտ է՝

1. նյութական կամ դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտման հիմքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու՝ ՀՀ արդարադատության խորհրդին վերապահված իրավասությունն իրացնել միայն այն դեպքում, երբ խախտման այդ փաստը հաստատվել է վերադաս դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով և հանգեցրել անօրինական ակտի բեկանմանը կամ փոփոխմանը,

2. ուժը կորցրած ճանաչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 2.1 կետը:

²⁹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Հատուկ մաս» (երրորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), դասագիրք բուհերի համար (խմբագրությամբ՝ Գ. Մ. Ղազինյանի), Եր., 2007, էջ 914:

Բանալի բառեր – դատավորների անկախություն, Արդարադատության խորհուրդ, նյութական կամ դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտում, դատավորների կարգապահական պատասխանատվություն, նոր հանգամանք

ГАГИК КАЗИНЯН, АРМЕН ОГАНЕСЯН – Привлечение судьи к дисциплинарной ответственности за очевидное и грубое нарушение норм материального или процессуального закона и его правовые последствия. – Статья посвящена вопросам, связанным с привлечением Советом юстиции РА судьи к дисциплинарной ответственности. Судью привлекают к ответственности за очевидное и грубое нарушение норм материального или процессуального закона, а также за правовые последствия такого нарушения. В частности, на основании сравнительно-правового анализа уголовно-процессуального законодательства устанавливается, обоснованно ли указанное правомочие Совета юстиции. Кроме того, выявляются правомерность пересмотра судебного акта на основании решения Совета юстиции, проблемы, существующие в действующем механизме регулирования, и возможные пути их устранения.

Ключевые слова: *независимость судей, Совет юстиции, нарушение нормы закона, дисциплинарная ответственность судей, новое обстоятельство*

GAGIK GHAZINYAN, ARMEN HOVHANNISYAN – The Subjection of a Judge to Disciplinary Liability on the Ground of Obvious and Grave Violation of Substantive or Procedural Law and Its Legal Consequences. – The present article discusses the issues related to bringing judges to disciplinary responsibility by the RA Council of Justice for obvious and grave violations of substantive or procedural law and its legal consequences in criminal procedural law. In particular, based on comparative legal analysis of foreign criminal procedural legislation the authors analyze the validity of the aforementioned powers of the Council of Justice, as well as the legality of the revision of judicial acts on the basis of the decision, taken by the Council of Justice. The authors reveal the problems of current regulation and suggest possible solutions to the problems detected.

Key words: *independence of judges, the Council of Justice, obvious and grave violation of substantive or procedural law, disciplinary responsibility of judges, new circumstance*

ОБЪЕКТ И ПРЕДМЕТ КРИМИНАЛИСТИЧЕСКОЙ КОНЦЕПЦИИ РАССЛЕДОВАНИЯ МАССОВЫХ БЕСПОРЯДКОВ

ВАГЕ ЕНГИБАРЯН

Система общих положений методик расследования массовых беспорядков может быть представлена единым комплексом следующих частей: 1) гносеологическая часть, включающая описание и объяснение зарождения, становления, функционирования и развития (изменений) данной системы; 2) онтологическая часть – объекта, предмета, цели, задач, системы, принципов и источников этой системы, ее взаимосвязи с другими системами второй части заключительного раздела криминалистики, другими ее разделами и другими отраслями знаний, языка (понятийно-категориального аппарата) общих положений методик расследования массовых беспорядков, классификации и структуры данных методик; 3) методолого-инструментарная часть – методов и принципов собирания, систематизации, обработки информации о закономерностях организации и осуществления расследования массовых беспорядков и использования этой информации в целях разработки частных криминалистических методик, а также задач дальнейшего научного исследования.

Общие положения методик расследования массовых беспорядков фактически представляют собой криминалистическую концепцию, содержание которой следует раскрывать посредством рассмотрения отдельных ее элементов. Среди них наиболее значимыми являются объект и предмет.

Объект рассматриваемой концепции в значительной мере предопределяет ее систему. Основное содержание в системе криминалистической концепции расследования массовых беспорядков составляют научно обоснованные и апробированные на практике теоретические положения, касающиеся организации и осуществления расследования путем выбора и применения технико-криминалистических средств, тактических приемов с учетом специфических условий деятельности. Следовательно, *объектом* концепции можно определить общественные отношения в сфере *расследования данной категории преступлений, отраженные в соответствующей технологии расследования.*

Для того чтобы раскрыть содержание объекта, как и всей концепции расследования массовых беспорядков, необходимо определиться с понятием данных преступных деяний.

Определение понятия массовые беспорядки включает определения составляющих его понятий: массовый, т.е. совершаемый большим количеством людей¹, проявляющийся не в единичных случаях, являющийся не

¹ См.: Ожегов С. И. Словарь русского языка. М., 1990, с. 343.

единичным, и беспорядок² – отсутствие, нарушение порядка³.

В литературе при исследовании различных аспектов массовых беспорядков большинство авторов⁴ используют определение этого понятия, данное в соответствующей норме уголовного закона, предусматривающей ответственность за организацию и активное участие в массовых беспорядках. Так, В. Н. Григорьев определил массовые беспорядки следующим образом: «Массовые беспорядки – это умышленные действия, совершаемые большой группой людей – толпой, посягающие на основы общественного порядка и безопасности и сопровождающиеся погромами, разрушениями, поджогами и другими подобными действиями или оказанием вооруженного сопротивления власти»⁵.

Необходимо отметить, что нормы права, имея в основе субъективное начало, воспроизводят в законе существующие социальные явления с различной степенью обусловленности. Результаты исследования новых общественных отношений криминалистической направленности порой неадекватно отражаются в законе, и нормы уголовного права в этом отношении не являются исключением.

Невозможно определить свойства массовых беспорядков – специфического общественного явления, – опираясь лишь на правовые нормы. Для более глубокого исследования данного феномена необходимо подойти к нему с социологической точки зрения.

Исследование отечественного и зарубежного опыта показывает, что массовые беспорядки в своем большинстве характеризуются наличием обязательного базисного элемента, которым является социальный конфликт (в противном случае нет оснований для возникновения массовых беспорядков). Исходя из анализа практики и исторического опыта, а также основываясь на теоретических выводах зарубежных конфликтологов⁶, выделим ряд типов социальных конфликтов, на основании которых можно типологизировать беспорядки.

Исходя из субъектов конфликтных общественных отношений, потенциально свойственных любому обществу и государству, и учитывая сложность, многоэлементность, разнообразие социальной структуры общества, обоснованным представляется вывод о том, что сложно отразить все типы социальных конфликтов в количественном и содержательном аспекте, вследствие чего их классификация возможна лишь в общих чертах. Необходимо также отметить, что не все типы социальных конфликтов трансформируются в массовые беспорядки. В связи с этим целесообразно указать те типы, которые имеют наибольшую вероятность трансформации в массовые беспорядки: межклассовые,

² См. там же с. 51.

³ До Октябрьской революции 1917 года термин «беспорядки» в русском языке обычно употреблялся в значении «массовые народные волнения, являющиеся выражением протеста против власти эксплуататоров».

⁴ См. **Троицкий Н. С.** Управление силами и средствами ГОРОВД в условиях массовых беспорядков: Дис. ... канд. юрид. наук. М., 1980, с. 20; **Дьяков С. В., Игнатьев А. А., Карпушин М. П.** Ответственность за государственные преступления. М., 1988, с. 109–110 и др.

⁵ **Григорьев В. Н.** Расследование массовых беспорядков в условия чрезвычайного положения. М., 1992, с. 5.

⁶ См. **Аллин Б.** Наука разрешать конфликты // «Известия», 1991, № 37.

межнациональные, межгрупповые, конфликты между администрацией и трудовым коллективом, конфликты между населением и органами власти.

Необходимо отметить и другую особенность массовых беспорядков: возникнув на основе одного социального конфликта, они могут превратиться в другой.

С социологической точки зрения субъект массовых беспорядков – это толпа, которая функционирует по свойственным ей закономерностям, разрастается до непрогнозируемых размеров, распадается на более мелкие части и способна спровоцировать возникновение аналогичных явлений в других районах региона.

Используется этот термин и в социологии⁷. Однако феномен толпы не исследовался. К этому вопросу обратились в начале 70-х годов XX в., когда происходило становление социальной психологии. В социологии же прочно утвердился термин «толпа». Представляется возможным использовать определение толпы, которое имеется в социологической литературе: «контактная» внешне неорганизованная общность, отличающаяся высшей степенью конформизма составляющих ее индивидуумов, действующая крайне эмоционально и единодушно⁸.

Большинство авторов определяют массовые беспорядки как преступление, выражающееся в совершении конкретных действий, предусмотренных в диспозиции статьи 79 УК РСФСР (212 УК РФ)⁹. Однако в ходе массовых беспорядков совершаются деяния, которые содержат признаки состава других преступлений. Массовые беспорядки – особый конгломерат различных преступных деяний. В их состав входят такие самостоятельные преступления, как поджоги, погромы, уничтожение имущества, причинение вреда личности и т. п., а в законе указанные деяния подобного рода вместе называются массовыми беспорядками, т.е. совокупностью определенных преступлений, преступных действий, включая и их организацию.

В социологическом аспекте массовые беспорядки – это организованное группой лиц или отдельным лицом действие (совокупность действий) с участием толпы, направленное на нарушение общественного порядка и общественной безопасности, национального и расового равноправия, совершаемые с целью дестабилизации обстановки и выселения неугодных определенным кругам этнических групп из мест постоянного проживания¹⁰.

В уголовно-правовом аспекте массовые беспорядки – это умышленные действия, направленные на организацию толпы с целью подрыва основ государственной власти, нарушения общественного порядка и общественной безопасности, конституционных прав граждан, сопровождающиеся погромами, поджогами, разрушениями и другими подобными действиями.

⁷ См. **Войтоловский А.** Очерки коллективной психологии. М., 1925.

⁸ «Социальная психология. Краткий очерк». М., 1975, с. 283.

⁹ **Троицкий Н. С.** Указ. соч., с. 20.

¹⁰ См. **Ильясов А. З.** Уголовно-правовые и криминологические проблемы массовых беспорядков: Дис... канд. юрид. наук. Махачкала, 1999, с. 48.

Рассматриваемое преступление в УК РА помещено в разделе IX главы 23 «Преступления против общественной безопасности».

Уголовное законодательство Республики Армения (ст. 225 УК РА), установило ответственность за массовые беспорядки, т.е. «организацию массовых беспорядков, сопровождающихся погромами, разрушениями, поджогами и другими подобными действиями, а равно непосредственное совершение их участниками указанных выше преступлений или оказание ими вооруженного сопротивления власти». На наш взгляд, в диспозиции статьи законодатель выделял три основных вида деяния, составляющих окончанный состав преступления: организацию массовых беспорядков, сопровождающихся погромами, разрушениями, поджогами и уничтожением имущества; непосредственное совершение участниками беспорядков погромов, разрушений, поджогов и уничтожением имущества; оказание участниками массовых беспорядков вооруженного сопротивления власти. Следует также отметить, что вышеупомянутые действия приобретали квалификационное значение, если сопровождалось убийством (ч. 3 ст. 225 УК РА). Но после внесения изменений в статью данная часть была признана недействующей.

После внесения изменений в диспозиции статьи 225 УК РА законодатель впервые дал определение понятия массовых беспорядков. Так, ч. 1 ст. 225 УК РА устанавливает ответственность за организацию массовых беспорядков, а в ч. 2 данной статьи перечисляются действия, совершающиеся при массовых беспорядках: «Применение насилия, погромов, поджогов, уничтожений или повреждений имущества, а также применение огнестрельного оружия, взрывчатых веществ или взрывных устройств, либо оказание вооруженного сопротивления представителю власти во время массовых беспорядков со стороны их участников, наказывается лишением свободы от трех до восьми лет, если осуществление этих действий само по себе не влечет более строгой ответственности, предусмотренной данным кодексом».

В ч. 5 ст. 225 УК РА определяется содержание массовых беспорядков следующим образом: «В данном кодексе массовыми беспорядками считаются действия одного или нескольких лиц, сопровождающиеся насилием, погромами, поджогами, уничтожением или повреждением имущества, а также применением огнестрельного оружия, взрывчатых веществ или взрывных устройств либо оказанием вооруженного сопротивления представителю власти, вследствие которых ставится под угрозу общественная безопасность».

Таким образом, ст. 225 УК РА дает примерный перечень конкретных действий, которые характеризуют массовые беспорядки: насилие, погромы, поджоги, уничтожение имущества, применение огнестрельного оружия, взрывчатых веществ или взрывных устройств.

Погром – это разорение жилых и производственных помещений, уничтожение или порча находящегося там имущества.

Разрушение – это уничтожение или приведение в негодность зданий, памятников, а также транспортных средств.

Поджог – это действия, направленные на воспламенение строений, раз-

личных объектов и автотранспорта, деяние, вызывающее различными способами появление открытого огня, способного перерасти в пожар, т. е. неконтролируемый процесс горения, сопровождающийся уничтожением материальных ценностей и создающий угрозу жизни и здоровью людей.

Статьи 225 УК РФ, в отличие от предыдущих статьей 74 УК РФ, в диспозиции не употребляют формулировку «другими подобными действиями»¹¹; эти действия фиксируют правоприменители в зависимости от условий, места, времени совершения массовых беспорядков.

Думаем, что к ним следует отнести действия, посягающие на личность, в том числе на представителей власти и государственного управления, сопряженные с насилием, причинением телесных повреждений, побоев, незаконным лишением свободы и т.д.¹². Некоторые авторы к «другим подобным действиям» относят агрессивные, насильственные действия, направленные против людей или имущества, освобождение арестованных, их принудительный побег, принудительную остановку транспорта, промышленных и иных предприятий и учреждений и т. п.¹³

На основе вышеизложенного материала представляется возможным определить *массовые беспорядки* в качестве объекта криминалистических исследований как *действия нескольких лиц, сопровождающиеся насилием, погромами, поджогами, уничтожением или повреждением имущества, а также применением огнестрельного оружия, а равно других предметов, используемых в качестве оружия, взрывчатых веществ или взрывных устройств либо оказанием вооруженного сопротивления представителю власти, вследствие которых ставится под угрозу общественная безопасность*.

В свою очередь объектом рассматриваемой криминалистической концепции будут являться общественные отношения в сфере *досудебного производства по уголовным делам о действиях нескольких лиц, сопровождавшихся насилием, погромами, поджогами, уничтожением или повреждением имущества, а также применением огнестрельного оружия, а равно других предметов, используемых в качестве оружия, взрывчатых веществ или взрывных устройств либо оказанием вооруженного сопротивления представителю власти, вследствие которых ставится под угрозу общественная безопасность, отраженная в соответствующей технологии расследования*.

Массовые беспорядки как криминальное явление жизни общества характеризуются рядом обусловленных их сущностью признаков:

- 1) наличие толпы, беспорядочное скопление людей, часто с оружием в руках или с хозяйственно-бытовыми орудиями, трубами, камнями и тому подобное;
- 2) неподчинение толпы законным требованиям органов власти разойтись и прекратить любые противоправные действия;

¹¹ Харитошкин В. В. Уголовно-правовая борьба с уничтожением или повреждением имущества огнем в результате поджога либо преступного нарушения правил пожарной безопасности: Автореф. дис. ... канд. юрид. наук. М., 1983, с. 10.

¹² Дьяков С. В., Игнатьев А. А., Карпушин М. П. Ответственность за государственные преступления. М., 1988, с. 113.

¹³ См. «Комментарий к Уголовному кодексу РСФСР». М., 1985, с. 170.

3) предъявление лицами из толпы явно незаконных требований с целью провоцирования действий сил правопорядка;

4) совершаемые ими массовые погромы, разрушения, поджоги, грабежи, оказание сопротивления представителям власти (как правило, полиции) с использованием оружия и других предметов.

И хотя данный перечень признаков не является исчерпывающим, тем не менее, эти признаки имеют значение, так как определяют криминалистическую характеристику массовых беспорядков, позволяющую, с одной стороны, разрабатывать эффективные рекомендации, в своей совокупности образующие частную криминалистическую методику, с другой – способствовать эффективному расследованию данной категории преступлений.

Предметом рассматриваемой теоретической концепции в самом общем виде являются закономерности расследования массовых беспорядков. В юридической литературе принято различать общие закономерности расследования преступлений, закономерности расследования однородных групп (типов) и конкретных видов преступлений¹⁴. В данном случае речь идет о закономерностях расследования однородной группы (типа) преступлений – массовых беспорядков.

Причем предметом рассматриваемой концепции являются лишь специфические закономерности, вызванные массовыми беспорядками. Аналогично в концепции выделяются, например, закономерности расследования преступлений по горячим следам¹⁵, групповых преступлений¹⁶, преступлений, совершаемых осужденными в исправительно-трудовых учреждениях¹⁷ т. п.

В зависимости от того, о какой конкретной стороне деятельности идет речь, различаются специфические закономерности организации и методико-криминалистические. В обычных ситуациях проявляются и другие закономерности этой деятельности, например касающиеся ее правовых, психологических и других основ. Здесь эти закономерности не выделяются, так как являются неотъемлемой частью организационных или методико-криминалистических основ расследования массовых беспорядков. Например, право обоснованно рассматривается в юридической литературе как определяющий фактор и источник методических рекомендаций криминалистики. Кроме особенностей уголовно-процессуального порядка, правовое обеспечение расследования массовых беспорядков в некоторых случаях включает в себя особый правовой режим, который вводится в регионе при чрезвычайных обстоятельствах. На практике это обычно режим чрезвычайного положения. Основное его назначение – создать необходимые условия для стабилизации обстановки, восста-

¹⁴ См. **Возгрин И. А.** Криминалистическая методика расследования преступлений. Минск, 1983, с. 51; «Криминалистика (актуальные проблемы): Учебное пособие». М., 1988, с. 32 и др.

¹⁵ См. **Лавров В. П., Сидоров В. Е.** Расследование преступлений по горячим следам: Учебное пособие. М., 1989, с. 4.

¹⁶ См. **Быков В. М.** Преступная группа: криминалистические проблемы. Ташкент, 1991, с. 42.

¹⁷ См. **Шурухнов Н. Г.** Расследование преступлений, совершаемых осужденными в исправительно-трудовых учреждениях. М., 1992, с. 8–9.

новления законности и правопорядка. Поэтому введение особого правового режима по существу способствует и проведению надлежащего расследования массовых беспорядков, что предопределяет необходимость учитывать его в качестве источника при разработке соответствующей частной криминалистической методики.

Как следует из сказанного, было бы неточным говорить о правовых основах или правовом регулировании расследования массовых беспорядков. Во-первых, такого единого регулирования просто не существует. Во-вторых, правовые нормы касаются не столько самого расследования, сколько преимущественно иных возникающих в связи с ним отношений. В этой ситуации применительно к расследованию массовых беспорядков более точно говорить о праве как источнике криминалистических рекомендаций.

Иными словами, объектом криминалистической концепции – общих положений методик расследований массовых беспорядков – является объективная реальность, а также предмет данных положений – закономерности этой реальности.

От степени общности объективной реальности и ее закономерностей, исследуемых, познаваемых и преобразуемых в общих положениях, зависит степень общности, уровень методик расследований отдельных видов массовых беспорядков. Последние являются продуктом криминалистики, обеспечивающей правоохранительные органы научными рекомендациями по организации и осуществлению расследования однородной группы (типа) преступлений – массовых беспорядков.

Следует заметить, что организация расследования преступлений с точки зрения криминалистики рассматривается как составная часть частной криминалистической методики. Речь при этом идет о традиционных мероприятиях, которые предпринимаются на уровне отдельного уголовного дела: планирование работы следователя, обеспечение квалифицированного руководства следственно-оперативной группой, подборка нормативного и другого необходимого материала и иные организационные мероприятия по уголовному делу, необходимые для успешного раскрытия преступлений. В целях формирования криминалистической концепции расследования массовых беспорядков следует различать организационные основы (или организацию расследования) и собственно методико-криминалистические основы (частную криминалистическую методику).

В то же время мы не согласны с позицией, в соответствии с которой криминалистическая наука должна исследовать организационные меры управленческого характера, как это нередко происходит в последние двадцать лет¹⁸. По нашему мнению, формирование следственных групп для их материально-технического снабжения, обеспечение реального участия различных субъектов в уголовном процессе, организация взаимодействия между правоохранительными органами и местными органами государственной власти и управления, подразделениями внутренних войск, учебных заведений Полиции и Во-

¹⁸ См., напр., Григорьев В. Н. Расследование преступлений в чрезвычайных условиях (правое обеспечение, организация, методика): Дис. ... д-ра юрид. наук. М., 1993.

оруженных сил и т.д. – это объект исследования теории управления в сфере правоохранительной деятельности, предметом которой являются закономерности процесса управления в сфере расследования преступлений, осуществляемого следственными аппаратами и органами дознания, а также организационные аспекты повышения эффективности их деятельности по выполнению этой функции. Данная отрасль теории управления известна в юридической литературе как теория управления органами предварительного следствия.

Все же то, что касается деятельности следователя по конкретному делу, включая и организационные вопросы методического уровня, относится к предмету криминалистической методики. Методико-криминалистические основы как элемент концепции расследования массовых беспорядков складываются из трех компонентов. Во-первых, формируются общие положения методик расследования массовых беспорядков. Во-вторых, разрабатываются частные криминалистические методики, в основе которых находятся специфические ситуации (например, массовые беспорядки в чрезвычайных условиях). В-третьих, сохраняют свое значение методики расследования отдельных видов преступлений – убийств, изнасилований, поджогов, грабежей и т. д.

Содержание общих положений методик расследований массовых беспорядков определяет, с одной стороны, место в криминалистической методике как разделе науки криминалистики, с другой, их связи и отношения с другими общими положениями криминалистической методики, а через них (опосредованно) с частными теориями криминалистики в целом.

Метод общих положений методик расследований массовых беспорядков представляет собой модель познавательных технологий, используемых как для формирования самих положений и методик расследований массовых беспорядков, так и для применения общих положений и разработанных на их основе частных криминалистических методик в практике познания ее предметной области. Эта модель может включать в себя как все методы, известные общей теории криминалистики и криминалистической методики, так и только часть их, если какие-то из специальных методов криминалистики и криминалистической методики в этих положениях не находят своего применения.

Особо важную роль среди методов построения и развития общих положений играют мысленные модели, замещающие в познавательном процессе реальный объект – практику расследования массовых беспорядков.

Такая модель лишь приближенно отражает действительность, так как в ней выделяются лишь существенные связи и отношения объекта (случайные или несущественные факты не берутся в расчет), но зато строго и точно реализуются выводы и рекомендации криминалистической концепции – общие положения методик расследований массовых беспорядков. По мере совершенствования мысленных моделей совершенствуется и объясняющая данная теория, а следовательно, и углубляется научное знание действительности.

Решение этих проблем криминалистической концепции расследования массовых беспорядков таит в себе значительные резервы, реализация которых

позволит многократно повысить оперативность, профессиональный уровень и эффективность следственной практики, более решительно защищать в Армении суверенные права человека и гражданина.

Ключевые слова: концепция, криминалистическая методика, расследование массовых беспорядков, закономерность, рекомендация, правоохранительные органы

ՎԱՀԵ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ – Ձանգվածային անկարգությունների քննության կրիմինալիստիկական հայեցակարգի օբյեկտը և առարկան – Ցանկացած տեսակի հանցագործության քննության մեթոդիկական ամբողջական և հիմնավոր ուսումնասիրելու համար անհրաժեշտ է բացահայտել այն բոլոր օրինաչափությունները, մոտեցումներն ու գաղափարները, որոնք իրենց ամբողջության մեջ այդ տեսակի հանցագործությունների քննության հայեցակարգային հիմքն են: Հեղինակն այս տեսանկյունից ներկայացրել է զանգվածային անկարգությունների քննության մեթոդիկայի հայեցակարգը՝ շեշտադրելով դրա երկու տարրերը՝ օբյեկտը և առարկան: Այս տարրերի ուսումնասիրությունն առանցքային նշանակություն ունի ոչ միայն զանգվածային անկարգությունների քննության մեթոդիկայի և իրավապահ մարմինների գործունեության կատարելագործման, այլ նաև հանցավոր վարքագծի մեխանիզմի և դրան բնորոշ օրինաչափությունների ամբողջական բացահայտման առումով:

Կատարված վերլուծությամբ հեղինակը հիմնավորում է կրիմինալիստիկական ընդհանուր և մասնավոր մեթոդիկականների ձևավորման ու կատարելագործման համար տեսական դրույթների անհրաժեշտությունը:

Բանալի բառեր – *հայեցակարգ, կրիմինալիստիկական մեթոդիկա, զանգվածային անկարգությունների քննություն, օրինաչափություն, հանձնարարական, իրավապահ մարմիններ*

VAHE YENGIBARYAN – The Object and the Subject of Forensic Concept of Investigation Mass Disorders. – For complete and thorough study of any type of crime investigation methodology it is required to identify all the patterns, approaches and ideas that in their whole include the conceptual basis of investigation of such type crimes. In the light of the foregoing the author presents the concept of mass disorder investigation methodic, particularly by emphasizing its two elements: the object and the subject. Research of these two elements is of key importance not only for methodic of investigation of mass disorders and the improvement the activity of law enforcement bodies, but also for the complete disclosure of criminal mechanism and the typical regularities.

As a result of the analysis the author grounds the necessity of theoretical provisions for formation and improvement general and special forensic methods.

Key words: *concept, forensic method, investigation of mass disorders, regularity, recommendation, law-enforcement bodies*

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 338 ՀՈԴՎԱԾՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՍԵՐԳԵՅ ԱՌԱՔԵԼՅԱՆ, ՏԻԳՐԱՆ ԽԱՉԻԿՅԱՆ

Հասարակական հարաբերությունների՝ սահմանադրությամբ կարգավորված և պաշտպանվող կենսաձևն ապահովելու հարցում առանցքային տեղ է գրավում արդարադատության պատշաճ իրականացումը, առանց որի հնարավոր չէ երաշխավորել իրավական պետության գործառնության առաքելության համարժեք իրականացումը: Ակներն է նաև, որ արդարադատության կայացման հարցում միակ դերակատարը պետությունը չէ: Վերջինս իր իրավասու մարմինների միջոցով արդարադատության կենսագործողն է, որում այս կամ այն չափով ներգրավված են նաև այլ սուբյեկտներ, որոնք իրենց առարկայական իրավասության շրջանակներում օժանդակում են դրա իրականացմանը: Ընդ որում, օրենսդիրը նյութադատավարական օրենսդրության տարբեր ակտերով կարգավորել է այն ձևերը, ընթացակարգային կառուցակարգերը, որոնց միջոցով այլ անձինք գործուն մասնակցություն են ունենում արդարադատության իրականացմանը, իսկ բոլոր այն դեպքերում, երբ վերջիններիս կողմից օժանդակության իրենց լիազորությունը գործադրվում է ի չարս, առաջանում են համապատասխան քրեաիրավական հետևանքներ: Դա է պատճառը, որ Հայաստանի Հանրապետության գործող քրեական օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք) առանձին գլուխ է հատկացվել արդարադատության դեմ ուղղված հանցագործություններին, որի շրջանակներում սույն հետազոտության գիտական դիտանկյունում է հայտնվել Օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված հանցակազմը (սուտ ցուցմունք կամ կեղծ եզրակացություն տալը կամ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը): Ինչպես նշում է Լ. Վ. Վոլանովան, դատավարության շրջանակներում հայտնվող սուտ տեղեկությունները առանձնապես մեծ վտանգ են ներկայացնում անհատի, հասարակության և պետության համար, քանի որ իրավապահ մարմինների աշխատանքի որակը մեծապես կախված է ստացվող տեղեկությունների և փաստաթղթերի արժանահավատությունից¹: Այս առումով պետք է համաձայնել այն տեսակետին, որ նշված հանցանքի լրացուցիչ օբյեկտը անձանց, կազմակերպությունների իրավունքների պաշտպանության ապահով-

¹ См. у Лобанова Л. В. Уголовная ответственность за ложную информацию и понуждение к нарушению обязанности содействовать правосудию. Волгоград, 1997, էջ 3:

մանն ուղղված հասարակական հարաբերություններն են²:

Հարկ է նկատել, որ նշված հանցակազմը հայրենական մասնագիտական գրականության շրջանակներում դեռևս բավարար գիտագործնական վերլուծության չի ենթարկվել, որով էլ պայմանավորված են դատախազաքննչական պրակտիկայում առաջացող մի շարք խնդրահարույց իրավիճակներ: Ասվածին գումարվում է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի ձևավորած նախադեպային պրակտիկան, որն ամբողջական տեսամեթոդական լուծում չի ապահովում փակուղային իրավիճակներում: Իր հերթին, հանցակազմի օրենսդրական ձևակերպումը հարուցում է տարբեր մեկնաբանություններ, ուստի անառարկելի է խնդրի վերաբերյալ արդիական գիտական հետազոտություն իրականացնելու անհրաժեշտությունը:

Այսպես, Օրենսգրքի 338 հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում քաղաքացիական կամ վարչական դատավարության գործով սուտ ցուցմունք տալու, քրեական գործով վկայի կամ տուժողի կողմից սուտ ցուցմունք տալու, ինչպես նաև քրեական կամ քաղաքացիական կամ վարչական դատավարության գործով փորձագետի կողմից ակնհայտ կեղծ եզրակացություն տալու, թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար:

Միաժամանակ, նույն հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված հիմքով անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե իր արարքը նշանակություն չէր կարող ունենալ գործի լուծման համար, կամ նա նախնական քննության կամ դատական քննության ընթացքում մինչև դատարանի կողմից դատավճիռ, վճիռ կամ որոշում կայացնելը կամովին հայտնել է իր տված սուտ ցուցմունքի, կեղծ եզրակացության կամ սխալ թարգմանության մասին:

Հանցակազմի, ինչպես նաև դրան վերաբերող խրախուսական նորմի օրենսդրական նման ձևակերպման պայմաններում ի հայտ են գալիս մի շարք հարցադրումներ, որոնք պահանջում են կոնկրետ լուծումներ.

1. Ո՞ր պահից սկսած կարելի է անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցել ՀՀ քր. օր.-ի հոդված 338-ով սահմանված հիմքերով:

2. Խրախուսական բնույթի նորմի կիրառումը ո՞ր քրեական գործով իրականացվող նախնական քննության վրա է տարածվում՝ հիմնական³ (որի շրջանակներում ենթադրաբար տրվել է սուտ ցուցմունքը, կեղծ եզրակացությունը կամ սխալ թարգմանությունը), թե՞ սուտ ցուցմունք տալու հանցակազմով հարուցված քրեական գործի շրջանակներում (այսուհետ՝ անջատված մասով քրեական գործ):

3. Ինչպիսի՞ վավերապայմանների պետք է բավարարեն սուտ

² Տե՛ս «Комментарий к УК РФ». М., 2007, էջ 858:

ցուցմունքը, կեղծ եզրակացությունը կամ սխալ թարգմանությունը քրեաիրավական հետևանքներ առաջացնելու համար:

Վերոհիշյալ հարցադրումներից առաջինի կապակցությամբ նախ և առաջ պետք է նշել, որ քննարկվող հանցակազմի հետ կապված՝ առանձին հետաքրքրություն է ներկայացնում այն հարցի պարզաբանումը, թե որ պահից կարելի է անձի նկատմամբ սուտ ցուցմունք տալու հանցակազմի հիմքով հարուցել քրեական գործ և ձեռնամուխ լինել դրա նախաքննության իրականացմանը: Մեր համոզմամբ, սուտ ցուցմունք տալու հանցակազմով քրեական գործ քննիչը կարող է հարուցել բացառապես այն պարագայում, երբ արդեն իսկ առկա է վարույթը եզրափակող վերջնական որոշում: Ավելին, վերջինս պարտավոր է հարուցել քրեական գործ, եթե հիմնական գործով նախաքննություն իրականացնելիս ձեռք է բերում փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջություն անձի կողմից ենթադրաբար կատարված հանցանքի մասին: Գտնում ենք, որ պետք է հետևողականորեն ապահովվի օրենսդրական պահանջի իրացումը, և քանի դեռ հիմնական քրեական գործով վերջնական որոշում առկա չէ, նպատահարմար չէ նաև անձի նկատմամբ միաժամանակյա մեկ այլ գործով իրականացնել նախաքննություն: Հակառակ դեպքում հիմնական քրեական գործի քննության ընթացքում համապատասխան մասի անջատումն ուղղակիորեն կխաթարի անձի արդար դատաքննության սահմանադրական իրավունքը: Ըստ որում, սույն եզրահանգումը մասամբ համահունչ է ՀՀ վճարելի դատարանի որոշմամբ արտահայտված դիրքորոշմանը այն առումով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված սուտ ցուցմունք տալու հանցակազմի առկայության կամ բացակայության մասին հնարավոր կլինի հետեւվության հանգել միայն համապատասխան դատական ակտը կայացնելուց հետո:

Պահպանելով ՀՀ վճարելի դատարանի արտահայտած հայեցակարգային նշանակության այն դրույթը, որ անձի նկատմամբ սուտ ցուցմունք տալու հիմքով կարող է քրեական գործ հարուցվել բացառապես որևէ վերջնական որոշման առկայության պարագայում՝ առաջարկում ենք օրենսդրորեն ամրագրել ոչ միայն դատական ակտի, այլև ցանկացած այլ՝ վերջնական բնույթ կրող որոշման բացակայության դեպքում անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու³ արգելք:

Ընդ որում, մեր համոզմամբ, քրեական պատասխանատվության ենթարկվելու նշված սահմանափակումը պետք է ուղղակիորեն տարածվի ինչպես տուժողի կողմից սուտ ցուցմունք տալու դեպքերի, այն-

³ «Քրեական հետապնդման հարուցում» արտահայտությունը սույն աշխատանքում գործածվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով դրան տրված իրավական բնորոշմամբ, քանի որ նշված եզրույթի հասկացութային բովանդակության ճշգրտումը սույն հետազոտության առարկայի շրջանակներից դուրս է:

պէս էլ փորձագետի կողմից կեղծ եզրակացություն կազմելու կամ թարգմանչի կողմից սխալ թարգմանություն կատարելու դեպքերի վրա: Խրախուսական նորմը պետք է ամբողջապէս գործի ինչպէս տուժողի, այնպէս էլ փորձագետի և թարգմանչի նկատմամբ՝ ապահովելով կարգավորման որոշակիությունը և իրավական պատվիրանի ամբողջական իրացումը:

Բացի այդ, հարկ է նկատի ունենալ նաև այն իրողությունը, որ ՀՀ բարձրագույն դատական ատյանը նշված դիրքորոշումը հայտնել է այն պարագայում, երբ հիմնական գործով քննությունն արդեն իսկ թևակոխել էր դատաքննության փուլ: Բնական է, որ նման պայմաններում Վճռաբեկ դատարանի նշված որոշման գործողությունը չի կարող տարածվել այն դեպքերի վրա, երբ հիմնական քրեական գործը չի տեղափոխվում դատական քննություն: Ակներև է, որ սուտ ցուցմունք, կեղծ եզրակացություն կամ սխալ թարգմանություն կատարելու հանցակազմի առկայության հարցը չի կարող կախվածության մեջ դրվել օբյեկտիվ պատճառներով գործով վարույթը դատաքննություն չսեղափոխվելու փաստից: Տեսական հայտնի դրույթ է, որ քրեադատավարական իրավունքի նորմերով սահմանված ընթացակարգերի բացակայությամբ չի կարող որոշվել արարքի հանցավորությունը: Քրեադատավարական իրավունքը կոչված է սուկ կարգավորելու ենթադրյալ հանցանքի քննության իրականացման կարգը՝ չշոշափելով նյութական իրավունքին վերաբերող հարցերը: Այլ կերպ ասած՝ քրեադատավարական իրավունքը չի կարող քրեական օրենքի հատուկ մասով նախատեսված արարքի կատարման համար պատասխանատվության ենթարկվելու լրացուցիչ վավերապայմաններ նախատեսել: Եթե գործով ձեռք բերված հավաստի ապացույցներով հիմնավորվում է անձի կողմից սուտ ցուցմունք տալու փաստը, ապա բացակայում է քրեական պատասխանատվության ինստիտուտը չիրացնելու որևէ պայման:

Ընդ որում, նման մեկնաբանման հնարավորություն ապահովում է նաև օրենսդիրը: Այսպէս, «նախնական քննության կամ դատական քննության ընթացքում մինչև դատարանի կողմից դատավճիռ, վճիռ կամ որոշում կայացնելը» արտահայտությունն ամենևին չի ենթադրում, որ հիմնական քրեական գործով պետք է առկա լինի բացառապէս դատական ակտ: Նշված օրինադրույթի բովանդակությունից բխում է, որ օրենսդրի կամքը հանգել է բացառապէս վարույթն ավարտող եզրափակիչ դատավարական փաստաթղթի հիման վրա ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով քրեական գործ հարուցելուն: Եվ այս համատեքստում որևէ նշանակություն չունի նշված դատավարական որոշումը կազմվել է դատաքննության, թե՛ նախաքննության, դատարանի, թե՛ վարույթն իրականացնող այլ մարմնի կողմից: Ասվածը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ նախնական քննության փուլում գործով վարույթը այսպէս թե այնպէս չի կարող

դադարել դատարանի որոշման հիման վրա: Հետևապես, հակառակ տրամաբանությամբ ուղղորդվելու պարագայում «որոշում» եզրույթի մատնանշումն օրենսդրությամբ անիմաստ կլիներ: Մինչդեռ օրենսդիրը յուրաքանչյուր եզրույթին տվել է ինքնուրույն իրավական նշանակություն և համարժեք բովանդակություն, ինչը չի կարող անտեսվել նորմը մեկնաբանելիս: Մեր համոզմամբ, հիշատակված օրինադրույթի մեջ մատնանշված «որոշում» բառը վերաբերում է նույն օրինադրույթում գործածված «նախնական քննության» փուլին այնքանով, որքանով նախնական քննության փուլում քրեական գործով վարույթը դատարանի կողմից կայացվող որոշմամբ չի կարող ավարտվել:

Հետևապես գտնում ենք, որ Վճռաբեկ դատարանի դիրքորոշումն ամեննին չի հակասում խնդրի օրենսդրական կարգավորմանը և դրա վերաբերյալ մեր մոտեցմանն այնքանով, որքանով այն վերաբերում է բացառապես այն գործերին, որոնցով վարույթն արդեն իսկ տեղափոխվել է դատաքննություն: Մինչդեռ, երբ այն կարճվել է նախնական քննության փուլում, և առկա է անձի կողմից սուտ ցուցմունք տալը հաստատող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջություն, լիովին առկա են քննարկվող հոդվածի հատկանիշներով քրեական գործ հարուցելու վավերապայմանները:

Սույն ուսումնասիրության օբյեկտ համարվող հանցակազմի օրենսդրական ձևակերպման շրջանակներում օրենսդիրը չի կոնկրետացրել էլակետային նշանակություն ունեցող այն հարցը, թե որ պահն է համարվում խրախուսական նորմի կիրառման վերջնաժամկետ: Մինչդեռ նշված հարցադրումը գործնական ծանրակշիռ նշանակություն ունի՝ պայմանավորված այն իրողությամբ, որ հաճախ քրեական գործերի քննության ընթացքում տուժողների կողմից տրվում են իրականությանը ակնհայտ չհամապատասխանող տեղեկություններ, որոնց անարժանահավատ բնույթը հիմք է տալիս հարուցելու առանձին քրեական գործ և դրա քննությունն իրականացնելու առանձին վարույթի շրջանակներում: Նման պայմաններում պարզ չէ, թե որ պահից սկսած իրավաբանորեն այլևս չի արժևորվում խրախուսական նորմի կատարումը:

Մեր համոզմամբ, քրեական օրենսգրքով նախատեսված խրախուսական բնույթի նորմերի կիրառման ժամանակ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է գնահատման առարկա դարձնել այն հարցը, թե խրախուսական նորմի կատարմամբ որ հասարակական հարաբերություններին անմիջականորեն սպառնացող վնասն է կանխվել կամ հասցվել նվազագույնի: Ակներև է, որ խրախուսական բնույթի նորմերի էությունը հենց հնարավոր քրեաիրավական պատասխանատվության իրացումը կանխելն ու արարքի հանրային վտանգավորությունը բացառելը կամ նվազեցնելն է: Գտնում ենք, որ անձի համար նշված բարենպաստ իրավական հետևանքին կարելի է հասնել բացառապես այն գործի շրջա-

նակներում անձի ինքնախոստովանական ցուցմունքի պարագայում, որով կատարվել է քննարկվող հակաիրավական գործողությունը:

Ելնելով վերը ասվածից, կարելի է արձանագրել, որ սուտ ցուցմունքի, կեղծ եզրակացության կամ սխալ թարգմանություն կատարելու մասին հայտնելը անձի համար կարող է չառաջացնել անբարենպաստ քրեաիրավական հետևանքներ բացառապես այն պարագայում, երբ այն իրականացվել է հիմնական քրեական գործի շրջանակներում՝ մինչև վերջնական բնույթի վարույթային ակտի կայացումը: Նման մոտեցումը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ անձի տված սուտ ցուցմունքի, սխալ եզրակացության կամ կեղծ թարգմանության հանրորեն վտանգավոր հետևանքները դրսևորվել են բացառապես այն գործի շրջանակներում, որում տրվել է սուտ ցուցմունքը, կազմվել թարգմանությունը կամ եզրակացությունը: Հակառակ պարագայում, նշված գործողությունների կատարումն առանց ուղեկցող հանրորեն վտանգավոր հետևանքների, քրեական օրենքով ինքնին դատապարտելի արարք չէ: Օրենսդիրը նշված արարքների համար սահմանել է քրեական պատասխանատվություն՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ դրանք խաթարում են արդարադատության բուն էությունը, վարույթի օրինական շարժընթացի համար հարուցում անհաղթահարելի խոչընդոտներ և ի վերջո դրվում կայացվող որոշումների հիմքում: Քննարկվող համատեքստում խրախուսական նորմի օրենսդրական ամրագրումը նպատակ է հետապնդում չեզոքացնել անձի արարքի հակաիրավականությունը՝ այն հանգամանքը հաշվի առնելով, որ իր ակտիվ գործողություններով վերջինս բացառել է կամ նվազագույնի է հասցրել արարքի պարսավելիությունը:

Ուստիև, թեպետ ՀՀ քր. օր.-ի քննարկվող հոդվածի տառացի մեկնաբանությունն ուղղակիորեն չի տալիս այդ հնարավորությունը, այսուհանդերձ գտնում ենք, որ խրախուսական նորմի կատարումը կարող է անձին ազատել քրեական պատասխանատվությունից բացառապես այն պարագայում, երբ վերջինս հիմնական գործի շրջանակներում է խոստովանել տրված ցուցմունքի կամ եզրակացության կամ թարգմանության սուտ կամ կեղծ լինելը:

Ընդ որում, անհրաժեշտ է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով քննարկվող հիմնախնդրին, արտահայտել է սկզբունքային իրավական դիրքորոշում, որի համաձայն՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 338 հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավադրույթի լույսի ներքո նույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերի մեկնաբանությունից բխում է, որ «հիմնական գործի քննության ընթացքում, ընդհուպ մինչև դատարանի կողմից վերջնական դատական ակտ կայացնելը, անձը հնարավորություն ունի հարցաքննվելու և այլ ցուցմունք տալու կամ կարող է հայտնել իր տված ցուցմունքի սուտ

լինելու մասին: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված երկու դեպքերում էլ, քանի դեռ իրագործված չեն օրենսդրի կողմից առաջադրված պայմանները, խոսք չի կարող լինել սուտ ցուցմունք տալու հանցակազմի առկայության մասին»⁴:

Նման լուծումը, կարծում ենք, բխում է նաև քրեական օրենսգրքում խրախուսական բնույթի նորմերի ամրագրման տրամաբանությունից և համապատասխանում է իրավունքի տվյալ ճյուղի սկզբունքներին:

Քննարկվող հանգամանքների լույսի ներքո առաջ է գալիս մեկ այլ խնդիր ևս: Առանձին դեպքերում գործով վարույթն ավարտվում է նախնական քննության ընթացքում, և գործով վարույթը չի տեղափոխվում դատական քննության փուլ: Նման պայմաններում ստացվում է այնպես, որ նախնական քննության փուլում գործի վարույթի կարճումը բացառում է խրախուսական նորմի կիրառումն այնքանով, որքանով նախաքննության փուլում կայացվող վարույթային ակտն ինքնին դատական ակտ չէ: Մինչդեռ, Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ որոշման համաձայն՝ հենց դատական ակտի՝ օրինական ուժի մեջ մտնելն է համարվում քննարկվող խրախուսական նորմի կատարման վերջնաժամկետ:

Մեր կարծիքով, սույն պարագայում օրենսդրական կարգավորումն ակնհայտորեն ենթակա է վերանայման, քանզի բացակայում է նորմի և դրանով հետապնդվող նպատակի միջև անհրաժեշտ իրավական համամասնությունը: Այսպես, օրենսդիրը նման նորմի ամրագրմամբ նպատակ է հետապնդել նախանշելու այն վերջնաժամկետը, որից հետո անձի հայտարարությունը չի կարող նրան քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք լինել: Օրենսդրական կարգավորման տիրույթից պարզապես դուրս է մնացել այն հանգամանքը, որ առանձին դեպքերում վարույթը կարող է վերջնական բնույթ ստանալ մինչդատական փուլում կայացվող և եզրափակող բնույթի ակտերի միջոցով, որոնք բովանդակային առումով հավասարեցվում են վերջնական դատական ակտերին: Հետևաբար, խրախուսական նորմի կիրառման վերջնաժամկետն ամեննին չպետք է կապվեր բացառապես դատական քննության փուլի հետ:

Այստեղից հետևում է, որ անձին քրեական պատասխանատվությունից ազատելու խրախուսական նորմի կիրառման ավարտը պետք է կապել ոչ թե կոնկրետ դատավարության փուլի, այլ կայացվող որոշման բնույթի հետ՝ գնահատելով վարույթի համար դրա վերջնական լինելու հարցը: Բոլոր դեպքերում, վարույթը եզրափակող ակտը կայացնելուց հետո, անկախ դրա փուլից, այլևս չպետք է գործի խրախուսական նորմը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ անձի կատարած արարքն արդեն իսկ առաջացրել է համապատասխան քրեաիրավական

⁴ Տե՛ս 27.08.2010 թ. ՀՀ վճռաբեկ դատարանի ԼԴ/0301/01/09 քրեական գործով կայացված որոշումը, www.datalex.am:

հետևանքներ և դրվել է կայացված վարույթային ակտի հիմքում: Մինչդեռ վերջինս, հնարավորություն ունենալով մինչև այդ ակտի կայացումը հայտնելու տրված ցուցմունքի (եզրակացության, թարգմանության) սուտ կամ կեղծ լինելու մասին, չի օգտվել այդ հնարավորությունից, չի իրականացրել անհրաժեշտ հանրօգուտ վարքագիծ՝ դրսևորելով ակնհայտ հակահասարակական դիրքորոշում, ինչն էլ նշված հանցակազմն առաջացնելու համար լիովին բավարար է:

Կարծում ենք, որ նման պայմաններում անջատված մասով քրեական գործի շրջանակներում անձի հայտարարությունն իր կողմից տրված ցուցմունքի (եզրակացության, թարգմանության) սուտ կամ կեղծ լինելու մասին կարող է գնահատվել որպես պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանք, և անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից ՀՀ քրեական օրենսգրքի 72-75 հոդվածներով սահմանված ընդհանուր հիմունքներով: Առաջարկվող մոտեցումը, մեր համոզմամբ, առավելապես համապատասխանում է իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին:

Առաջարկվող գործնական լուծումների համատեքստում ծագում է իրավական մեկ այլ հարցադրում. ինչպիսի՞ ընթացք տալ հիմնական գործին այն պարագայում, երբ անջատված մասով քրեական գործի շրջանակներում անձը հայտնել է իր կողմից տրված ցուցմունքի (եզրակացության, թարգմանության) սուտ կամ կեղծ լինելու մասին: Խնդիրն այն է, որ գործող օրենսդրությունն ուղղակիորեն չի նախատեսում նոր երևան եկած հանգամանքի հիմքով քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում կայացվող վերջնական որոշման վերանայման հնարավորություն:

Սահմանադրական դատարանը, 04.02.2011թ. ՍԴՈ-935-Ն իր որոշման պատճառաբանական մասի 6-րդ կետում անդրադառնալով քննարկվող հիմնախնդրին, արձանագրել է իրավական դիրքորոշում. «...գործնականում առաջին հերթին հանցագործության հետևանքով տուժած անձի իրավունքների ու արժանապատվության խախտում պետք է դիտարկվի այն, որ օրենսդրության մեջ բացակայում է նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հիմքով քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում կայացված՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին վերջնական որոշումների վերանայման մեխանիզմը»⁵:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քրեական հետապնդման մարմնի՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը, եթե այն կարող է հանգեցնել անձի

⁵ 04.02.2011 թ. ՍԴՈ-935-Ն որոշումը, www.concourt.am

վիճակի վատթարացման, բացառությամբ սույն հոդվածի չորրորդ մասով նախատեսված դեպքերի:

Միաժամանակ, նույն հոդվածի 4-րդ մասն ամրագրում է նաև, որ հոդվածի երկրորդ և երրորդ մասերի կանոնները չեն գործում սույն օրենսգրքի 12¹ բաժնով (նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայում) նախատեսված դեպքերում:

Վկայակոչված իրավադրույթների բովանդակային-համադրված վերլուծությունից ուղղակիորեն բխում է, որ օրենսդիրն անուղղակիորեն նախատեսել է իրավական հնարավորություն նոր երևան եկած հանգամանքերի հիմքով վերանայման ենթարկելու նաև մինչդատական վարույթի շրջանակներում կայացված «գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումները»: Հակառակ դեպքում, եթե առաջնորդվենք այն տրամաբանությամբ, որ նոր երևան եկած հանգամանքի հիմքով վերանայման է ենթակա բացառապես դատական ակտը, ապա բոլորովին անիմաստ էր ՀՀ քր. դատ. օր.-ի 21 հոդվածի 4-րդ մասով սահմանված բացառությունը: Ակներև է, որ այս դրույթը բացառապես վերաբերում է մինչդատական վարույթի շրջանակներում կայացվող ոչ դատական որոշումներին այնքանով, որքանով հոդվածի շարադրանքում գործածված է «քրեական հետապնդման մարմին» բառակապակցությունը: Մինչդեռ ՀՀ քր. դատ. օր.-ի 6 հոդվածի 22-րդ կետի համաձայն՝ քրեական հետապնդման մարմիններ են համարվում դատախազը (մեղադրողը), քննիչը, հետաքննության մարմինը: Հետևապես, նշված օրինադրույթի շրջանակներում օրենսդիրը նկատի է ունեցել այն դեպքերը, երբ «գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումները» կայացվում են մինչդատական վարույթում: Բնականաբար, ՀՀ քր. դատ. օր.-ի 21 հոդվածի 4-րդ մասով օրենսդիրը, նախատեսելով բացառություն, անուղղակիորեն իրավական հիմքեր է ապահովել նաև մինչդատական վարույթի ընթացքում վերջնական որոշումները նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերանայման ենթարկելու համար:

Այսպիսով, կարծում ենք, որ օրենսդրությամբ առկա են համարժեք կառուցակարգեր նախաքննության փուլում կայացված վարույթն ավարտող որոշումները՝ նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերանայելու համար: Հետևապես, առաջարկվող իրավակարգավորման պարագայում որևէ դատավարական շահ ՀՀ քր. դատ. օրենսդրությամբ սահմանված կառուցակարգերի շրջանակներում անմիջական վտանգի չի ենթարկվում:

Բնականաբար, քրեական գործի հարուցման պահի և խրախուսական նորմի կենսագործման ելակետային հարցադրումները քննարկելուց զատ, էական նշանակություն ունի նաև այն հարցի պարզաբանումը, թե ինչպիսի վավերապայմանների պետք է բավարարի ցուցմունքը

քրեախրավական հետևանքներ առաջացնելու համար:

Փաստորեն, հարուցված քրեական գործով վարույթի շրջանակներում քրեական պատասխանատվություն է առաջացնում այն ցուցմունքը,

– որը տվել է տուժողը կամ վկան,

– որն էական նշանակություն է ունեցել քրեական գործը լուծելու հարցը որոշելիս:

Այս համատեքստում առանձին հետաքրքրություն է ներկայացնում հատկապես երկրորդ հատկանիշի քննարկումը: Բանն այն է, որ օրենսդիրը ՀՀ քր. օր.-ի հոդված 338-ում գործածում է ոչ թե «էական նշանակություն» արտահայտությունը, այլ պարզապես «նշանակություն» բառը, ինչը, գտնում ենք, համադրելի չէ սույն հանցակազմի էությանը: Մեր կարծիքով, ամեն սուտ ցուցմունք չէ, որ ունի քրեածին նշանակություն, և որը տալու դեմ պետք է պայքարել քրեական քաղաքականության գործիքակազմերով: Ցուցմունքը համարվում է սուտ, եթե դրանում ամբողջությամբ կամ մասնակիորեն խեղաթյուրված են այն փաստերը, որոնք էական նշանակություն ունեն գործի լուծման համար: Ցուցմունքի սուտ լինելը նշանակում է իրականության հետ դրա բովանդակային անհամապատասխանություն:

Ուստի, գտնում ենք, որ քրեախրավական հետևանքներ կարող է առաջացնել բացառապես այն սուտ ցուցմունքը, որը էական նշանակություն է ունենում քրեական գործը լուծելու համար, դրվում է տվյալ գործով որոշման հիմքում: Ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ, հանցավոր կարող է համարվել միայն այն սուտ ցուցմունքը, որը վերաբերում է ապացուցման առարկային, գոյություն ունեցող, առկա հանգամանքներին և կարող է ազդել օրինական ու հիմնավորված դատական ակտ կայացնելու վրա⁶: Հակառակ դեպքում, ըստ օրենքով սահմանված պահանջների, եթե տրված ցուցմունքը ողջամտորեն էական նշանակություն չէր կարող ունենալ քրեական գործի ճակատագիրը որոշելու իմաստով, այն չպետք է առաջացնի ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված հանցակազմի իրավական հետևանքները:

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը՝ առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 338-ի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված հիմքով անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե իր արարքն էական նշանակություն չէր կարող ունենալ գործի լուծման համար, կամ նա հիմնական գործի դատական քննության կամ նախնական քննության ընթացքում մինչև վարույթն իրականացնողի կողմից դատավճիռ, վճիռ կամ որոշում կայացնելը կամովին հայտնել է իր տված սուտ ցուցմունքի, կեղծ եզրակացության կամ սխալ թարգմանության մասին...»:

⁶ Ст' у Говорков Н. Лжесвидетели // Законность. 2005, № 1, էջ 34:

Սույն հոդվածով հիմնական է համարվում քրեական, քաղաքացիական կամ վարչական այն գործը, որի շրջանակներում տրվել է սուտ ցուցմունքը, կեղծ եզրակացությունը, կամ կատարվել է սխալ թարգմանությունը:

Հույս ունենք, որ խնդրո առարկա հանցակազմի հետագա կատարելագործմանն ուղղված մեր առաջարկները մոտ ապագայում կարժանանան հայ օրենսդրի ուշադրությանը, հաշվի կառնվեն նրա կողմից և կնպաստեն դատախազաքննչական պրակտիկայում առաջացող մի շարք փակուղային իրավիճակներն արդյունավետ լուծելուն:

Բանալի բառեր – *սկնհայտ սուտ ցուցմունք, վկա, տուժող, հիմնական քրեական գործ, փորձագետի եզրակացություն, քրեական պատասխանատվություն, հանցակազմ*

СЕРГЕЙ АРАКЕЛЯН, ТИГРАН ХАЧИКЯН – Основные направления совершенствования состава преступления, предусмотренного ст. 338 Уголовного кодекса Республики Армения. – В статье уточняется состав преступления, предусматривающего уголовную ответственность за заведомо ложные показания и заключение эксперта или неправильный перевод (ст. 338 УК РА). В частности, отмечается, что названные преступные деяния препятствуют достижению истины в уголовном и гражданском судопроизводстве. Тем не менее факты лжесвидетельства в нашей стране далеко не всегда получают необходимую уголовно-правовую оценку, что снижает авторитет правосудия. В статье теоретически обосновывается решение возникающих в следственной практике проблем, связанных с оценкой достоверности доказательств и возможностью возбудить уголовное дело по признакам ст. 338 УК РА. Даются конкретные рекомендации, как эффективно решить указанные проблемы.

Ключевые слова: *заведомо ложное показание, свидетель, потерпевший, основное уголовное дело, заключение эксперта, уголовная ответственность, состав преступления*

SERGEY ARAKELYAN, TIGRAN KHACHIKYAN – The Main Directions of the Improvement of the Corpus Delicti Provided by the Art. 338 of the Republic of Armenia Criminal Code. – The article discusses actual problems of improvement of corpus delicti which provides criminal responsibility for false testimony, expert opinion, or mistranslation (Art. 338 of RA Criminal Code). In particular, it is mentioned that these criminal acts hinder the achievement of truth in criminal and civil proceedings. At the same time, in the present conditions the facts of perjury do not always receive the necessary criminal and legal assessment, thus hampering the strengthening of the authority of the judiciary in our country.

In this context, the main theoretical and practical importance of this paper is the effort theoretically to justify the solutions of the problems occurring in the investigative practice of Republic of Armenia connected to the evaluation of the reliability of the relevant evidences and the possibility of instituting criminal proceedings on the grounds of the article 338 of RA Criminal Code. In this regard, certain scientifically based proposals for an effective solution to the above mentioned problems are proposed by the authors.

Key words: *false testimony, the witness, the victim, the main criminal case, expert opinion, criminal responsibility, corpus delicti*

ТЕНДЕНЦИИ И СТРУКТУРА МОЛОДЕЖНОЙ РЕЦИДИВНОЙ ПРЕСТУПНОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

ТИГРАН СИМОНЯН

Криминологическая обстановка в Армении на протяжении последних 10–15 лет остается крайне напряженной. Кризис армянской уголовной политики и неадекватные меры противодействия продолжающим набирать силу криминогенным процессам обусловили целый ряд отрицательных тенденций.

Социальная структура общества, все ее составные подсистемы поражены криминалом, что прослеживается не столько в статистической отчетности правоохранительных органов, сколько в том, как население воспринимает уровень различных криминальных угроз, состояние и интенсивность криминального насилия, обеспечение безопасности личности, результативность правоохранительной системы в борьбе с преступностью¹.

Рецидивная преступность, будучи составной частью общей преступности, является ее системообразующим элементом. В целом она обуславливает относительную устойчивость преступности как социального явления и выступает условием совершения новых преступлений².

Выделение рецидивной преступности в качестве самостоятельного вида продиктовано не только криминологическими аспектами, во главу угла которых положен анализ тенденций и закономерностей ее развития, изучение эффективности уголовного законодательства и практики его применения, учет криминогенного комплекса и мер профилактики рецидива, но также разработка методов и способов предупреждения повторных преступлений³.

Нужно иметь в виду, что законодательство любой страны считает рецидив обстоятельством, отягчающим наказание. По уголовному закону многих стран это чаще всего проявляется в увеличении его размера по сравнению со случаями, когда в действиях осужденного отсутствует рецидив преступлений. Подобное увеличение отражается, в частности, в: 1) удвоении максимального срока наказания, установленного за совершение данного преступления (УК Норвегии, Франции, Японии); 2) повышении наказания в границах максимального срока, предусмотренного для данного вида наказания (УК Швейцарии); 3) увеличении срока наказания на определенную часть (например, по УК Турции – на 1/6 за совершение разнородных преступлений и от 1/6 до 1/3 – за совершение однородных преступлений)⁴.

¹ См. **Аржаная К. В.** Криминологическая характеристика современной рецидивной преступности и ее предупреждение. Дис. ... канд. юрид. наук. Ростов-на-Дону, 2008, с. 13.

² См. **Агамов Г.** Правовые и социальные проблемы предупреждения рецидивной преступности // «Уголовное право», 2001, № 3.

³ См. **Ефимов М. А.** Рецидивная преступность и ее предупреждение. Минск, 1997, с. 18.

⁴ См. **Батыргареева В. С.** Закрепление института рецидива преступлений в уголовном законодательстве зарубежных государств // «Государство и право», 2005, № 4, с. 47.

Таким образом, специфика рецидивных преступлений, их тенденция к росту (что не отражено в официальной статистике в РА) обуславливают необходимость предметного изучения рецидивной преступности в целом и, в частности, молодежной рецидивной преступности и ее современного состояния.


Нужно отметить, что рецидивисты – это активные носители и распространители уголовной субкультуры и традиций преступной среды. Они негативно влияют на социально неустойчивых лиц (особенно из числа молодежи), склонных к девиантному поведению, подрывая своим примером уважение к закону, втягивая их в совершение преступлений. Сама преступная деятельность рецидивистов, как правило, характеризуется особой интенсивностью, повышенной общественной опасностью, целенаправленностью и изощренностью⁵.

В этом контексте следует рассмотреть молодежную рецидивную преступность в Армении. Ее опасность очень высока, совершение рецидивного преступления свидетельствует об углублении и закреплении антиобщественных настроений у молодых преступников⁶. Для оценки объективного состояния молодежной рецидивной преступности в Армении важно выявить ее долю в структуре рецидивной преступности в целом. (См. нижеследующие таблицы и графики.)

Таблица 1

Год	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012
Общ. Рец. Прес	1190	939	818	611	541	606	602	542	443
Рец. Молод. Прест.	407	283	246	174	174	163	149	123	128

График 1



⁵ См. Шевченко В. Ф. Уголовно-правовая и криминологическая характеристика рецидивной преступности: на материалах Санкт-Петербурга: Дис. ... канд. юрид. наук. М., 2003, с. 3.

⁶ См. Муравьев В. В. Уголовно-правовые и криминологические аспекты рецидивной преступности молодежи. Автореф. дис. ...канд. юр. наук. Н. Новгород, 2001.

Из приведенных данных видно, что как рецидивная преступность в целом, так и молодежная рецидивная преступность за последние годы имеют тенденцию к снижению, что, по моему мнению, странно. Множество негативных факторов (тяжелая социально-экономическая ситуация, политическая нестабильность и т. д.) свидетельствуют, что как рецидивная преступность, так и молодежная рецидивная преступность в нашей стране должны расти, а не снижаться. Из официальных данных ясно также, что молодежная рецидивная преступность занимает значительную долю общей рецидивной преступности. В 2004 году эта доля составляла 34%, в 2005-м – 30%, 2006-м – 30%, 2007-м – 28%, 2008-м – 32%, 2009-м – 27%, 2010-м – 25%, 2011-м – 23%, 2012-м – 29%. Это прямо свидетельствует о криминальной активности молодежи в Армении и об опасности реального (а не статистического) роста молодежной рецидивной преступности.

Что касается структуры молодежной рецидивной преступности, то она выглядит следующим образом.

Таблица 2

Структура рецидивной молодежной преступности в РА в 1993–2001 гг.

Преступления	Годы									
	1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	
Убийства с отягчающими обс.	13	7	10	5	8	2	1	2	3	
Умышл. причин. тяжкого вреда здоровью	2	3	4	4	3	9	6	2	5	
Умышл. причин. легкого вреда здор.	8	6	10	14	23	21	23	31	70	
Изнасилование	3	3	1	2	2	3	0	1	0	
Хулиганство	15	18	22	7	15	18	12	26	38	
Незаконное приобр, хранение, перевозка наркотиков	7	11	17	8	4	13	8	12	11	
Незаконное приобр, хранение, перевозка оружия, взрывч..	89	90	48	41	42	44	43	32	37	
Уклонение от действ. воинской службы	-	2	5	13	7	2	6	2	2	
Кража	100	88	48	79	68	75	30	42	38	
Грабеж	18	10	7	5	6	2	7	6	7	
Разбойное нападение	22	15	12	17	18	19	12	14	9	

После изменения формы статистической информации ИЦ Полиции РА в связи с принятием нового УК структура молодежной рецидивной преступности следующая:

Таблица 3

Структура рецидивной молодежной преступности в РА в 2004–2012 гг.

Преступления	Годы									
	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	
1. Убийство (в том числе убийство при отягчающих обст).	9	3	2	1	6	3	1	0	2	
2. Покушение на убийство	0	0	0	0	0	0	1	1	1	
3. Умышл. причин. тяжкого вреда здоровью	17	7	10	10	7	10	7	1	3	
4. Умышл. причин. сред. тяжести вреда здоровью	19	16	12	8	2	6	3	1	5	
5. Изнасилование и покушения на изнасилование	3	1	4	2	1	0	0	4	0	
6. ДТП (в том числе со смерт. исходом)	1	3	2	2	13	3	2	3	0	
7. Незаконное приобр, хранение, перевозка наркотиков, хищение нарк. средств	19	16	19	14	24	17	20	15	18	
8. Хулиганство	40	26	22	12	24	11	15	10	9	
9. Разбойное нападение	27	14	14	12	8	9	12	1	4	
10. Грабеж	19	17	13	11	16	15	10	9	3	
11. Кража	195	134	122	86	79	65	57	60	47	
12. Мошенничество	17	12	11	10	7	11	10	4	12	
13. Вымогательство	2	0	1	1	2	1	2	1	3	
14. Угон автомобиля...	12	11	9	5	4	3	1	2	3	
15. Присвоение или растрата	2	1	0	1	1	0	2	0	1	
16. Взяточничество	0	0	0	0	0	0	0	0	0	

Как видно, почти по всем видам вышеуказанных преступлений наблюдается тенденция к снижению, что парадоксально, поскольку молодежь является одной из самых криминально активных социальных групп.

Исключение составляют хулиганство и умышленное причинение вреда здоровью, по которым ситуация относительно стабильна, а иногда наблюдается рост. Обращает на себя внимание резкий скачок рецидива краж, который произошел в 2004 году. Затем наблюдается резкое снижение, что тоже парадоксально. Предполагается, что здесь тоже на статистику влияют вышеука-

занные отрицательные факторы и, по нашему мнению, возможно, что реальная картина рецидивной преступности среди молодежи нашла неправильное отражение. Из представленных данных и исследований, проведенных на их основе, видно, что уровень рецидивной молодежной преступности был стабильным и в основном проявил тенденцию к снижению. Такие тенденции более чем странны для нашей страны и, по моему мнению, не связаны с объективными причинами, хотя не исключено, что на фоне массовой миграции молодежи это снижение имеет объективный характер.

Но в целом нужно констатировать, что в названный промежуток времени в РА не происходили социально-экономические, политические или какие-либо другие положительные изменения, которые могли бы вызвать спад молодежной преступности в целом и рецидивной в частности. Здесь, по всей видимости, работает субъективный фактор, так как негативная социально-экономическая ситуация, безработица, миграция, политическая нестабильность являются реальными предпосылками для роста преступности, в особенности рецидивной преступности молодежи, а не для ее снижения. Таким образом, официальная статистика лишь свидетельствует о неэффективной работе правоохранительных органов и росте латентной рецидивной преступности среди молодежи.

Ключевые слова: *молодежная рецидивная преступность, носители уголовной субкультуры, девиантное поведение, структура рецидивной молодежной преступности, тенденции молодежной преступности*

ՏԻԳՐԱՆ ՄԻՄՈՆԻՅԱՆ – Երիտասարդների ռեցիդիվային հանցավորության միտումները և կառուցվածքը Հայաստանի Հանրապետությունում – Հոդվածում նշվում է, որ ՀՀ-ում վերջին տարիներին երիտասարդների շրջանում նկատվում են մի շարք անբարենպաստ գործոններ, որոնք կարող են էականորեն ազդել ինչպես ընդհանուր հանցավորության, այնպես էլ ռեցիդիվային և հատկապես երիտասարդների ռեցիդիվային հանցավորության միտումների վրա: Երիտասարդների ռեցիդիվային հանցավորությունը հատկապես վտանգավոր է, քանի որ այն նպաստում է ընդհանուր ռեցիդիվային հանցավորության հետագա աճին: Բացի այդ, երիտասարդների միջավայրում հանցավոր ենթամշակույթն ավելի դյուրին է տարածվում, իսկ ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակը նպաստում է ինչպես շահադիտական շարժառիթի արդիականացմանը, այնպես էլ ֆրուստրացիոն գործոնների ուժեղացմանը, որոնց հանցածին նշանակությունը ակնհայտ է: Կատարված ուսումնասիրության հիման վրա հեղինակը հանգել է այն եզրակացության, որ պաշտոնական վիճակագրությունը չի արտացոլում երիտասարդների ռեցիդիվային հանցավորության իրական պատկերը. իրավապահ համակարգում առկա են թերություններ, իսկ ռեցիդիվային հանցավորությունը լատենտայնության աճ է գրանցում:

Բանալի բառեր – *երիտասարդների ռեցիդիվային հանցավորություն, հանցավոր ենթամշակույթի կրողներ և տարածողներ, դնիանտ (շեղվող) վարքագիծ, երիտասարդների ռեցիդիվային հանցավորության միտումներ, երիտասարդների ռեցիդիվային հանցավորության կառուցվածք*

TIGRAN SIMONYAN – *Structure and Trends of Youth Recidivism in the Republic of Armenia* .– The article is dedicated to the study of structure and trends of youth recidivism in the Republic of Armenia. It is noted that recently there were a number of negative factors that could significantly affect the overall crime rate, and especially of youth recidivism crime trends. Youth recidivism crime is especially dangerous, as it determines the total recidivism crime future growth. In addition, the criminal subculture spreads easier among youth. Besides, severe socio-economic situation contributes to the aggravation of mercenary motives and frustration factors, which influence to crime level is difficult to overestimate. The author came to the conclusion that the official statistics do not reflect the real picture of youth recidivism crime. It is an evidence that there is a lot of problems in legal system and proves that crime latency increases.

Key words: *youth recidivism, criminal subculture, deviant behavior, trends of youth recidivism, structure of youth recidivism crime*

**ՄԵՌԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՍԵՔՍՈՒԱԼ
ԲՆՈՒՅԹԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿԱԴՐԵԼՈՒ
ՈՐԱԿՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ**

ՄԻՍԱԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ՝ քր. օր.) 18-րդ գլխում նախատեսված՝ սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններից մեկը սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողությունների հարկադրելն է:

Քր. օր.-ի հոդված 140-ի առաջին մասի դիսպոզիցիան հետևյալն է. «Անձին սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի, այդ թվում՝ համասեռական գործողություններ կատարելուն հարկադրելը շանտաժի, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ տուժողի նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով, եթե բացակայում են սույն օրենսգրքի 132 և 132.2 հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշները»: Հոդվածի երկրորդ մասն ավելի խիստ պատասխանատվություն է սահմանում հոդվածի առաջին մասով նախատեսված արարքի համար, որը կատարվել է ակնհայտ տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ:

Քննարկվող հանցագործության հիմնական անմիջական օբյեկտը անձի սեռական անձեռնմխելիության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Մասնագիտական գրականության մեջ սեռական ազատությունը բնորոշվում է որպես անձի իրավունք ինքնուրույն, առանց որևէ հարկադրանքի որոշելու՝ ում հետ և ինչ ձևով բավարարել սեփական սեռական պահանջմունքները¹:

Հանցագործության լրացուցիչ անմիջական օբյեկտ կարող են լինել անձի պատիվն ու արժանապատվությունը, սեփականությունը, աշխատանքային և այլ իրավունքները, իսկ անչափահաս տուժողի նկատմամբ կատարվելու դեպքում՝ վերջինիս նորմալ հոգեկան և ֆիզիկական զարգացումն ապահովող հասարակական հարաբերությունները²:

Քննարկվող հանցագործությունից տուժող կարող է լինել ինչպես իգական, այնպես էլ արական սեռի ներկայացուցիչը: Հոդված 140-ի երկ-

¹ Տե՛ս **Семернева Н. К.** Преступления против половой неприкосновенности и половой свободы личности // «Уголовное право. Особенная часть: Учебник для вузов». М., 1997, էջ 121:

² Տե՛ս «Уголовное право. Особенная часть». М., 2012, էջ 111:

րորդ մասով նախատեսված հանցագործությունից տուժողը տասնվեց տարին չլրացած անձն է: Թեև հողվածում նշում չկա քննարկվող հանցագործությունից տուժողի նվազագույն տարիքի մասին, այնուամենայնիվ կարծում ենք, որ որպես այդպիսին կարող է լինել տասներկու տարին լրացած անձը: Բանն այն է, որ քր. օր.-ի հողված 138-ում 12.11.2013 թ. կատարված լրացմամբ բռնաբարության և սեքսուալ բնույթի բռնի գործողությունների դեպքում տասներկու տարին չլրացած անձը համարվում է անօգնական վիճակում գտնվող: Հետևաբար, եթե հանցավորը սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողությունների է հարկադրում տասներկու տարին չլրացած անձին, ապա արարքը չի կարող որակվել հողված 140-ի երկրորդ մասով, քանի որ սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելու դեպքում տուժողը պետք է գիտակցի իրեն ուղղված պահանջի էությունը:

Մեր կարծիքով, նման դեպքում արարքի որակումը պետք է կատարվի հետևյալ կերպ: Եթե հանցավորը հողված 140-ում նշված գործողությունների հետևանքով սեռական հարաբերություն է ունենում տասներկու տարին չլրացած անձի հետ կամ սեքսուալ բնույթի գործողություն է կատարում նրա նկատմամբ, ապա նրա արարքը պետք է որակել քր. օր.-ի հողված 138-ի կամ 139-ի երրորդ մասի երկրորդ կետով: Իսկ եթե հանցավորի գործողությունները սահմանափակվում են միայն հարկադրելով, և սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի գործողությունը տեղի չի ունենում նրա կամքից անկախ հանգամանքներով, ապա արարքը պետք է որակել որպես քր. օր.-ի հողված 138-ի կամ 139-ի երրորդ մասի երկրորդ կետով նախատեսված հանցագործության նախապատրաստություն:

Քննարկվող հանցագործությունը օբյեկտիվ կողմից դրսևորվում է գործողությամբ՝ անձին սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի, այդ թվում՝ համասեռական գործողություններ կատարելուն հարկադրելով: Հարկադրելը կարող է կատարվել ինչպես անմիջականորեն, այնպես էլ կապի միջոցներով, այդ թվում՝ գրավոր³:

Հողվածում օգտագործված «հարկադրել» հասկացության վերաբերյալ գրականության մեջ արտահայտված տեսակետները կարելի է բաժանել երկու խմբի: Որոշ հեղինակներ հարկադրելը բնորոշում են որպես հանցավորի գործողություններ, որոնք բովանդակում են տուժողի օրինական շահերին վնաս պատճառելու սպառնալիք⁴: Հեղինակների մեկ այլ խումբ գտնում է, որ հարկադրելը դրսևորվում է ոչ միայն տուժողի վիճակը վատթարացնելու սպառնալիքի, այլև նրա նյութա-

³ Տե՛ս «Курс российского уголовного права. Особенная часть». М., 2002. էջ 247:

⁴ Տե՛ս Геннадиев В. Д. Защита по делам о половых преступлениях. Л., 1977, էջ 36, Сафронов В. Н. Свидлов Н. М. Вопросы квалификации половых преступлений. Волгоград, 1984, էջ 10:

կան, ծառայողական կամ այլ դրությունը բարելավելու խոստումների և տարբեր բարիքներ տրամադրելու ձևով⁵:

Վերջին մոտեցմանը դժվար է համաձայնվել: Ըստ հայերենի բացատրական բառարանի՝ հարկադրել նշանակում է պարտադրել, բռնադատել, ստիպել մի բան անել⁶, այլ ոչ թե համոզել, գայթակղել: Հետևաբար, հարկադրանքը չի կարող դրսևորվել միայն որոշակի բարիքներ կամ արտոնություններ տրամադրելու խոստման ձևով, սակայն այդպիսի խոստումները կարող են զուգորդվել տուժողի վիճակը վատթարացնելու սպառնալիքի հետ:

Առավել ամբողջական ենք համարում սեքսուալ բնույթի գործողությունների հարկադրելու հետևյալ բնորոշումը. հանցավորի կողմից տուժողի կամքի վրա ակտիվ, հակաօրինական ներգործություն (ճնշում), որի նպատակն է տուժողին ստիպել մտնելու սեռական հարաբերության մեջ կամ կատարելու սեքսուալ բնույթի գործողություն⁷:

Քր. օր.-ի հոդված 140-ում սպառնիչ թվարկված են հանցագործության եղանակները՝ շանտաժը, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքը կամ տուժողի նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելը: Ուստի հոդվածում չնշված գործողությունները, օրինակ՝ սեռական հարաբերության մեջ մտնելու ցինիկ առաջարկությունը, անպարկեշտ ցանկությունների արտահայտումը և նման այլ արարքները քննարկվող հանցակազմը չեն առաջացնում⁸:

Ընդհանրացնելով «շանտաժ» հասկացության վերաբերյալ գրականության մեջ արտահայտված դիրքորոշումները՝ կարելի է տալ շանտաժի հետևյալ բնորոշումը. անձի կամ նրա մերձավորի մասին արատավորող կամ անձի, նրա մերձավորի համար անցանկալի հետևանքներ առաջացնող տեղեկություններ հրապարակելու սպառնալիք: Այդպիսի տեղեկությունները կարող են ունենալ տարբեր բովանդակություն, և արարքի որակման համար նշանակություն չունի, թե արդյոք դրանք համապատասխանում են իրականությանը, թե ոչ:

Գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքը պետք է վերաբերի տուժողին պատկանող կամ նրա պահպանության կամ տնօրինության տակ օրինական հիմքերով գտնվող շարժական կամ անշարժ գույքին: Կարևոր է, որ այդ գույքը արժեք ներկայացնի տուժողի համար⁹: Քանի որ հոդված 141-ում օգտագործված է «վերցնել», այլ ոչ թե «հափշտակել» հասկացությունը, կարծում ենք, որ քննարկվող հանցա-

⁵ Տե՛ս **Хлынцов М. Н.** Расследование половых преступлений. Саратов, 1965, էջ 88, «Курс советского уголовного права. Часть Особенная». М., 1971, էջ 163:

⁶ Տե՛ս **Է. Բ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, հ. I, էջ 845:

⁷ Տե՛ս «Уголовное право: особенная часть: учебник». Ростов-на-Дону, 2008, էջ 136:

⁸ Տե՛ս «Российское уголовное право: учебник». В 2-х тт. Т. 2. «Особенная часть». М., 2007, էջ 110:

⁹ Տե՛ս «Научно-практический комментарий к Уголовному кодексу Российской Федерации». Т. 1. М., էջ 336:

կազմն առկա է նաև այն դեպքում, երբ հանցավորը սպառնում է տուժողի գույքը վերցնել ժամանակավորապես: Գույքը զգալի չափերով ոչնչացնելու կամ վնասելու սպա ոնալիքն իրականացնելու դեպքում արարքը պետք է լրացուցիչ որակվի քր. օր.-ի հոդված 185-ով: Ինչ վերաբերում է գույքը վերցնելու սպառնալիքի իրականացմանը, ապա համապատասխան հատկանիշների առկայության դեպքում արարքը պետք է լրացուցիչ որակվի որպես ավագակություն, կողոպուտ կամ առանց հափշտակելու նպատակ ունենալու՝ ավտոմեքենային կամ տրանսպորտային այլ միջոցին ապօրինաբար տիրանալ:

Ինչ վերաբերում է տուժողի նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելուն, ապա մասնագիտական գրականության մեջ «կախվածություն» ասելով հասկացվում է անձանց միջև այնպիսի կայուն հարաբերությունների առկայություն, որոնք ենթադրում են մի անձի կողմից մյուսի վարքագծի շարժառիթների ղեկավարում, որի պարագայում վերջինս իր արարքների տարբերակներն ընտրում է անկախ իր արժեքային կողմնորոշումներից: Ընդ որում, կախվածության հարաբերությունները անձին չեն զրկում իր կամքով գործելու հնարավորությունից¹⁰:

Նյութական կախվածության տակ գտնվող են համարվում այն անձինք, որոնց նյութական վիճակը լրիվ կամ մեծ մասամբ կախված է հանցավորից (օրինակ՝ երեխաները համարվում են նյութական կախվածության մեջ գտնվող իրենց ծնողներից կամ որդեգրողներից):

Այլ կախվածություն ասելով առաջին հերթին հասկացվում են ծառայողական կախվածությունը, իշխանության ներկայացուցչից կախվածությունը, հիվանդի կախվածությունը բժշկական օգնություն ցուցաբերող անձից: Այդպիսի կախվածությունը կարող է առաջանալ վերադասի և ստորադասի, մանկավարժի և աշակերտի, քրեակատարողական հիմնարկի աշխատակցի և դատապարտյալի, իրավապահ մարմինների աշխատակցի և հանցագործության մեջ կասկածվող կամ մեղադրվող անձի կամ նրա մերձավորի միջև: Այդպիսի կախվածությունը նշանակում է, որ տուժողի կողմից հանցավորի պահանջը կատարելուց հրաժարվելու դեպքում վերջինս կարող է կատարել այնպիսի գործողություններ, որոնք վնաս կպատճառեն տուժողի իրավունքներին և օրինական շահերին¹¹:

Որոշ հեղինակներ գտնում են, որ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելու հանցակազմի առկայության համար անհրաժեշտ է, որ հանցավորից տուժողի նյութական կամ այլ կախվածությունը որևէ իրավական հիմք ունենա (ընտանեկան օրենսդրություն, աշխատանքային պայմանագիր, աշխատանքի ընդունելու մասին հրա-

¹⁰ Տե՛ս **Сухарев Е., Арамов В.** Влияние уголовно-правовой категории «зависимость» на квалификацию преступления // «Советская юстиция», 1992, № 2, էջ 4:

¹¹ Տե՛ս «Уголовное право: особенная часть: учебник». Ростов-на-Дону, 2008, էջ 137:

ման և այլն)¹²: Սակայն կարծում ենք, որ քննարկվող հանցակազմի առկայության համար կարևորը փաստացի գոյություն ունեցող կախվածության հարաբերություններն են, այլ ոչ թե դրանց իրավաբանական ձևակերպումը: Քր. օր.-ի հոդված 140-ով նախատեսված հանցակազմն առկա կլինի, օրինակ, նաև այն դեպքում, երբ կազմակերպության ղեկավարը սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողությունների հարկադրի իր կազմակերպությունում փաստացի աշխատող, բայց չգրանցված աշխատողին: Ուստի համամիտ ենք այն մոտեցմանը, որ քննարկվող հանցակազմն առկա է ինչպես ուղղահայաց կախվածությունը, այնպես էլ հորիզոնական ազդեցությունը օգտագործելու դեպքում: Ուղղահայաց կախվածությունն այն իրավիճակն է, երբ անձը հնարավորություն ունի սահմանափակելու իրենից կախյալ վիճակում գտնվող անձի կամքը կամ այդ անձին դնելու այնպիսի դրության մեջ, որի դեպքում վերջինս չի կարող լիարժեք բավարարել իր պահանջմունքները: Հորիզոնական կախվածության դեպքում անձինք ունեն նույն սոցիալական և իրավական կարգավիճակը, սակայն փաստացի հարաբերությունները այնպիսին են, որ նրանցից մեկը իշխող դիրք է զբաղեցնում մյուսի նկատմամբ (օրինակ՝ ուղղիչ հիմնարկի նույն խցում ապրող դատապարտյալները, զորամասի զինծառայողները, ովքեր ստորադասության հարաբերությունների մեջ չեն)¹³:

Հարկ է նշել, որ կախվածության մեջ գտնվող անձին սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություն կատարելու առաջարկն ինքնին դեռևս չի առաջացնում հոդված 140-ով նախատեսված հանցակազմը: Կարևորը ոչ թե կախվածության հարաբերությունների առկայությունն է, այլ հանցավորի կողմից դրանց օգտագործումը (առանց համապատասխան հիմքերի աշխատավարձը կրճատելու, աշխատանքից ազատելու, պատասխանատվության ենթարկելու, բուհից ազատելու և այլ տեսակի սպառնալիքները): Այսպես, ԽՍՀՄ Գերագույն դատարանի պլենումն իր որոշումներից մեկում նշել էր, որ ուսումնարանի դասախոսի և ուսանողուհու միջև սեռական հարաբերությունը, առանց սպառնալիքների օգտագործման, միայն հակաբարոյական արարք է և չի պարունակում հանցակազմ¹⁴:

Գրականության մեջ կարծիք է արտահայտվել այն մասին, որ քննարկվող հանցակազմն առկա է միայն այն դեպքում, երբ հանցավորն օգտագործում է հենց տուժողի, այլ ոչ թե այլ անձանց, օրինակ՝ ազգականների կամ մերձավորների նյութական կամ այլ կախվածությունը¹⁵: Սակայն հանցակազմի շրջանակների այդպիսի սահմանափա-

¹² Տե՛ս Сафронов В. Н., Свидлов Н. М. Вопросы квалификации половых преступлений. М., 2005. էջ 27:

¹³ Տե՛ս «Полный курс уголовного права»: в 5 т. Т. II., СПб., 2008, էջ 558:

¹⁴ Տե՛ս «Бюллетень Верховного Суда СССР», 1968, №1, էջ 21-22:

¹⁵ Տե՛ս «Уголовное право России. Части Общая и Особенная». М., 2008, էջ 344:

կումը, մեր կարծիքով, ճիշտ չէ: Ինչպես իրավացիորեն նկատում է Տ. Վ. Կոնդրաշովան, հանցավորից կախյալ վիճակում գտնվող անձն ու այն անձը, ում հետ հանցավորը ցանկանում է մտնել սեռական հարաբերության մեջ, կարող են չհամընկնել. սպառնալիքները կարող են ուղղված լինել այլ անձանց, ում շահերը տուժողի համար այնքան կարևոր են, որ նա պատրաստ է զոհաբերելու իր սեռական ազատությունը¹⁶:

Հանցագործությունն ավարտված է համարվում սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողությունների հարկադրելու պահից՝ անկախ դրանց փաստացի կատարումից¹⁷: Եթե տասնութ տարին լրացած անձը սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողությունների է հարկադրում ակնհայտ տասնվեց տարին չլրացած անձին, և վերջինս կատարում է հանցավորի պահանջը, ապա արարքը պետք է որակել միայն հոդված 140-ի երկրորդ մասով, և հոդված 141-ով լրացուցիչ որակում չի պահանջվում: Դա բխում է հոդված 141-ի առաջին մասի դիսպոզիցիայից, որում ուղղակի նշում կա հոդված 140-ի երկրորդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշների բացակայության մասին:

Շանտաժի, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքի դեպքում հանցագործության սուբյեկտն ընդհանուր է՝ 16 տարին լրացած, ֆիզիկական մեղսունակ անձը, իսկ նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելու դեպքում սուբյեկտը հատուկ է՝ այն անձը, ումից տուժողը կախվածության մեջ է: Հանցագործության սուբյեկտ է համարվում հենց այն անձը, որը հարկադրել է տուժողին մտնել սեռական հարաբերության մեջ կամ կատարել սեքսուալ բնույթի գործողություն՝ անկախ այն բանից՝ նա անձամբ է սեռական հարաբերություն ունեցել տուժողի հետ, թե դա արել է երրորդ անձը:

Քր. օր.-ը պատասխանատվություն չի սահմանում հարկադրանքի ազդեցության տակ գտնվող տուժողի հետ երրորդ անձի կողմից սեռական հարաբերություն ունենալու կամ նրա նկատմամբ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու համար: Համապատասխան հատկանիշների առկայության դեպքում երրորդ անձը կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել միայն որպես քր. օր.-ի հոդված 140-ով նախատեսված հանցագործության կազմակերպիչ, դրդիչ կամ օժանդակող¹⁸:

Եթե նշված հանցագործությունը կատարում է առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողը, ով իրենից կախվածության մեջ գտնվող անձին սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելու նպատակով օգտագործում է իր կար-

¹⁶ Տե՛ս «Полный курс уголовного права» в 5 т. Т. II. էջ 557:

¹⁷ Տե՛ս **Дьяченко А. П.** Уголовно-правовая охрана граждан в сфере сексуальных отношений. М., 1995, էջ 47:

¹⁸ Տե՛ս «Курс уголовного права. Особенная часть». М., 2002, էջ 154:

գաղբիչ կամ այլ լիազորությունները, ապա արարքը պետք է համակցությամբ որակել նաև քր. օր.-ի հոդված 214-ով: Նմանապես, եթե պաշտոնատար անձը իրենից կախվածության մեջ գտնվող անձին սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելու նպատակով օգտագործում է իր պաշտոնական դիրքը կամ կատարում է այնպիսի գործողություններ, որոնք ակնհայտորեն դուրս են նրա լիազորությունների շրջանակից, ապա արարքը պետք է համակցությամբ որակել նաև քր. օր.-ի հոդված 308-ով կամ 309-ով:

Քննարկվող հանցագործությունը սուբյեկտիվ կողմից դրսևորվում է ուղղակի դիտավորությամբ: Հանցագործության շարժառիթներն ու նպատակները արարքի որակման համար նշանակություն չունեն:

Անհրաժեշտ ենք համարում քննարկել նաև այն հարցը, թե ինչպիսի քրեաիրավական գնահատական պետք է տրվի հանցավորի կողմից նույն տուժողի նկատմամբ հոդված 140-ում նշված գործողությունները պարբերաբար կատարելուն: Մեր կարծիքով, եթե հանցավորը տուժողին պարբերաբար ենթարկում է շանտաժի, տալիս է գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիք կամ պարբերաբար օգտագործում է տուժողի նյութական կամ այլ կախվածությունը, սակայն սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի գործողությունները տեղի չեն ունենում, ապա առկա է շարունակվող հանցագործություն, քանի որ հանցավորը հետապնդում է միևնույն նպատակը՝ տվյալ անձի հետ մտնել սեռական հարաբերության մեջ կամ նրա նկատմամբ կատարել սեքսուալ բնույթի գործողություն: Իսկ եթե հոդված 140-ում նշված գործողությունների պարբերաբար կատարմամբ հանցավորն ամեն անգամ հասնում է իր նպատակին և տուժողի հետ ունենում սեռական հարաբերություն կամ կատարում սեքսուալ բնույթի գործողություն, ապա կատարվածն անհրաժեշտ է որակել հանցագործությունների համակցությամբ:

Այսպես, օրինակ, Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը Գ. Խ.-ի արարքն իրավացիորեն որակել է ՀՀ քրեական օրենսգրքի 140 և 140 հոդվածների համակցությամբ: Գ. Խ.-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 140 հոդվածով և նորից 140 հոդվածով՝ այն բանի համար, որ նա, N գորամասի զինծառայող լինելով, 2013 թվականի փետրվարի վերջերին կամ մարտի սկզբներին՝ քննությամբ չպարզված կոնկրետ օրը՝ ժամը 20:00-ի սահմաններում, գորամասի բաղնիքի հետնամասում շանտաժի օգտագործմամբ՝ նույն վաշտի ժամկետային զինծառայող Ա. Վ.-ին սպառնալով, որ զինծառայողների մոտ կհրապարակի մարտական դիրքերում նրա կողմից օրեր առաջ համաճառայողներից մեկի հետ սեքսուալ բնույթի գործողություն կատարելու հանգամանքը, հարկադրել է նրան կատարելու սեքսուալ բնույթի այլ գործողություն, ինչն էլ Ա. Վ.-ն կատարել է: Բացի այդ, 2013

թվականի մարտի սկզբներին՝ քննությամբ չպարզված կոնկրետ օրը՝ ժամը 21:00-ի սահմաններում, գորամասի բաղնիքի հետնամասում նորից շանտաժի օգտագործմամբ Ա. Վ.-ին դարձյալ սպառնալով, որ զին-ծառայողների մոտ կհրապարակի մարտական դիրքերում նրա կողմից համաձայնյողներից մեկի, ինչպես նաև նախորդ օրն իր հետ սեքսուալ բնույթի գործողություն կատարելու հանգամանքը, հարկադրել է նրան կատարելու սեքսուալ բնույթի այլ գործողություն¹⁹:

Մյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի մեկ այլ դատավճռով²⁰ Ա. Ֆ.-ն մեղավոր է ճանաչվել և դատապարտվել Դ. Ն.-ին շանտաժի եղանակով սեքսուալ բնույթի գործողություններ կատարելուն հարկադրելու յոթ դրվագների համար, որոնցից յուրաքանչյուրը առանձին-առանձին որակվել է ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 140-ի առաջին մասով: Տվյալ դեպքում նույնպես յուրաքանչյուր դրվագում տուժողը կատարել էր հանցավորի պահանջը:

Քր. օր.-ի հոդված 140-ի առաջին մասի դիսպոզիցիայում ուղղակի նշում կա հոդվածներ 132-ով և 132.2-ով նախատեսված հանցագործությունների հատկանիշների բացակայության մասին: Այդ առումով անհրաժեշտ է քննարկել սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելու և մարդու թրաֆիքինգի կամ շահագործման, ինչպես նաև երեխայի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգի կամ շահագործման սահմանազատման չափանիշները:

Նշված հանցագործությունների սահմանազատման հարցը հիմնականում կարող է առաջանալ այն դեպքում, երբ մարդու շահագործումն իրականացվում է պոռնկության շահագործման ձևով, իսկ որպես հանցագործության եղանակ օգտագործվում է հարկադրանքի այլ ձևը՝ իշխանությունը կամ վիճակի խոցելիությունն օգտագործելը: Նման ձևով և եղանակով կատարվող մարդու շահագործումը սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելուց տարբերվում է նրանով, որ պոռնկության շահագործման դեպքում պարտադիր է, որ տուժողը երրորդ անձի հետ սեռական հարաբերություն ունենա կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարի վճարման²¹ կամ որևէ հատուցման դիմաց²², ինչը բացակայում է սեռա-

¹⁹ Տե՛ս «Մյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի դատավճիռը» (ՄԴ3/0152/01/13)/<http://www.datalex.am>:

²⁰ Տե՛ս «Մյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2014 թվականի ապրիլի 10-ի դատավճիռը» (ՄԴ/0177/01/13)/<http://www.datalex.am>:

²¹ Մարդկանց առևտրի և այլ անձանց պոռնկության շահագործման դեմ ՄԱԿ-ի 1949 թվականի կոնվենցիայի առաջին հոդվածի համաձայն՝ պոռնկություն է մեկ անձի կողմից այլ անձի սեռական կրքերը վճարման դիմաց բավարարելը:

²² Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի 1989 թվականի կոնվենցիայի՝ «Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի

կան հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելու դեպքում: Բացի այդ, պոռնկության շահագործումը համարվում է ավարտված, երբ տուժողն ի շահ երրորդ անձի՝ հարկադրանքի կամ պարտադրանքի ուժով առնվազն մեկ անգամ ունենա սեռական հարաբերություն կամ մատուցի այլ սեքսուալ ծառայություն²³, իսկ սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը ավարտված է համարվում հարկադրելու պահից՝ անկախ նշված գործողությունների կատարումից:

Քր. օր.-ի հոդված 140-ով և հոդվածներ 132-ով և 132.2-ով նախատեսված հանցագործությունների սահմանազատման հարց կարող է առաջանալ նաև այն դեպքում, երբ շահագործումն իրականացվում է այսպես կոչված սեքս-ստրկության ձևով: Այդ ձևով կատարվող մարդու շահագործումը սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելուց տարբերվում է նրանով, որ սեքս-ստրկության դեպքում տուժողը գտնվում է ստրուկի կարգավիճակում²⁴, ինչը բացակայում է քր. օր.-ի հոդված 140-ով նախատեսված հանցագործության դեպքում:

Կարծում ենք, որ սույն հոդվածում ներկայացված՝ սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելու որակման առանձնահատկությունների և հարակից հանցակազմերից սահմանազատման չափանիշների իմացությունը դատաքննչական պրակտիկայում կնպաստի քրեական օրենքի ճիշտ կիրառմանը:

Բանալի բառեր – *հարկադրանք, սեռական հարաբերություն, սեքսուալ բնույթի գործողություններ, հանցագործության որակում, սեռական ազատություն, սեռական անձեռնմխելիություն, շանտաժ, սպառնալիք, նյութական կամ այլ կախվածություն*

МИСАК МАРКОСЯН – Некоторые вопросы квалификации принуждения к половому сношению или действиям сексуального характера. – В статье рассмотрены квалификация принуждения к половому сношению или действиям сексуального характера и критерии, разграничивающие данный и смежный составы преступления. Дается уголовно-правовая характеристика названного преступного деяния, сопоставляются высказанные в научной литературе точки зрения по некоторым спорным вопросам его квалификации. Приводимые теоретические суждения подкреплены примерами из армянской судебной практики. Анализ со-

մասին կամընտիր արձանագրության» երկրորդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ երեխաների մարմնավաճառություն նշանակում է երեխայի օգտագործումը սեռական բնույթի գործունեության մեջ՝ վարձատրության կամ ցանկացած այլ տեսակի հատուցման դիմաց:

²³ Տե՛ս **Ա. Երեմյան, Դ. Թումասյան, Ա. Ղամբարյան, Տ. Պետրոսյան**, Հայաստանի Հանրապետությունում մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի իրավական հիմունքները, Եր., 2011, էջ 55:

²⁴ ՄԱԿ-ի «Ստրկության մասին» 1926 թվականի կոնվենցիայի առաջին հոդվածի առաջին կետի համաձայն՝ ստրկությունը այն անձի վիճակն է կամ դրությունը, ում նկատմամբ իրականացվում են սեփականության իրավունքին բնորոշ բոլոր կամ որոշ լիազորությունները:

става понуждения к половому сношению или действиям сексуального характера, а также сопоставление соответствующих уголовно-правовых норм позволяет изложить конкретные рекомендации по квалификации данного преступления и отграничить его от трафикинга и эксплуатации человека.

Ключевые слова: *принуждение, половое сношение, действия сексуального характера, половая свобода, половая неприкосновенность, шантаж, материальная или иная зависимость, угроза*

MISAK MARKOSYAN – *Some Problems on Qualification of Coercion to Sexual Intercourse or Sexual Actions.*– The article discusses the issues of qualification on coercion to sexual intercourse or sexual actions and the criteria of differentiation of the given corpus delicti from the related compounds.

The author presents the criminal-legal characteristics of coercion to sexual intercourse or sexual actions, compares the viewpoints on some controversial issues of the qualification of the given crime expressed in the doctrine of the criminal law. The theoretical judgments cited by the author are supported by the examples from the legal practice of the Republic of Armenia on cases of coercion to sexual intercourse or sexual actions.

Based on the analysis of coercion to sexual intercourse or sexual actions, as well as analysis of the relevant criminal-legal norms, the author proposes precise recommendations on the qualification of the discussed crime and its differentiation from trafficking and exploitation of human beings.

Key words: *coercion, sexual intercourse, sexual actions, qualification of crime, sexual freedom, sexual integrity, blackmail, financial or other dependence, threat*

**ՎՏԱՆԳԻ ՄԵՋ ԹՈՂՆԵԼՈՒ ՔՐԵԱԽԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ
ՈՐԱԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԱՐՄԻՆԵ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

ՀՀ քրեական օրենսգրքի 128 հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում կյանքի համար վտանգավոր դրության մեջ գտնվող անձին անհրաժեշտ և ակնհայտ անհետաձգելի օգնություն ցույց չտալու կամ օգնություն ցույց տալու անհրաժեշտության մասին համապատասխան մարմիններին չհաղորդելու համար, եթե հանցավորը պարտավոր չի եղել հոգ տանելու տուժողի մասին, և ինքը նրան չի դրել կյանքի համար վտանգավոր դրության մեջ:

Նույն հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում կյանքի կամ առողջության համար վտանգավոր վիճակում գտնվող և ինքնապահպանության միջոցներ ձեռնարկելու հնարավորությունից զրկված անձին անօգնական վիճակում թողնելու համար, եթե հանցավորն այդ անձին օգնություն ցույց տալու իրական հնարավորություն է ունեցել և պարտավոր է եղել նրան խնամել, կամ ինքն է նրան դրել կյանքի համար վտանգավոր վիճակում:

ՀՀ քրեական օրենսգրքի 128 հոդվածի երրորդ մասով պատասխանատվություն է սահմանված հատուկ սուբյեկտի, այսինքն՝ այնպիսի անձի կողմից վտանգի մեջ թողնելու համար, որն առաջացրել է մահ կամ այլ ծանր հետևանքներ, ով պարտավոր է եղել տուժողին խնամել կամ ինքն է նրան դրել կյանքի համար վտանգավոր վիճակում:

Այս հանցագործության օբյեկտը կյանքի կամ առողջության համար վտանգավոր դրության մեջ գտնվող և ինքնապահպանության միջոցներ ձեռնարկելու հնարավորությունից զրկված մարդու կյանքի և առողջության անվտանգության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Օբյեկտիվ կողմից հանցագործությունը դրսևորվում է անգործությամբ: Ընդ որում, հոդվածի 1-ին մասի դեպքում անձի գործելու պարտականությունը բխում է համակեցության կանոններից, և վտանգի մեջ գտնվող անձին օգնություն ցույց չտալու համար քրեական պատասխանատվություն սահմանելը նախ և առաջ պայմանավորված է գթասրտության, մարդասիրության և բարոյականության սկզբունքներով¹: Մակայն կարծում ենք, որ նպատակահարմար է ապաքրեականացնել վտանգի մեջ թողնելու համար պատաս-

¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք», Հատուկ մաս, դասագիրք բուհերի համար, Եր., 2011, էջ 181:

խանատվություն նախատեսող հոդվածի 1-ին մասը, քանի որ դրա համար պատասխանատվություն սահմանելը պայմանավորված է մարդասիրության սկզբունքով, և զուտ համակեցության կանոններից բխող պարտավորությունը չկատարելը չպետք է հանգեցնի իրավաբանական, առավել ևս քրեական պատասխանատվության²:

Հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված հանցագործության հանցակազմերը ձևական են, այսինքն՝ հանցանքն ավարտված է համարվում անգործության դրսևորման պահից:

Մակայն պրակտիկայում լինում են դեպքեր, երբ վտանգի մեջ թողնելով՝ փաստորեն առաջանում են հետևանքներ, և բարդություններ են ծագում վտանգի մեջ թողնելն այլ հանցանքներից տարբերակելու կամ այլ հանցանքների հետ համակցությամբ որակելու հարցերում:

Քննարկված է արժանի նաև այն հարցը, թե հանցավորի որ (հակաօրինակա՞ն, թե՞ իրավաչափ, մեղավո՞ր, թե՞ անմեղ, հանցավո՞ր, թե՞ ոչ հանցավոր) արարքները կարող են տուժողին դնել վտանգավոր իրավիճակում և դրանից հետո իր համար առաջացնել վտանգի մեջ գտնվող անձին օգնելու պարտականություն: Կարծում ենք, որ անձի ցանկացած արարք, եթե դրանից հետո առաջանում է կյանքի կամ առողջության համար վտանգավոր դրություն, կարող է անձի համար ստեղծել գործելու պարտականություն: Այլ հարց է, որ որոշ դեպքերում անձի հետհանցավոր պասիվ վարքագիծը ինքնուրույն քրեաիրավական գնահատական չի ստանում: ՌԴ գերագույն դատարանի որոշման մեջ նշված է, որ դիտավորյալ հանցանքից հետո հանցավորի անգործությունը չի կարող լրացուցիչ որակվել որպես վտանգի մեջ թողնել³: Մակայն, կարծում ենք, որ այնպիսի դիտավորյալ հանցանքների պարագայում, որոնց հիմնական հանցակազմի պարտադիր հատկանիշ չէ անձի մահը, կամ այն չի համարվում հանցանքը ծանրացնող հանգամանք, փաստացի մահ առաջանալու դեպքում հանցավորի հետագա անգործությունը պետք է ստանա իր ինքնուրույն քրեաիրավական գնահատականը: Օրինակ՝ երբ անձի դիտավորությունն ուղղված է մեկ այլ անձի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելուն, և դրանից հետո հանցավորը նրան անգիտակից վիճակում թողնում ու հեռանում է, որից առաջանում է տուժողի մահ, ապա արարքը պետք է որակել համակցությամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 113 հոդվածով (դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառել) և ՀՀ քրեական օրենսգրքի 128 հոդվածի երրորդ մասով (վտանգի մեջ թողնելը, որն առաջացրել է տուժողի մահը): Իհարկե, այս դեպքում հանցավորը մահվան նկատմամբ պետք է դրսևորի մեղքի դիտավորյալ ձև:

² Տե՛ս Մ. Մարկոսյան, Քրեականացման և ապաքրեականացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2011, էջ 182:

³ Տե՛ս «Судебная практика к Уголовному кодексу Российской Федерации». М., 2011, էջ 596:

Անզգույշ արարքները ևս կարող են ակտիվ վարքագիծ դրսևորելու պարտականություն առաջացնել, այսինքն՝ անձը պարտավոր է օգնել իր անզգույշ արարքի հետևանքով վտանգի մեջ հայտնվածին: Այստեղ ևս պետք է հաշվի առնել հետևյալը. եթե այդ անզգույշ արարքը ենթադրում է մահը որպես հետևանք, ապա հետագա անգործությունը չպետք է ստանա ինքնուրույն քրեաիրավական գնահատական: Օրինակ՝ երբ անձն անզգույշ կրակոցից ստանում է հրազենային վնասվածք, իսկ հանցավորը դեպքի վայրից դիմում է փախուստի՝ խուսափելով պատասխանատվությունից, տուժողին թողնում է կյանքի համար վտանգավոր դրության մեջ, որի հետևանքով տուժողը մահանում է: Թեև ՀՀ քրեական օրենսգրքի 128 հոդվածի երկրորդ մասի համաձայն տուժողին կյանքի համար վտանգավոր վիճակում դրած անձը պարտավոր է օգնություն ցույց տալ նրան, սակայն այստեղ բացակայում է վտանգի մեջ թողնելու հանցակազմը, և արարքը չպետք է որակել հանցանքների համակցությամբ (անզգույշությամբ մահ պատճառել և վտանգի մեջ թողնել)՝ հետևյալ հիմնավորումներով. մահվան անմիջական պատճառը սկզբնական արարքն է, որը դասվում է անզգույշությամբ մահ պատճառելու օբյեկտիվ կողմի մեջ, և որտեղ մահ առաջանալը համարվում է հանցակազմի պարտադիր հատկանիշ: Իսկ եթե անզգույշ արարքը չի ենթադրում տուժողի մահը որպես հետևանք, ապա նման իրավիճակ փաստացի առաջանալու դեպքում արարքները պետք է որակել համակցությամբ: Օրինակ՝ վարորդը, խախտելով ճանապարհային երթևեկության կանոնները, վրաերթի է ենթարկում հետիոտնին, որը ստանում է ոտքի կոտրվածք, որից հետո վարորդը, խուսափելով քրեական պատասխանատվությունից, ցուրտ եղանակին, գիշերային ժամին, բնակավայրից դուրս թողնում և հեռանում է՝ նախատեսելով տուժողի մահվան հնարավորությունը: Տվյալ դեպքում եթե տուժողը մահանա, ապա, կարծում ենք, արարքը պետք է որակել ՀՀ քրեական օրենսգրքի 242 հոդվածի 1-ին մասով (ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտել), 244 հոդվածով (ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնել) և 128 հոդվածի երրորդ մասով: Թեև ՀՀ քրեական օրենսգրքի 242 հոդվածը անձի մահը նախատեսում է որպես արարքը ծանրացնող հանգամանք, սակայն այդտեղ մահվան նկատմամբ հանցավորը դրսևորում է անզգույշություն, իսկ բերված օրինակում հանցավորը տուժողի մահվան նկատմամբ դրսևորում է դիտավորություն: Բացի այդ, տվյալ դեպքում բացակայում է անմիջական պատճառական կապը ՃԵԿ-ի կանոնների խախտման և մահվան միջև: Այս առումով ՌԴ գերագույն դատարանի դիրքորոշումն այլ է: Դատարանը նշել է, որ ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելիս անձի արարքը պետք է որակվի միայն ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելու համար պատասխանատվություն նախատեսող հոդվածով, այլ ոչ թե

վտանգի մեջ թողնելու համար պատասխանատվություն նախատեսող հոդվածով, քանի որ առաջին հոդվածը երկրորդի համեմատ համարվում է հատուկ նորմ⁴: Սակայն խնդիրն այն է, որ ՌԴ քրեական օրենսգրքի 125 հոդվածը (վտանգի մեջ թողնելը) չի նախատեսում տուժողի մահը որպես ծանրացնող հանգամանք, իսկ տվյալ դեպքում ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելու համար պատասխանատվություն նախատեսող ՌԴ քրեական օրենսգրքի 265 հոդվածը 125 հոդվածի համեմատ համարվում է հատուկ նորմ, և մրցակցության դեպքում պետք է որակվի միայն 265 հոդվածով⁵: Սակայն ՀՀ քրեական օրենսգրքի 128 հոդվածը նախատեսում է տուժողի մահը որպես հանցանքը ծանրացնող հանգամանք, ուստի ՀՀ քրեական օրենսգրքի 128 հոդվածի 3-րդ մասը և 244 հոդվածը միմյանց նկատմամբ մրցակցության մեջ չեն, և առկա է հանցանքների համակցություն:

Այս առումով տարբեր է դատական պրակտիկան: Բերենք օրինակ.

08.08.2008 թ. Մ.-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով այն բանի համար, որ նա, իր անձնական օգտագործման ավտոմեքենայով ընթանալով 70 կմ/ժամ արագությամբ, շլացել է հանդիպակաց ընթացող գործով չպարզված ավտոմեքենայի հեռահար լույսերից և, առանց կանգ առնելու, նույն արագությամբ շարունակել է ընթացքը, վրաերթի ենթարկել Ք.-ին, որն անգիտակից վիճակում տեղափոխվել է հիվանդանոց, որտեղ էլ ժամը 00.00-ի սահմաններում մահացել է: 22.08.2008 թ. Մ.-ին առաջադրված մեղադրանքը լրացվել է ՀՀ քրեական օրենսգրքի 128 հոդվածի 3-րդ մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 244 հոդվածով այն բանի համար, որ տուժող Ք.-ին վրաերթի ենթարկելուց հետո նա դեպքի վայրում անօգնական է թողել վերջինիս և առանց կանգ առնելու շարունակել է վարել մեքենան՝ լքելով ճանապարհային պատահարի վայրը:

Փորձագետի թիվ 16 եզրակացությամբ՝ տուժողի մահը վրա է հասել տրավմատիկ շոկից, մարմնի վրա կան առողջությանը ծանր վնասի պատճառման հատկանիշներ, որոնք մահվան հետ ուղղակի պատճառական կապի մեջ են և հանգեցրել են մահվան⁶:

Կարծում ենք՝ տվյալ դեպքում արարքը պետք է որակվի ՀՀ քրեական օրենսգրքի 242 հոդվածի 2-րդ մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 244 հոդվածով՝ հետևյալ հիմնավորումներով: Նախ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 128 հոդվածի 3-րդ մասով որակելու հիմքեր չկան, քանի որ, ինչպես պարզվում է փորձագետի եզրակացությունից, մահվան պատճառ է հանդիսացել ոչ թե անձի անգործությունը, այլ ավտովթարը, և

⁴ Տե՛ս «Судебная практика к Уголовному кодексу Российской Федерации», էջ 599:

⁵ Պետք է նշել, որ ՌԴ քրեական օրենսգրքի 265 հոդվածը՝ ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելը՝ ուժը կորցրել է 2003 թ.:

⁶ Տե՛ս http://www.datalex.am/dl_case_view_page.php?caseType=1&courtID=0&caseID=32369622321725831:

երկրորդ՝ մահվան նկատմամբ հանցավորը դրսևորել է մեղքի անգույշ ձև, իսկ մահվան ելքով վտանգի մեջ թողնելու դեպքում հանցավորը մահվան նկատմամբ պետք է դրսևորի մեղքի դիտավորյալ ձև:

Բերենք մեկ այլ օրինակ դատական պրակտիկայից.

Ն.-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242 հոդվածի 2-րդ մասով, 128 հոդվածի 2-րդ մասով և 244 հոդվածով այն բանի համար, որ նա, խախտելով ՃԵԿ-ի 2.2.1 կետի պահանջները, չունենալով վարորդական վկայական, վարելով իր ավտոմեքենան, վրաերթի է ենթարկել Վ.-ին, որը ստացած մարմնական վնասվածքներից մահացել է: Բացի այդ, Ն.-ն, ունենալով ռեալ հնարավորություն վրաերթից անմիջապես հետո օգնություն ցույց տալու տուժողին, լքել է ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը և ավտոմեքենայով հեռացել այնտեղից⁷:

Տվյալ դեպքում, կարծում ենք, մեղադրանքի ծավալից պետք է հանվի ՀՀ քրեական օրենսգրքի 128 հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքը, քանի որ վերջինիս և ՀՀ քրեական օրենսգրքի 244 հոդվածով նախատեսված նորմերը ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցության մեջ են, որտեղ հատուկը 244 հոդվածով նախատեսված նորմն է, և արարքը որակելիս նախապատվությունը պետք է տրվի վերջինիս:

Ի տարբերություն ՀՀ քրեական օրենսգրքի 128 հոդվածի առաջին և երկրորդ մասերով նախատեսված հանցագործությունների հանցակազմների, որոնք ձևական հանցակազմեր են, երրորդ մասով նախատեսված հանցագործության հանցակազմը նյութական է, այսինքն՝ բացի անգործություն դրսևորելուց արարքն ավարտված համարելու համար անհրաժեշտ է, որ առաջանա հետևանք՝ մահ կամ այլ ծանր հետևանք:

Եթե ընդհանուր սուբյեկտն անգործություն է դրսևորում և անձին թողնում է վտանգավոր վիճակում, որից հետո տուժողը մահանում է, ապա ըստ էության առաջանում է ՀՀ քրեական օրենսգրքի 128 հոդվածի երրորդ մասով նախատեսված հետևանքը, սակայն տվյալ դեպքում անձի արարքը չի կարող որակվել 128 հոդվածի երրորդ մասով, քանի որ օրենքի հոդվածի տառացի մեկնաբանությունից պարզ է դառնում, որ հետևանքը առաջանալիս այն կարող է մեղսագրվել հանցավորին, եթե դա կատարվել է հոդվածի երկրորդ մասով նախատեսված դեպքերում, այսինքն՝ երբ անձն ինքն է դրել տուժողին նման դրության մեջ կամ տուժողին հոգ տանելու պարտականություն է ունեցել:

ՀՀ քրեական օրենսգրքի 128 հոդվածի երրորդ մասի վերլուծությունից պարզ է դառնում, որ հանցավորը հետևանքի նկատմամբ դիտավորություն է դրսևորում: Հնարավոր է այնպիսի իրավիճակ, երբ հետևյալի նկատմամբ հանցավորը դրսևորի հանցավոր ինքնավստահույթ-

⁷ Տե՛ս http://www.datalex.am/dl_case_view_page.php?caseType=1&courtID=0&caseID=33214047251857848:

յուն կամ անփութություն: Նման պարագայում եթե նույնիսկ առաջանա տուժողի մահ, ապա արարքը կարող է որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 128 հոդվածի առաջին կամ երկրորդ մասերով: Տուժողի մահը չի կարող մեղսագրվել հանցավորին, քանի որ հոդվածում մեղքի անգույշ ձևի մասին նշում չկա: ՀՀ քրեական օրենսգրքի 28 հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ անգուշությամբ կատարված արարքը հանցագործություն է, եթե դա հատկապես նախատեսված է քրեական օրենսգրքի Հատուկ մասում: Ուստի նպատակահարմար է անգուշությամբ մահ առաջանալը նույնպես նախատեսել որպես վտանգի մեջ թողնելու ծանրացնող հանգամանք՝ իհարկե տարբերակելով պատասխանատվությունը դիտավորությամբ և անգուշությամբ նման հետևանքներ առաջացնելու համար:

Բացի ճիշտ որակման անհրաժեշտությունից, կարևոր է նաև սահմանագատել մահ առաջացրած վտանգի մեջ թողնելը և սպանությունը, քանի որ այս երկու հանցանքների պատժաչափերը խիստ տարբեր են: Անգործությամբ սպանությունը և մահվան էլքով վտանգի մեջ թողնելը հանցակազմի գրեթե բոլոր տարրերով համընկնում են: Որոշ հեղինակներ այս հանցագործությունների տարբերությունը փնտրում են գործելու պարտականության մեջ: Կախված այն հանգամանքից, թե անգործությունն ինչ դեր է խաղում, տարբերվում են վնաս պատճառող և վնաս չպատճառող անգործությունները: Վնաս պատճառող անգործությունն առկա է այն դեպքում, երբ նորմատիվ ակտերը անձին պարտավորեցնում են գործել, և եթե այդ պայմաններում վտանգի մեջ թողնելու հետևանքով մահ է պատճառվում, անձը պետք է պատասխանատվություն կրի սպանության համար⁸: Օրինակ՝ հրդեհաշիջման աշխատանքներ իրականացնելիս եթե համապատասխան աշխատակիցը չմարի կրակը, դրսևորի անգործություն, ապա պատասխանատվության կենթարկվի սպանության համար: Վնաս չպատճառող անգործությունն առկա է այն դեպքում, երբ ստեղծված իրադրությունում անձը կարող էր կանխել հետևանքները:

Անգործությամբ պատճառված մահվան համար կարող է քրեական պատասխանատվություն առաջանալ միայն այն ժամանակ, երբ հաստատվի, որ անձն անհրաժեշտ գործողություններով չի կանխել վրա հասնող մահը, թեև տվյալ կոնկրետ իրադրությունում ոչ միայն պարտավոր էր, այլև իրական հնարավորություն ուներ դա անելու⁹:

Իրավակիրառ պրակտիկայում որոշակի խնդիրներ է առաջացնում խնամք տանելու պարտականություն ունեցող անձի կողմից վտանգի մեջ թողնելը անգործությամբ սպանությունից տարբերակելը:

⁸ St´u Горелик И. И. Квалификация преступлений, опасных для жизни и здоровья, М., 1973, էջ 214:

⁹ St´u «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք», Ընդհանուր մաս, դասագիրք բուհերի համար, Եր., 2011, էջ 43:

ՀՀ քրեական օրենսգրքի 128 հոդվածի երկրորդ մասը պատասխանատվություն է նախատեսում հատուկ սուբյեկտի կողմից վտանգի մեջ թողնելու համար: Ընդ որում, որպես հատուկ սուբյեկտ նախատեսված է տուժողին խնամելու պարտականություն ունեցող անձը կամ տուժողին կյանքի համար վտանգավոր դրության մեջ դնող անձը: Տուժողին խնամելու պարտականություն ունեցող անձի կողմից վտանգի մեջ թողնելը, որն առաջացրել է տուժողի մահ, պետք է տարբերակել անգործությամբ սպանությունից: Եթե տուժողին խնամելու պարտականություն ունեցող անձն ինքն է տուժողին դնում կյանքի համար վտանգավոր դրության մեջ, որից հետո տուժողը մահանում է, ապա առկա է ոչ թե վտանգի մեջ թողնել, որն առաջացրել է տուժողի մահ, այլ անգործությամբ սպանություն:

Վտանգի մեջ թողնելը պետք է տարբերել սպանության փորձից: Վտանգի մեջ թողնելու դեպքում հանցավորը հետևանքի նկատմամբ դրսևորում է անուղղակի դիտավորություն, իսկ սպանության փորձի դեպքում՝ ուղղակի դիտավորություն: Եթե հանցավորը գործել է սպանելու դիտավորությամբ, բայց հասցրել է ոչ մահացու մարմնական վնասվածք, և մահը վրա է հասել օգնության բացակայության պատճառով, և հանցավորը օգնություն ցուցաբերելուն որևէ կերպ չի խոչընդոտել, ապա արարքը պետք է որակվի որպես սպանության փորձ¹⁰: Տվյալ դեպքում հանցանք կատարած անձի հետհանցավոր պասիվ վարքագծին ինքնուրույն քրեաիրավական գնահատական տալու անհրաժեշտություն չկա, քանի որ այն լիովին կլանվում է սպանության փորձի համար պատասխանատվություն նախատեսող նորմով:

Մահվան ելքով վտանգի մեջ թողնելը սպանությունից տարբերելու չափանիշ է համարվում մահվան նկատմամբ դիտավորության առաջացման ժամանակի պարզումը: Եթե քրեական գործով ապացուցվի, որ մահվան նկատմամբ դիտավորությունն առաջացել է մինչև տուժողի կյանքի համար վտանգավոր դրություն ստեղծելը, ապա առկա է սպանություն: Իսկ եթե տուժողի մահվան նկատմամբ դիտավորությունը առաջացել է կյանքի համար վտանգավոր դրություն ստեղծելուց հետո, ապա առկա է մահ առաջացրած վտանգի մեջ թողնելու հանցակազմը:

Ելնելով վերոշարադրյալից՝ նպատակահարմար է ՀՀ քրեական օրենսգրքի 128 հոդվածով նախատեսված վտանգի մեջ թողնելու դիսպոզիցիան վերախմբագրել հետևյալ կերպ.

1. Կյանքի կամ առողջության համար վտանգավոր վիճակում գտնվող և ինքնապահպանության միջոցներ ձեռնարկելու հնարավորությունից զրկված անձին անօգնական վիճակում թողնելը, եթե հանցավորն այդ անձին օգնություն ցույց տալու իրական հնարավորություն է ունեցել և պարտավոր է եղել նրան խնամելու, կամ ինքն է նրան դրել

¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 44:

կյանքի համար վտանգավոր վիճակում:

2. Նույն արարքը, որն անգոռուշությամբ առաջացրել է մահ կամ այլ ծանր հետևանքներ:

3. Հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որն անուղղակի դիտավորությամբ առաջացրել է մահ կամ այլ ծանր հետևանքներ:

Կարծում ենք, որ առաջարկվող օրենսդրական փոփոխությունները կարող են նպաստել քրեական օրենսդրության հստակ կիրառմանն ու արդյունավետությանը:

Բանալի բառեր – *որակում, վտանգի մեջ թողնել, հանցագործություն, իրավաչափ, մեղավոր, անմեղ, հանցավոր, պասիվ վարքագիծ*

АРМИНЕ МЕЛИКСЕТЯН – Уголовно-правовая характеристика и особенности квалификации оставления в опасности. – Известны случаи, когда оставление человека в опасности приводит к серьёзным последствиям, и не всегда легко разграничить указанное деяние и другие преступления либо квалифицировать совокупность преступлений. Также заслуживает внимания вопрос о том, какие действия (незаконные или правомерные, преступные или неправомерные) создают опасную ситуацию и кого следует привлечь к ответственности за оставления в опасности. В статье высказано мнение, что любое действие, создающее опасную для жизни и здоровья ситуацию, обязывает к оказанию помощи. При этом очень важно разграничивать оставление в опасности, приведшее к смерти, и убийство, поскольку меры наказания за эти преступления сильно разнятся.

На основе анализа предлагаются некоторые меры по усовершенствованию УК РА.

Ключевые слова: *квалификация, оставление в опасности, преступление, правомерные, виновные, невиновные, пассивное поведение*

ARMINE MELIKSETYAN – Criminal-legal Characteristics and Qualification Peculiarities of Abandonment in Danger. – The article discusses the issues of criminal responsibility for abandonment in danger. In practice several cases are registered when abandonment in danger results in certain consequences, thus creating difficulties with the differentiation of the discussed crime from other ones or with the qualification of the criminal behavior as a multiple offence.

One of the issues which needs to be discussed is what kind of behavior (illegal or legal, guilty or non-guilty, criminal or non-criminal) can create a danger for a person, as well as who can be held responsible for abandonment in danger. The author states that any behavior creating danger for a person should also create a duty to help him/her.

Besides the accurate qualification of a crime, it is also important to differentiate abandonment in danger leading to death from the homicide, as the penalty for these crimes is extremely different. As a summary, the author make suggestions for the improvement of RA legislation in regard the discussed issue.

Key words: *qualification, abandonment in danger, crime, lawful, guilty, innocent, criminal, passive behavior*

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻՑ ՈՐՈՇԱԿԻ ԲԱԺԻՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ ՄԱՍՆԱԿՑԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ՎԱՀՐԱՄ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Կորպորացիայի մասնակցի (բաժնետիրոջ) շահույթի բաշխմանը մասնակցության և կորպորացիայի լուծարման դեպքում ընկերության գույքից որոշակի բաժին ստանալու իրավունքները մասնակցի գույքային առանցքային իրավունքներն են¹, որոնց իրականացման միջոցով կորպորացիայում ներդրում կատարած անձը հնարավորություն է ստանում կորպորացիայի գործունեությունից առաջացած շահույթից ունենալու որոշակի մասնաբաժին, իսկ լուծարման դեպքում՝ պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքից որոշակի մասնաբաժին:

Շահույթի բաշխմանը մասնակցության իրավունքը բաժնետերն իրականացնում է իրեն պատկանող բաժնետոմսերից համապատասխան շահութաբաժին ստանալու միջոցով², իսկ բաժնեմասի սեփականատերերի միջև շահույթի բաշխման դեպքում՝ ըստ ընկերության կանոնադրական կապիտալում ունեցած բաժնեմասի չափի:

Հարկ ենք համարում նշել, որ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքը չի տալիս «շահույթ» եզրույթի սահմանումը, իսկ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքն օգտագործում է «զուտ շահույթ» և «կուտակված շահույթ» բառակապակցությունները: Սովորաբար շահութաբաժին են անվանում զուտ շահույթի (այսինքն՝ շահույթ, որը մնացել է բոլոր տեսակի հարկերը և պարտադիր վճարումները կատարելուց հետո) այն մասը, որը բաժնետերերի միջև ենթակա է բաշխման բաժնետիրական ընկերությունում նրանց ունեցած մասնակցության բաժիններին համապատասխան և հաշվարկվում է մեկ բաժնետոմսի դիմաց³: Բացի դրա-

¹ Այս իրավունքի իրականացման առանձնահատկությունները սույն հոդվածում քննարկվում են առավելապես բաժնետիրոջ օրինակով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի շրջանակներում, քանի որ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքը այս հարցը մանրակրկիտ կարգավորման չի ենթարկում:

² Տե՛ս **Могилевский С. Д.** Акционерные общества. М., 1998, էջ 83:

³ Տե՛ս **Тихомирова М. Ю.** Комментарий к Федеральному закону об акционерных обществах. М., 2002, էջ 240:

նից, բաժնետիրական ընկերությունների պարագայում թույլատրվում է շահույթի մեջ ներառել նաև նախորդ տարիներին գոյացած, սակայն չվճարված շահույթը («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 49, կետ 2):

Կորպորացիայի մասնակցի՝ շահութաբաժին ստանալու սուբյեկտիվ իրավունքն առաջանում է կորպորացիայի համապատասխան մարմնի կողմից շահույթը կորպորացիայի մասնակիցների միջև բաշխելու մասին որոշում կայացնելուց հետո, քանի որ վճարման ենթակա է միայն հայտարարված շահույթը: Շահութաբաժին վճարելու մասին ընդհանուր ժողովի կամ տնօրենների խորհրդի որոշումը այն միակ իրավաբանական փաստն է, որի հետ կապված է շահութաբաժին ստանալու՝ կորպորացիայի մասնակցի իրավունքը և կորպորացիայի որոշմամբ սահմանված ժամկետներում ու կարգով վճարում կատարելու պարտականությունը:

Վ. Վ. Լապտեր գտնում է, որ նախքան կորպորացիայի կողմից համապատասխան որոշում կայացնելը, բաժնետերը շահութաբաժին ստանալու սուբյեկտիվ իրավունք չունի, ինչն էլ նրան թույլ է տալիս խոսել այս իրավունքի պայմանական լինելու մասին⁴: Իրոք, գործող իրավակարգավորման պայմաններում մինչև համապատասխան որոշում կայացնելը կորպորացիայի մասնակիցը շահութաբաժին ստանալու իրավունք չունի, այսինքն՝ այնպիսի իրավունք, որը հնարավոր է իրագործել ռեգուլյատիվ իրավահարաբերությունների շրջանակներում և պաշտպանել դատական կարգով, իսկ կորպորացիան էլ չի կրում շահութաբաժին վճարելու պարտականություն:

Բաժնետիրական ընկերություններում շահութաբաժնի չափը՝ կախված բաժնետոմսի տեսակից ու դասից, կարող է լինել տարբեր: Որոշ հեղինակներ գտնում են, որ բաժնետիրական ընկերության արտոնյալ բաժնետոմսերի դեպքում, որոնց դիմաց վճարման ենթակա շահութաբաժնի չափը կանխորոշված է ընկերության կանոնադրությամբ, որևէ որոշում ընդունել չի պահանջվում: Ենթադրվում է, որ նման բաժնետոմսերի դեպքում ընկերությունը պարտավոր է դրանց սեփականատերերին վճարել շահութաբաժին: Այն ընկերությունը, որը կհրաժարվի նման բաժնետոմսերով վճարել տարեկան շահութաբաժիններ, կհամարվի իրավախախտ, իսկ բաժնետիրոջ մոտ կառաջանա չհայտարարված շահութաբաժին բռնագանձելու պահանջ ներկայացնելու իրավունք՝ բացառությամբ, եթե շահույթը վճարվել է մասնակի կամ որոշում է կայացվել ընդհանրապես շահութաբաժին չվճարելու մասին⁵:

ՀՀ օրենսդրության ուսումնասիրությունը հիմք է տալիս պնդելու,

⁴ Տե՛ս Վ. Լապտեւ В. В. Акционерное право. М., 1999, էջ 67:

⁵ Տե՛ս «Правовое регулирование деятельности акционерных обществ» // Акционерное право: Учебное пособие. М., 1998, էջ 152, «Управление и корпоративный контроль в акционерном обществе». М., 1999, էջ 70-74:

որ գործող իրավակարգավորման պայմաններում շահութաբաժիններ վճարելու մասին որոշում չկայացնելու դեպքում բաժնետերը գրկված է դատական կարգով ընկերությունից շահութաբաժիններ պահանջելու իրավունքից⁶: Ավելին, նման դեպքերում, արտոնյալ բաժնետոմսերի սեփականատիրոջն օրենքը հնարավորություն է տալիս հասարակ բաժնետոմսերի սեփականատերերի հետ հավասար հիմունքներով մասնակցելու ընկերության կառավարմանը, իսկ եթե հաջորդ երեք տարիներին արտոնյալ բաժնետոմսերին հասանելիք շահութաբաժինները չեն վճարվում, բաժնետերը կարող է ընկերությունը դատական կարգով լուծարելու պահանջով դիմել դատարան («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 38, կետ 7): Այս խնդրի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ 3-789 (ՏԴ) գործով կայացրած որոշմամբ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բաշխման ենթակա շահույթի չափը որոշելն ընկերության բարձրագույն կառավարման մարմնի՝ ընդհանուր ժողովի բացառիկ լիազորությունն է⁷: Առաջին ատյանի դատարանը տվյալ գործով բավարարել էր հայցվորի պահանջը, որոշել բաշխման ենթակա շահույթի չափը (փաստորեն, ժողովի փոխարեն որոշում էր կայացրել շահութաբաժիններ վճարելու մասին) և ընկերությանը պարտադրել էր վճարել այն, մինչդեռ նշված հարցերի վերաբերյալ որոշում կայացնելու իրավունքն ընկերության ընդհանուր ժողովի բացառիկ լիազորությունն է, և ոչ թե դատարանին: Նշված գործով ՀՀ վճռաբեկ դատարանը, փաստորեն, պատասխանել է նաև այն հարցին, թե ընկերության մասնակիցը երբ է ձեռք բերում շահութաբաժին ստանալու իրավունքը՝ դա պայմանավորելով լիազոր մարմնի կողմից համապատասխան որոշում կայացնելու հանգամանքով:

Կան երկրներ, որոնց օրենսդրությունն այս հարցում ցուցաբերել է այլ մոտեցում, օրինակ՝ Անգլիայում և ԱՄՆ-ում բաժնետերն իրավունք ունի դատական կարգով պահանջելու վճարել իրեն հասանելիք շահութաբաժինը նույնիսկ այն դեպքում, եթե ընկերությունը շահութաբաժիններ չի հայտարարել, սակայն կորպորացիայի գործունեությունից շահույթ է գոյացել: Նշված կարգի գործերով հայցվորները պետք է ապացուցեն կորպորացիայում շահութաբաժիններ վճարելու համար անհրաժեշտ ֆոնդի առկայությունը, այդ ֆոնդերի օգտագործման արդյունավետությունը, շահութաբաժիններ հայտարարելիս տնօրենների կամ հսկիչ փաթեթի սեփականատիրոջ կողմից իրա-

⁶ Չարկ է նշել, որ ներկայումս Հայաստանի Հանրապետությունում զգալիորեն աճել է շահութաբաժիններ վճարելուն պարտավորեցնելու վերաբերյալ կորպորացիաների մասնակիցների կողմից դատարաններ ներկայացվող հայցադիմումների թիվը:

⁷ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 18.05.2007 թիվ 3-789 (ՏԴ) քաղաքացիական գործով որոշումը:

վունքի չարաշահում թույլ տալը⁸:

Կարծում ենք, որ շահութաբաժինների վճարման հարցը ՀՀ օրենսդրությամբ ճիշտ չի կարգավորված: Մասնավորապես, չի կարելի ընկերության կառավարման մարմիններին հնարավորություն տալ, օրինակ, 10 տարի անընդմեջ շահութաբաժիններ վճարելու մասին որոշում չկայացնել և գոյացած շահույթն ուղղել այս կամ այն ծրագրի իրականացմանը, քանի որ նման իրավիճակում կարող են ոտնահարվել փոքրամասնություն կազմող բաժնետերերի իրավունքները: Պատկերացնենք մի իրավիճակ, երբ խոշոր բաժնետերը միաժամանակ ընկերության գործադիր տնօրենն է, խորհրդի նախագահը և շահագրգռված չէ շահույթի բաշխման մասին որոշում կայացնելու հարցում, քանի որ առանց այդ որոշման ստանում է բարձր աշխատավարձ, պարզավճարներ, գնում է իրեն սպասարկող թանկարժեք ավտոմեքենա, ծառայողական բնակարան և այլն, իսկ փոքրամասնություն կազմող բաժնետերերը գործող օրենսդրության պայմաններում զրկված են նրա այդ գործողությունները վիճարկելու հնարավորությունից:

Նման իրավիճակներում իր իրավունքները պաշտպանելու, ինչու չէ՝ նաև պետական մասնակցությամբ ընկերություններում փոքրամասնություն կազմող բաժնետերերի մասնակցությունը առավել գրավիչ դարձնելու նպատակով 2001 թվականի դեկտեմբերի 5-ի № 1194 որոշմամբ պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերություններում պետական բաժնեմասից ստացվող շահութաբաժինների վճարման գործընթացը կանոնակարգելու նպատակով ՀՀ կառավարությունը սահմանել է այն դեպքը, երբ տարեկան շահութաբաժիններ վճարելու մասին որոշում կայացնելը ընդհանուր ժողովի կողմից պարտադիր է: Օրինակ՝ 50 տոկոսից ավելի պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերություններում բաժնետերերի ընդհանուր ժողովների քվեարկությանն ու հաստատմանն է դրվում պետության մասնակցության դիմաց ստացված գուտ շահույթի 20 տոկոսը որպես տարեկան շահութաբաժին Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելու հարցը:

Առաջարկում ենք «Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքներում կատարել համապատասխան փոփոխություններ, և շահութաբաժիններ վճարելու մասին որոշում չկայացնելու ժամկետը սահմանափակել երկու տարով: Դրանից հետո ընկերության զարգացմամբ շահագրգռված բաժնետերերը կարող են ստանալ իրենց շահութաբաժինները, թողարկել լրացուցիչ բաժնետոմսեր և կրկին իրենց ներդրումը կատարել ընկերության զարգացման գործում: Կարծում ենք, որ այս եղանակով հնարավոր կլինի հավասար-

⁸ Տե՛ս **Мозолин В. П.** Корпорации, монополии и право в США. М., 1966, էջ 349:

րակշռել ինչպես կորպորացիայի, այնպես էլ փոքրամասնություն կազմող խոշոր բաժնետերերի շահերը:

Բաժնետիրական ընկերությունն իրավունք ունի որոշում ընդունելու (հայտարարելու) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 49, կետ 1, մաս 1): Իսկ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը կարող է շահույթի բաշխման մասին որոշում ընդունել բացառապես տարեկան մեկ անգամ («Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 24, կետ 1):

Ընկերությունը պարտավոր է վճարել բաժնետոմսերի յուրաքանչյուր տեսակի (դասի) համար հայտարարված շահութաբաժինները: Որպես կանոն՝ շահութաբաժինները վճարվում են դրամով, սակայն կանոնադրությամբ սահմանված դեպքերում դրանք կարող են վճարվել նաև այլ գույքով, այդ թվում՝ ընկերության բաժնետոմսերով: Եթե ընկերության կանոնադրությամբ նախատեսվում է շահութաբաժիններն այլ գույքով վճարելու հնարավորություն, ապա անհրաժեշտ է կանոնադրությամբ հստակ սահմանել բաժնետերերին շահութաբաժիններն այլ գույքով վճարելու դեպքերը և կարգը: Կարծում ենք, որ բաժնետիրոջը դրամի տեսքով շահութաբաժնի փոխարեն վճարվող այլ գույք ասելով պետք է հասկանալ շրջանառությունից չհանված և սահմանափակ շրջանառություն չունեցող ցանկացած գույք, իսկ այլ գույքով վճարումներ կատարելու իրավունքի տրամադրումը կարող է բազմաթիվ չարաշահումների տեղիք տալ: Օրինակ՝ ընկերության սեփականություն հանդիսացող գույքը այդ եղանակով կարող է դառնալ բաժնետիրոջ կամ բաժնետերերի սեփականություն, կամ գույքով շահութաբաժին վճարելու մասին որոշումը կայացնելիս կարող է որոշվել բաժնետերերի մի խմբին շահութաբաժինը վճարել գույքի մի տեսակով, մյուս խմբին՝ մեկ այլ տեսակով. օրինակ՝ պատրաստի արտադրանքը հանձնել խոշոր բաժնետիրոջը, իսկ կիսաֆաբրիկատները՝ փոքրամասնություն կազմող բաժնետերերին:

Նման իրավիճակները բացառելու նպատակով առաջարկում ենք գույքով շահութաբաժին վճարելու հնարավորությունը բացառել, եթե կորպորացիայի մասնակիցներից որևէ մեկն առարկում է դրա դեմ:

Շահութաբաժինները վճարվում են ընկերության գուտ շահույթից կամ կուտակված շահույթից, իսկ որոշակի դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները կարող են վճարվել հատուկ այդ նպատակով ընկերության ստեղծած հիմնադրամների հաշվից:

Ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի՝ միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման, շահութա-

բաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է խորհուրդը, իսկ տարեկան շահութաբաժինների վճարման, դրանց չափի և վճարման ձևի մասին որոշումն ընդունում է բաժնետերերի ընդհանուր ժողովը՝ խորհրդի առաջարկությամբ: Միջանկյալ շահութաբաժնի չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 տոկոսը: Իսկ տարեկան շահութաբաժինների չափը չի կարող լինել խորհրդի առաջարկածից ավելի և պակաս՝ արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից: Եթե ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը ըստ բաժնետոմսերի առանձին տեսակների և դասերի, սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար, ապա այդ տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում: Իսկ եթե ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը ըստ բաժնետոմսերի առանձին տեսակների և դասերի, սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափերից ավելի, ապա այդ տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժինները վճարվում են սահմանված տարեկան շահութաբաժնի և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարների միջև եղած տարբերության չափով:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքը չի պատասխանում այն հարցին, թե ինչպես պետք է վարվել այն դեպքում, երբ տարեկան արդյունքներն ամփոփելիս պարզվում է, որ եռամսյակային շահութաբաժինները վճարելուց հետո ֆինանսական տարվա արդյունքներով ընկերությունը շահույթ չունի կամ աշխատել է վնասով: Գործող իրավակարգավորման պայմաններում շահութաբաժիններ ստացած բաժնետերերին որևէ պահանջ ներկայացնել հնարավոր չէ, բացառությամբ այն դեպքի, երբ կպարզվի, որ որոշումը կայացվել է տվյալ բաժնետիրոջ պարտադիր կատարման ենթակա ցուցումները իրականացնելու հետևանքով, և ընկերությունը հայտնվել է սնանկության եզրին: Մեր կարծիքով նման իրավիճակում ռոնահարվում են կորպորացիայի պարտատերերի, ինչպես նաև կորպորացիայի շահերը:

Վերը նշված իրավիճակների առաջացման հնարավորությունը բացառելու նպատակով առաջարկում ենք սահմանափակել միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշում կայացնելու խորհրդի իրավասությունը և բաժնետիրական ընկերությանը հնարավորություն ընձեռել շահութաբաժինների վճարման մասին որոշում կայացնել միայն ֆինանսական տարվա արդյունքներն ամփոփելուց հետո:

Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է կանոնադրությամբ կամ ժողովի՝ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ: Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը

սահմանվում է խորհրդի՝ միջանկյալ շահութաբաժինների վճարման մասին որոշմամբ, բայց ոչ ուշ, քան տվյալ որոշումն ընդունելու պահից 30 օր անց:

Շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար խորհուրդը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակ, որում պետք է ընդգրկվեն միջանկյալ շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ ընկերության այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են ընկերության բաժնետերերի ռեեստրում՝ խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ, իսկ տարեկան շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ ընկերության այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են ընկերության բաժնետերերի ռեեստրում՝ ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 49, կետ 4):

Գործող օրենսդրությամբ միջանկյալ շահութաբաժինների վճարման մասին որոշումը կայացնելուց 10 օր առաջ շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող անձանց ցուցակ կազմելու իրավասության տրամադրումը խորհրդին, մեր կարծիքով, կարող է տարատեսակ չարաշահումների առիթ հանդիսանալ: Օրինակ՝ խորհրդի նախագահը կամ նրա ընկերը, ազգականը միջանկյալ շահութաբաժին վճարելու մասին որոշումը կայացնելուց 7 օր առաջ վաճառել է իր բաժնետոմսերը կամ դրանց մի մասը և առաջարկում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող անձանց ցուցակը կազմել որոշումն ընդունելուց 9 օր առաջ, որի հետևանքով շահութաբաժին ստանում է ոչ թե բաժնետոմսի նոր սեփականատերը, այլ նախկին սեփականատերը, ինչը, մեր կարծիքով, անընդունելի է:

Օրենքը հստակ սահմանում է այն հիմքերը, որոնց առկայության դեպքում շահութաբաժիններ չեն կարող վճարվել: Մասնավորապես, ընկերությունն իրավունք չունի որոշում ընդունելու (հայտարարելու) տեղաբաշխված բաժնետոմսերով շահութաբաժինների վճարման մասին, եթե լրիվ չի վճարվել կանոնադրական կապիտալը, ընկերությունը հետ չի գնել բոլոր բաժնետոմսերը, որոնք բաժնետիրոջ պահանջով ենթակա են հետգնման ընկերության կողմից, շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ ընկերության վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սնանկության) հատկանիշներին, կամ դրանք ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով, ընկերության գուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից կամ կպակասի շահութաբաժինների վճարման հետևանքով:

Ընկերությունն իրավունք չունի որոշում ընդունելու (հայտարար-

րելու) տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի և այն արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարման մասին, որոնց համար սահմանված չէ շահութաբաժնի չափը, եթե որոշում չի ընդունվել արտոնյալ բաժնետոմսերի բոլոր այն դասերի դիմաց շահութաբաժիններն ամբողջությամբ վճարելու մասին, որոնց համար շահութաբաժնի չափը սահմանված է կանոնադրությամբ:

Ընկերությունն իրավունք չունի որոշում ընդունելու (հայտարարելու) շահութաբաժինների վճարման մասին նաև այն դեպքում, եթե տեղաբաշխված այն արտոնյալ բաժնետոմսերի դիմաց, որոնց համար շահութաբաժնի չափը սահմանված է կանոնադրությամբ, շահութաբաժիններն ամբողջությամբ վճարելու որոշում չի ընդունվել արտոնյալ բաժնետոմսերի բոլոր այն դասերի դիմաց, որոնք վերոհիշյալ արտոնյալ բաժնետոմսերի նկատմամբ շահութաբաժիններ ստանալու առաջնահերթության իրավունք են տալիս:

Ինչպես արդեն նշեցինք, լուծարման դեպքում ընկերության գույքից որոշակի բաժին ստանալու իրավունքը ևս բաժնետիրոջ կարևորագույն բացարձակ գույքային իրավունքներից է⁹, որի իրականացման հարցում էական նշանակություն ունի անձի արտոնյալ կամ հասարակ բաժնետոմսի սեփականատեր լինելու հանգամանքը:

Պարտատերերի հանդեպ լուծարվող ընկերության պարտավորությունները բավարարելուց հետո մնացած գույքը լուծարային հանձնաժողովը, ժողովի կողմից հաստատված պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքի բաշխման կարգին¹⁰ համապատասխան, բաժնետերերի միջև բաշխում է հետևյալ հաջորդականությամբ.

- առաջին հերթին կատարվում են վճարումներն այն բաժնետոմսերի դիմաց, որոնք պետք է հետ գնվեն բաժնետերերի պահանջով¹¹,
- երկրորդ՝ վճարվում են արտոնյալ բաժնետոմսերի համար հաշվարկված, բայց չվճարված շահութաբաժինները,
- երրորդ՝ կատարվում են արտոնյալ բաժնետոմսերի լուծարային արժեքի վճարումները,

⁹ Լուծարման ընթացքում ի հայտ եկող հիմնախնդիրների մասին մանրամասն տե՛ս **Վ. Դ. Ավետիսյան**, Կորպորատիվ հարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով), Եր., 2013, էջ 139-156: Սույն հոդվածի շրջանակներում հիմնականում անդրադարձ է կատարվում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքը բաժնետերերի միջև բաշխելու հաջորդականությանը վերաբերող հիմնախնդիրներին:

¹⁰ Բաշխման կարգի հետ կապված խնդիրների մասին առավել մանրամասն տե՛ս **Վ. Դ. Ավետիսյան**, նշվ. աշխ., էջ 139-156:

¹¹ Նման իրավակարգավորումը հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 114 հոդվածի 1-ին կետին և հասարակ բաժնետոմսի սեփականատիրոջը փաստացի հնարավորություն է տալիս արտոնյալ բաժնետոմսի սեփականատիրոջ հանդեպ նախապատվության իրավունքով բավարարում ստանալ ընկերության գույքի արժեքից:

- չորրորդ՝ կատարվում է լուծարվող ընկերության մնացած գույքի բաշխումը հասարակ (սովորական) և բոլոր տեսակ արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի միջև («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 29, կետ 1):

Գույքի բաշխումը իրականացվում է նախորդ հերթի բաշխումը լիովին ավարտելուց հետո: Կանոնադրությամբ սահմանված արտոնյալ բաժնետոմսերի առանձին դասերի լուծարային արժեքի վճարումներն իրականացվում են կանոնադրությամբ սահմանված հերթականությամբ և յուրաքանչյուր հերթի արտոնյալ բաժնետոմսերի լուծարային արժեքը լիովին վճարելուց հետո:

Եթե ընկերության տրամադրության տակ գտնվող գույքը չի բավարարում արտոնյալ բաժնետոմսերի համար հաշվարկված, բայց չվճարված շահութաբաժինները բոլոր բաժնետերերին վճարելու համար, ապա գույքը բաշխվում է բաժնետերերի միջև՝ նրանց պատկանող նման տեսակի բաժնետոմսերի քանակին համամասնորեն: Իսկ եթե ընկերության տրամադրության տակ գտնվող գույքը չի բավարարում կանոնադրությամբ սահմանված արտոնյալ բաժնետոմսերի լուծարային արժեքը բոլոր բաժնետերերին վճարելու համար, ապա գույքը բաշխվում է բաժնետերերի միջև՝ նրանց պատկանող նման տեսակի բաժնետոմսերի քանակին համամասնորեն:

Հարկ ենք համարում նշել, որ արտոնյալ բաժնետոմսերի շրջանառության դեպքերը մեր հանրապետությունում սակավաթիվ են¹², իսկ նման ընկերությունների լուծարման դեպքեր չեն գրանցվել, ուստի դժվար է վեր հանել քննարկվող հիմնախնդիրները:

Ի դեպ՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը արտոնյալ բաժնետոմսերի մասին օգտագործում է բաժնետոմսի «լուծարային արժեք» հասկացությունը, որը ՀՀ նույն օրենքի 38 հոդվածի 2-րդ կետում մեկնաբանվում է որպես ընկերության լուծարման ժամանակ վճարվող արժեք, որի չափը սահմանվում է դրամական տեսքով կամ որպես տոկոսադրույք՝ այդ բաժնետոմսի անվանական արժեքի նկատմամբ¹³: Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 114 հոդվածի 1-ին կետում ամրագրվում է արտոնյալ բաժնետոմսերի սեփականատիրոջ նախապատվության իրավունքը մյուս բաժնետերերի նկատմամբ նախապատվության իրավունքով¹⁴ ստանալու բաժնետիրական ընկերության լուծարու-

¹² Սույն աշխատանքը կատարելիս մեզ հաջողվել է ուսումնասիրել ՀՀ-ում որպես փաստացի շրջանառության մեջ գտնվող արտոնյալ բաժնետոմսեր թողարկած, ցավոք, միակ կազմակերպության՝ «Ձարգացման հայկական բանկ» ԲԲԸ-ի փորձը:

¹³ Արտոնյալ բաժնետոմսի դիմաց վճարվող լուծարային արժեքը համարվում է սահմանված նաև այն դեպքում, եթե կանոնադրությամբ նախատեսված է դրա որոշման կարգը:

¹⁴ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 29 հոդվածի 1-ին կետի

մից հետո մնացած գույքի մասը:

Նման իրավակարգավորման պայմաններում հարց է ծագում. արտոնյալ բաժնետոմսի լուծարային արժեքն արդյոք նույնական է լուծարման ժամանակ մնացած գույքից մաս ստանալու իրավունքի հետ, թե՞ ոչ: Օրինակ՝ «Ջարգացման հայկական բանկ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 6 հոդվածի 7-րդ կետի գ) ենթակետում որպես նշված նորմերի գործնական կիրառության արդյունք առկա է հետևյալ ձևակերպումը. արտոնյալ բաժնետոմսի սեփականատերն իրավունք ունի բանկի լուծարման դեպքում ստանալ բանկի գույքի իր հասանելիք մասը¹⁵, ընդ որում՝ այս պարագայում արտոնյալ բաժնետոմսի լուծարային արժեքը չպետք է պակաս լինի անվանական արժեքի 15 տոկոսից¹⁶: Այսինքն՝ կարելի է ենթադրել, որ արտոնյալ բաժնետոմսի սեփականատերը կարող է ստանալ նաև իրեն հասանելիք գույքի մասը, և՛ բաժնետոմսի լուծարային արժեքը: Սակայն նման դեպքում հարց է առաջանում, թե որն է բաժնետոմսի լուծարային արժեքի առավելագույն չափը, և որ դեպքում այն պետք է վճարվի: Կամ՝ տեսականորեն չի բացառվում այն իրավիճակը, երբ արտոնյալ բաժնետոմսեր թողարկելիս որպես լուծարային արժեքի չափ սահմանվի բաժնետոմսի անվանական արժեքի հարյուրապատիկը գերազանցող գումար: Այդ դեպքում 1000 դրամ վճարած բաժնետերն ընկերության լուծարման դեպքում կարող է ստանալ 100000 դրամ լուծարային արժեքի փոխհատուցում, դրանից հետո էլ մասնակցել մնացած գույքի բաշխմանը: Նման վիճակը նախ և առաջ անտրամաբանական է, երկրորդ՝ նման անկատար օրենսդրությունը խոշոր բաժնետերերի համար ստեղծում է իրավունքի չարաշահման, ինչպես նաև փոքրամասնություն կազմող բաժնետերերի իրավունքների ոտնահարման լայն հնարավորություն: Մենք համաձայն ենք գրականության մեջ արտահայտված այն տեսակետին, որ բոլոր տեսակի արտոնյալ բաժնետոմսերի լուծարային արժեքը պետք է ամրագրվի ընկերության կանոնադրությունում, որպեսզի կանխվի մեկ հասարակ բաժնետոմս մեկ ձայն սկզբունքի վերացումը¹⁷:

և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 114 հոդվածի 1-ին կետի համեմատությունից ակնհայտ է դառնում նշված նորմերի միջև առկա հակասությունը: Մասնավորապես, օրենսգրքով սահմանված հասարակ բաժնետոմսերի սեփականատերերի հանդեպ արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի նախապատվության իրավունքը օրենքում վերացվել է, և սահմանվել է լուծարվող ընկերության մնացած գույքը հասարակ (սովորական) և բոլոր տեսակների արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի միջև բաշխելու հնարավորությունը:

¹⁵ Ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքը, այնպես էլ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը հստակ չեն տալիս այն չափորոշիչները, որոնցով կարող ենք որոշել բաժնետոմսի սեփականատիրոջ հասանելիք գույքի մասը: Առաջարկում ենք հստակ ամրագրել, որ բաժնետոմսի սեփականատիրոջը հասանելիք գույքի մասը որոշվում է կանոնադրական կապիտալում նրա ունեցած մասնակցության չափով:

¹⁶ Տե՛ս http://armdb.com/images/Documents/Kanonadrutium_2008.pdf

¹⁷ Տե՛ս **Bernard Black, Reinier Kraakman, Anna Tarassova**, A Guide to the Russian Law on Joint Stock Companies, Kluwer Law International, 1998, Cambridge, Massachusetts, USA and the Netherlands, էջ 221:

Բացի դրանից, օրենքում պետք է հստակ ամրագրվի այն մոտեցումը, ըստ որի՝ արտոնյալ բաժնետոմսի «լուծարային արժեք» հասկացությունը ներառում է լուծարման դեպքում մնացած գույքից մաս ստանալու արտոնյալ բաժնետոմսի սեփականատիրոջ իրավունքը, և լուծարային արժեքի չափը չի կարող գերազանցել պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքի արժեքի և կանոնադրական կապիտալում նրա ունեցած մասնակցության չափի տոկոսային հարաբերակցությունը:

Հաշվի առնելով ասվածը՝ առաջարկում ենք «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 29 հոդվածի 1-ին կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Պարտատերերի հանդեպ լուծարվող ընկերության պարտավորությունները բավարարելուց հետո մնացած գույքը լուծարային հանձնաժողովը բաշխում է բաժնետերերի միջև կանոնադրական կապիտալում նրանց ունեցած մասնակցությանը համաչափ և պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքի բաշխման կարգին համապատասխան՝ հետևյալ հաջորդականությամբ.

– առաջին հերթին վճարվում են արտոնյալ բաժնետոմսերի համար հաշվարկված, բայց չվճարված շահութաբաժինները, կատարվում են վճարումներն այն արտոնյալ բաժնետոմսերի դիմաց, որոնք պետք է հետ գնվեն սույն օրենքի 57 հոդվածին համապատասխան,

– երկրորդ հերթին կատարվում են արտոնյալ բաժնետոմսերի լուծարային արժեքի վճարումները,

– երրորդ հերթին կատարվում են վճարումներն այն հասարակ բաժնետոմսերի դիմաց, որոնք պետք է հետ գնվեն սույն օրենքի 57 հոդվածին համապատասխան,

– չորրորդ հերթին կատարվում է լուծարվող ընկերության մնացած գույքի բաշխումը հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերի միջև»:

Կարծում ենք, որ մեր կողմից առաջարկված փոփոխությունը արդարացի ու տրամաբանական լուծում կտա ներկայացված խնդիրներին:

Բանալի բառեր – *գույքային բացարձակ իրավունքներ, շահույթ, շահութաբաժին, շահութաբաժինների վճարման կարգ, հասարակ բաժնետոմս, արտոնյալ բաժնետոմս, լուծարում, գույքի բաշխման կարգ և հերթեր*

ВАГРАМ АВЕТИСЯН – *Права участника корпорации на участие в распределении прибыли и на получение части имущества при ликвидации общества.* – Член корпорации (акционер) вправе участвовать в распределении прибыли и получить часть имущества при ликвидации общества; это его ключевые имущественные права, позволяющие инвестору получить некоторую долю прибыли корпорации, а в случае её ликвидации – часть имущества, оставшегося после

удовлетворения требований кредиторов. В статье поднят ряд теоретических и практических вопросов, обусловленных этой коллизией, даны соответствующие предложения по их разрешению.

Ключевые слова: *абсолютные имущественные права, прибыль, порядок выплаты дивидендов, обыкновенные акции, привилегированные акции, ликвидация, распределение имущества, очереди*

VAHRAM AVETISYAN – *The Rights of the Participant of the Corporation to Participate in the Distribution of the Profit and to Get a Part of the Property at the Liquidation of the Company.*–The rights of the participant of the corporation to participate in the distribution of the profit and to get some part of the property at the liquidation of the company are the key property rights, through the implementation of which the person who has made contributions to the corporation can receive some of the profit obtained as a result of the activities of the corporation, as well as receive a part of property remaining after the satisfaction of the creditors' claim in case of the liquidation of the corporation.

In this article the author has identified a number of theoretical and practical issues related to this problem and presented proposals aimed to the solution of the aforementioned problems.

Key words: *absolute property rights, profit, dividends, dividend payment procedure, common shares, preferred shares, liquidation, asset allocation, queue*

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

1. **ԱՐԹՈՒՐ ՎԱՂԱՐՇՅԱՆ** – իրավաբ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ
АРТУР ВАГАРШЯН – доктор юридических наук, профессор, заведующий кафедрой теории и истории государства и права ЕГУ
ARTHUR VAGHARSHYAN – Sc. D. in Legal Sciences, Professor, Head of the Chair of Theory and History of State and Law, YSU
2. **ԳԱԳԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ** – իրավաբ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան
ГАГИК КАЗИНЯН – доктор юридических наук, профессор, академик НАН РА, декан юридического факультета ЕГУ
GAGIK GHAZINYAN – Sc. D. in Legal Sciences, Professor, Academician of the NAS RA, Dean of the Faculty of Law, YSU
3. **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ** – իրավաբ. գիտ. թեկնածու, ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի խորհրդական
АРМЕН ОГАНЕСЯН – кандидат юридических наук, советник председателя Апелляционного суда РА
ARMEN HOVHANNISYAN – PhD, Adviser to the Chairman of the RA Court of Cassation
4. **ՎԱՀԵ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ** – իրավաբ. գիտ. թեկնածու, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ
ВАГЕ ЕНГИВАРЯН – кандидат юридических наук, доцент кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ
VAHE ENGIBARYAN – PhD, Associate Professor of the Chair of Criminal Procedure and Criminalistics, YSU
5. **ՍԵՐԳԵՅ ԱՐԱԿԵԼՅԱՆ** – իրավաբ. գիտ. դոկտոր, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ, ՀՀ հատուկ քննչական ծառայության քննչական աշխատանքների կազմակերպման կատարելագործման և քննության մեթոդիկայի մշակման բաժնի պետ
СЕРГЕЙ АРАКЕЛЯН – доктор юридических наук, доцент кафедры уголовного права ЕГУ, начальник отдела совершенствования организации следственных работ и разработки методики расследования Специальной следственной службы РА
SERGEY ARAKELYAN – Sc. D. in Legal Sciences, Associate Professor at the Chair of Criminal Law, YSU, Chief of the Investigation Activities Advanced Organization and Investigation Methods Elaboration Department of the RA Special Investigation Service
Էլ. փոստ՝ sarakelyan@ysu.am
6. **ՏԻԳՐԱՆ ՄԻՍՈՆՅԱՆ** – իրավաբ. գիտ. թեկնածու, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ
ТИГРАН СИМОНЯН – кандидат юридических наук, доцент кафедры уголовного право ЕГУ
TIGRAN SIMONYAN – PhD, Associate Professor, of the Chair of Criminal Law, YSU

- 7. ՏԻԳՐԱՆ ԽԱՉԻԿՅԱՆ** – ՀՀ հատուկ քննչական ծառայության քննչական աշխատանքների կազմակերպման կատարելագործման և քննության մեթոդիկայի մշակման բաժնի գլխավոր մասնագետ, ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ
ТИГРАН ХАЧИКЯН – главный специалист отдела совершенствования организации следственных работ и разработки методики расследования Специальной следственной службы РА, аспирант кафедры гражданского процесса ЕГУ.
TIGRAN KHACHIKYAN – Chief Specialist at the Investigation Activities Advanced Organization and Investigation Methods Elaboration Department of the RA Special Investigation Service, Post-Graduate Student at the Department of Civil Procedure, YSU
 Էլ. փոստ՝ khachikyanfirst@mail.ru
- 8. ՄԻՍԱԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ** – իրավաբ. գիտ. թեկնածու, ոստիկանության կապիտան, ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի պետ
МИСАК МАРКОСЯН – кандидат юридических наук, капитан полиции, начальник кафедры уголовного права и криминологии Академии образовательного комплекса Полиции РА
MISAK MARKOSYAN – PhD, Police Captain, Head of the Chair of Criminal Law and Criminology, Academy of the Educational Complex of the RA Police
- 9. ԱՐՄԻՆԵ ՄԵԼԻԿՍԵԹՅԱՆ** – իրավաբ. գիտ. թեկնածու, ոստիկանության մայոր, ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի ավագ դասախոս
АРМИНЕ МЕЛИКСЕТЯН – кандидат юридических наук, майор полиции, старший преподаватель кафедры уголовного права и криминологии Академии образовательного комплекса Полиции РА,
ARMINE MELIKSETYAN – PhD, Police Major, Senior Lecturer at the Chair of Criminal law and Criminology, Academy of the Educational Complex of the RA Police
- 10. ՎԱՀՐԱՄ ԱՎԵՏԻՍՅԱՆ** – իրավաբ. գիտ. դոկտոր, ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ
ВАГРАМ АВЕТИСЯН – доктор юридических наук, заведующий кафедрой гражданского права ЕГУ
VAHRAM AVETISYAN – Sc. D. in Legal Sciences, Head of the Chair of Civil Law, YSU

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ТЕОРИЯ И ИСТОРИЯ ГОСУДАРСТВА И ПРАВА THEORY AND HISTORY OF STATE AND LAW

- Արթուր Վաղարշյան* – Սոցիոնորմատիվ կարգավորման համակարգի ձևավորման և զարգացման օրինաչափությունները Հին Հայաստանում (մ. թ. ա. III-II հազարամյակ)..... 3
- Артур Вагаршян* – Закономерности образования и развития системы соционормативного регулирования в Древней Армении (III–II тыс. до н. э.)
- Arthur Vagharshyan* – The Formation and Development Regularities of the Socionormative Regulatory System in Ancient Armenia (III-II millennium BC)

ՔՐԵԱՎԱՆ ԴՍԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱ УГОЛОВНЫЙ ПРОЦЕСС И КРИМИНАЛИСТИКА CRIMINAL PROCEDURE AND CRIMINALISTICS

- Փազիկ Ղազիկյան, Արմեն Հովհաննիսյան* – Նյութական կամ դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտման հիմքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելը և դրա իրավական հետևանքները 13
- Гагик Казинян, Армен Оганесян* – Привлечение судьи к дисциплинарной ответственности за очевидное и грубое нарушение норм материального или процессуального закона и его правовые последствия
- Gagik Ghazinyan, Armen Hovhannisyanyan* – The Subjection of a Judge to Disciplinary Liability on the Ground of Obvious and Grave Violation of Substantive or Procedural Law and Its Legal Consequences
- Վահե Ենգիբարյան* – Չանգվածային անկարգությունների քննության կրիմինալիստիկական հայեցակարգի օբյեկտը և առարկան (ռուս.)..... 26
- Ваге Енгибарян* – Объект и предмет криминалистической концепции расследования массовых беспорядков
- Vahe Yengibaryan* – The Object and the Subject of the Forensic Concept of Mass Disorders Investigation (rus.)

ՔՐԵԱՎԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ УГОЛОВНОЕ ПРАВО CRIMINAL LAW

- Սերգեյ Առաքելյան, Տիգրան Խաչիկյան* – ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված հանցակազմի կատարելագորման հիմնական ուղղությունները..... 35
- Сергей Аракелян, Тигран Хачикян* – Основные направления совершенствования состава преступления, предусмотренного ст. 338 Уголовного кодекса Республики Армения
- Sergey Arakelyan, Tigran Khachikyan* – The Main Directions of the Improvement of the Corpus Delicti Provided by the Art. 338 of the Republic of Armenia Criminal Code

Տիգրան Միմոնյան – Երիտասարդների ռեցիդիվային հանցավորության միտումները և կառուցվածքը Հայաստանի Հանրապետությունում (ռուս.) **46**
Тигран Симомян – Тенденции и структура молодежной рецидивной преступности в Республике Армения
Tigran Simonyan – Structure and Trends of Youth Recidivism in the Republic of Armenia (rus.)

Միսակ Մարկոսյան – Մեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողությունների հարկադրելու որակման որոշ հարցեր **52**
Мисак Маркосян – Некоторые вопросы квалификации принуждения к половому сношению или действиям сексуального характера
Misak Markosyan – Some Problems on Qualification of Coercion to Sexual Intercourse or Sexual Actions

Արմինե Մելիքսեթյան – Վտանգի մեջ թողնելու քրեաիրավական բնութագիրը և որակման առանձնահատկությունները **62**
Армине Меликсетян – Уголовно-правовая характеристика и особенности квалификации оставления в опасности
Armine Meliksetyan – Criminal-legal Characteristics and Qualification Peculiarities of Abandonment in Danger

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ
ГРАЖДАНСКОЕ ПРАВО
CIVIL LAW

Վահրամ Ավետիսյան – Շահույթի բաշխմանը մասնակցության և կորպորացիայի լուծարման դեպքում ընկերության գույքից որոշակի բաժին ստանալու կորպորացիայի մասնակցի իրավունքները **70**
Ваграм Аветисян – Права участника корпорации на участие в распределении прибыли и на получение части имущества при ликвидации общества
Vahram Avetisyan – The Rights of the Participant of the Corporation to Participate in the Distribution of the Profit and to Get a Part of the Property at the Liquidation of the Company

Տեղեկություններ հեղինակների մասին **82**
 Сведения об авторах
 Information about the Authors

Հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից:
Ժամանցորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:
Журнал выходит три раза в год. Издается с 2010 года. Правонаследник издававшегося в
1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета".
The Bulletin is published thrice a year. It has been published since 2010. It is the successor of
"Bulletin of Yerevani University" published in 1967-2009.

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1, 106
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1, 106
Address: 1, 106, Alek Manoukian str., Yerevan, Republic of Armenia

Հեռ. 060 710 218, 060 710 219

Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am
Վայք՝ ysu.am

Վերստուգող սրբագրիչ՝
Контрольный корректор
Proofreader

Գ. Գրիգորյան
Г. Григорян
G. Grigoryan

Համակարգչային ձևավորում՝
Компьютерная верстка
Computer designer

Մ. Աբգարյան
М. Абгарян
M. Abgaryan

Ստորագրված է տպագրության 10. 03. 2015:
Տպարանակ՝ 100: Չափսը՝ 70x108 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրական 5 մամուլ:

.....